



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆՐԻՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԲԵՏԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ 1900 ՅՈՒԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ ԹԻՒ 9-10-11

ԲԱՐԵՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Եւ այդ կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտեան խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եթէ հոգին չմարգմաներ, չլուսաւորեր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Փ. ՄԻՇԼԵ



ՄԵՐ ՆՈՐ ՀԱՍՏԷՆ

17 RUE LA BRUYÈRE, 17

ԲԱՅՈՒԱԾ Է

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Ն Ա Հ Ի Տ Ի Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ե Ր Ձ Ա Ն Ի Ն Հ Ա Ս Ա Ր

—**—

Մեր կալիքն անկախ պատճառներով, **ԱՆԱՀԻՏԻ** հրատարակուելը շատ անկասկած եղաւ. այս երկրորդ շրջանին մեջ: Վերջին քիչը (Հոկտեմբեր) պիտի շոյս տեսնե դեկտեմբերի մեջ: Անցեալ տարի **ԱՆԱՀԻՏԻ** տուաւ իր սուսագումարն աւելի եշտ: Այս տարի, դժբաղդաբար, պահիս սուս) պիտի ըլլայ: Այդ պահիսը պիտի յրացնենք երրորդ շրջանին քիւրեակն մեկ ֆանիին կցելով ձրի յարեղումներ: **ԱՆԱՀԻՏԻ** երրորդ Տարեշրջանը պիտի սկսի 1901ի յունուար ամսէն, եւ խրտիսանցիւր ամիս քիւ մը պիտի հրատարակուի կանոնաւորապէս:

Մեր այն բաժանորդները որ երկրորդ տարեշրջանի բաժնեգիրը դեռ չեն վճարած, կը յուսանք որ այլ եւս չեն ուշացներ այդ վճարումը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

—o—

Գրիգոր Չանչեան, Արշակ Չօպանեան: — Իրուսերու կարծիքը Չանչեանի մասին: — Իործի մարդիկ, վէպ, Երուանդ Օտեան: — Վարդ եւ Առիսակ, Չաքարիա Մարգար Խօճենց: Հայկական եկեղեցի մը ի Բարիզ, Ա. Տիւրբիւի եւ Ա. Չ. : — Ազգիկ մը, Վահրամ Սվաճեան: — Ապրիլին քրոնիկ: — Միսիթաբի երկուհարիւրամեայ յոբելանը, Կ. Գեւորդ Մ. Ալիշան եւ Չ. : Գրքեր եւ թերթեր, Ա. Չ. : — Հայ որբերուն համար: — Հայ ցեղին դերը պատմութեան մէջ, Ա. Չօպանեան: — Խարոյկը, Վահան Տիրանեան: — Սուլթանին քսանուհին դամեայ դահակայութեան յոբելանին առթիւ: — Իմ ուղին, Ա. Իսահակեան: — Պատգամաւորի մը յուշատետրին, Ստեփան Փափաղեան: — Հայկական խնդիրը Խաղաղութեան համաժողովին մէջ, Ա. Չ. : Հայկական խնդիրը Խաղաղութեան համաժողովին փակման հացկերոյթին մէջ: — Հայկական խնդիրը Մարդկութեան համաժողովին մէջ: — Հայկական խնդիրը ընկերվարականնուրու միջազգային համաժողովին մէջ: — Արդուեան եւ հայ մամուլը:

ՆՈՐ ՀԲԵՏՍԲԱՊՈՒԹԻՆ

LES MIMES D'HÉRONIDAS

TRADUCTION LITTÉRAIRE

Par PIERRE QUILLARD

LIBRAIRIE DU MERCURE DE FRANCE

45, Rue de l'Echaudé St. Germain, PARIS

ԱՆԱՏԻՏ

ՀԱՆՏԵՍ ԱՄՍԵԱՅ

Ա.ՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՅՈՒՂԻՍ, ՕԳՈՍՏՈՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

ԹԻԻ 9, 10, 11

ԳՐԻԳՈՐ ԶԱՆՇԵԱՆ

— 0 —

Այն մէկ քանի խոշոր, անփոխարինելի կորուսաներուն վրայ զոր մեր ժողովուրդը կը ընց այս վերջին երկու տարուան մէջ, Գրիգոր Զանչեանին մահուան դուժն ահա կուգայ բարդուիլ: Եւ այս կորուստը անով մանաւանդ կսկծալի է որ Զանչեան, Նուպար-Փաշային կամ Այվազովսքիին պէս իր գործը ամբողջացնելէ եւ իր ուժերը լիովին սպառելէ յետոյ չէ որ կ'անհետանայ, այլ՝ ինչպէս ինքզ սիրուն Տիգրան Երկաթը՝ մենէ կը փլուի իր կեանքին այնպիսի մէկ շրջանին երբ իր կորովին ու օտազանդին ամբողջ լրութեանը մէջն էր եւ երկար ատեն դեռ կրնար իր մտքին ու իր հոգիին զեղեցկութիւնը մեզի բաշխել:

Պէտք չունիմ ծանօթացնելու Գրիգոր Զանչեանը «Անահիտ»ի ընթերցողներուն. այս թերթին սրբնակներուն մէջ մէկէ աւելի անգամներ Զանչեանի գրական ու աղբարակական դործունէութեան մասին տեղեկութիւններ տրուած են: Անշուշտ պիտի փափաքէի, այդպիսի դէմքի մը անհետացումին հանդէպ, անոր մտաւորական նշանակութեան ամբողջական ու մանրակրկիտ վերլուծում մը ներկայացնել. բայց ուստեքնի՜ անգիտակցութիւնս դժբաղդարար ինծի անկարելի կը դարձնէ այդ աշխատութեան կատարումը: Պիտի շատանա՜մ բանաձեւելով այն պատճառները որ զիս մղած են

իմ հիացմանս մէջ ամենաբարձր տեղերէն մէկը տալու Զանչեանին եւ որոնք հիմա անոր մահը ինծի համար ընտանեկան սուգի մը պէս դասն կը կացուցանեն:

Զանչեանի անունը առաջին անգամ երեք տարի առաջ իմացայ՝ բարիգեան սալնի մը մէջ՝ Ռուսէ մը: Այդ միջոցին դեռ Զանչեան թուրքիոյ Հայոց ի նպաստ իր «Եղբայրական օգնութիւն» գիրքը չէր հրատարակած, եւ արեւմտեան Հայոց մէջ իր անունը դրեթէ լրորովին անծանօթ էր: Հայ ցեղին ուսական քաղաքակրթութեան փոխ տուած կարեւոր ուժերուն վրայ խօսելով, այդ Ռուսը ամենամեծ յարգանքով յիշատակեց Զանչեանի անունը. ըսաւ թէ ուսական մամուլին ամենէն ազատախոհ, ամենէն պերճախօս ու կորովի հրապարակագիրներէն մէկն էր ան, եւ թէ Ալեքսանդր Բ. ի հաստատած բարենորոգմանց մասին անոր հրատարակած ընդարձակ ուսումնասիրութիւնը վերջին ատեններս Ռուսիոյ մէջ երեւցած ամենէն մաղիստրական գործերէն մէկն էր:

Զանչեան՝ պատմաբանը, երգիչը եւ քարոզիչը ցանկացած էր ըլլալ ուսական պատմութեան ամենէն զեղեցիկ շրջանին, այն շրջանին ուր խումբ մը ազատասէր ու վեհոգի սուս մտածողներ, օրէնսգէտներ եւ պիւանագէտներ — որոնց մէջ էր նաեւ մեր մեծ Լորիս Մելիքովը, — փորձեցին, խրախուսուած ուսման թիկ ու աղնիւ հողով Զարի մը յօժարամտութեանէն, իրենց երկրին հին, բունապե-

տական կազմուածքը արեւմտեան Նւրոպայի յառաջգրիմական սկզբունքներուն համեմատ վերանորոգել: Այս հոյակապ գործը, զոր Ջանչեան իր կեանքին նպատակակէտ էր ընտրած, կատարած էր հաղուազէս լրջութեամբ, բանիմացութեամբ ու խանդավառութեամբ, որոնք, ինչպէս ոուս խօսակիցս կը հաւաստէր, Ռուսիոյ արդի մտաւորական դասակարգին մէջ շատ ինքնուրոյն եւ շատ բարձր տեղ մը կուտային իրեն: Հաճոյքը զոր զգացի մեծ հայազգիներու շարքին մէջ նոր անունի մը յաւելումը տեսնելով, կը բազմապատկուէր անով որ այս Հայն ալ, — ընազգորէն հպարտակելով ցեղին այն խորունկ ձգտումին որ ազատութեան գործիք մը, վերանորոգման ուժ մը կացուցած է միշտ զայն մարդիային պատմութեան մէջ, — ստանձնեալ էր իր երկրին ու իր շրջանակին մէջ ազատութեան ու արդարութեան սկզբունքներու ջատագովի դերը, ինչպէս Հայ Պաւլիկեանները Բիւզանդեան կայսրութեան մէջ, ինչպէս Նուպար Եգիպտոսի, Գրիգոր Օտեան Տաճկաստանի, Մելքոն խան Պարսկաստանի եւ Լորիս Մելիքովի նոյն Ռուսաստանին մէջ:

Բայց այդ հաճոյքին հետ զոր զգացի, նեղութեան ու տխրութեան սպաւորութիւն մը չկրցայ արգիլել այդ իրիկունը՝ մտածելով որ մեր ցեղէն բղիճած այդքան կարեւոր ուժ մը լսկ օտար շրջանակի մէջ զարգացի էր, իր ցեղակիցներուն մեծամասնութեանը անծանօթ, թերեւս ալ անտարբեր իր ցեղին: Տարի մը չափ յետոյ, ընդունեցայ մէկ քանի օրինակներ ուսերէն մեծահատոր գրքի մը, եւ նամակ մը հայերէն լեզուով գիրքը «Եղբայրական օգնութիւն»ն էր. եւ նամակը, որ Ջանչեանէն էր, երկու բառով կը բացատրէր ինծի նպատակն այդ հրատարակութեան, եւ կը խնդրէր ինձմէ որ մէկ քանի օրինակներ ֆրանսացի հայասէրներու յանձնեմ: Ուրախութիւնս անսահման եղաւ. Ջանչեան հեռու էր ուրնմն «օտարացած» ըլլալէ. օտար ու բարձրագոյն քաղաքակրթութեան մը մէջ իր իր ստացած նըբացումն ու զարգացումը ան ահա ի նպատակ կը բերէր իր ազգին դատին: Հայ ցեղին մասւորական կարողութիւններուն ապացուցում մը հանդիսանալէ յետոյ իր ոուսական գործունէութեան մէջ, ան հիմա «հայ

գործիչ»ի դերն ալ կը ստանձնէր, եւ զայն կը կատարէր այն ամբողջ հեղինակութեամբն ու ձեռնհասութեամբը զոր իր գիրքն ու հմտութիւնը իրեն կուտային: Ռուս բարեկամներէ խնդրեցի որ այդ գրքին մանրամասն վերլուծութիւն մը պատրաստեն ինծի համար: Վերլուծութիւն տեսայ որ գործը իր տեսակին մէջ հըրաշակերտ մըն էր, յօրինուած այնպիսի գիտակցութեամբ մը՝ որմէ անդին կարելի չէ անցնել: Ռուսիոյ մեծ ու փոքր բոլոր գրագէտները, գիտնականները, քաղաքագէտները, խմբագիրները իրենց աշխատութիւնը նուիրած էին այդ գրքին. եւ ոչինչ այս պարագայէն աւելի կ'ապացուցանէ այն յարգանքը եւ համակրութիւնը զոր Ջանչեան կը վայելէր ոուսական մտաւորականութեան մէջ: Այդ ոուս աշխատակիցներէն շատերը զուտ գրական կամ մտաւորական արտադրութիւններ տուած էին այդ գրքին՝ անոր փայլը աւելցընելու եւ վաճառումը դիւրացնելու համար. բայց ոմանք ալ, մէկ քանի շատ կարեւոր քաղաքագէտ-գրագէտներ, ուղղակի իրենց կարծիքը կը յայտնէին հայկական խնդրոյն մասին, եւ այդ կարծիքը կը ձգտէր Ռուսիոյ դիւանագիտական միջամտութիւնը անհրաժեշտ ու պարտաւորիչ ցուցնելու ի նպատակով Ռուսիոյ դժբաղդ Հայութեան: Գրքին միացեալ մասը կը կազմուէր հայ արդի գրականութեան քանի մը էջերու թարգմանութիւններէ եւ Հայոց պատմութեան ու արուեստին ու Թրքահայոց արդի կացութեան մասին հայ գրագէտներու կողմէ խմբագրուած յօդուածներէ: Բազմաթիւ նկարներ, որոնց մէջ կը գտնուէին հայ որբերու խմբական լուսանկարներ, հայ անձնաւորութեանց կենդանագրեր եւ հայ արուեստի յիշատակներու վերարտադրութիւններ, կը զարդարէին այդ հատորը, որ կը բացուէր սրտաշարժ յառաջաբանով մը ուր Ջանչեան կը համարօտէր հայկական հարցը եւ կը նշանակէր Նւրոպային պարտքը, մասնաւորապէս Ռուսիոյ պարտականութիւնը, այդ նահատակուող քրիստոնեայ ժողովրդին հանդէս:

Մեր ընթերցողները գիտեն թէ ի՞նչ ահազին ազգեցութիւն ունեցաւ այդ գիրքը Ռուսիոյ մէջ: Անոր հրատարակութեան աւթիւ, ոուսա-

կան մամուլը բազմաթիւ յօդուածներ հրատարակեց Հայոց մասին, եւ համակրական արտայայտութիւնները, որոնք առաջ շատ սակաւաթիւ էին ուս լրագրութեան մէջ, բազմապատկեցան, ընդարձակ ու հզօր հօսանք մը կազմեցին ի նպաստ Հայոց. եւ զըջին վաճառուէն գոյացած հասոյթը, այդ առթիւ Ջանչեանի զրկուած նուիրատուութիւններու միացած, 60,000 բուպլին անցաւ, ու թոյլ տուաւ Ջանչեանին որ թրքական Հայաստանին մէջ տասներկու որբանոց հիմնէ՝ Պոլսոյ ուսական գեւպանին աջակցութեամբն ու հովանաւորութեամբը: Կրքին երրորդ պապագրութիւնը պատրաստելու վրայ էր Ջանչեան եւ որբանոցներուն թիւը բազմապատկելու ցանկութեամբը առաւել քան հրեք համակուած, երբ մահը եկաւ յանկարծ անոր ազնիւ ու բարերար ձեռքը կասեցուց:

Շատ հաւանական է որ Ջանչեան ինկաւ իր ճիգին մեծութեանը տակ ջախջախուած: Հոտ, կը հասնինք Ջանչեանի դէմքին ամենազեղեցիկ գծին, անոր բարոյական հազուադիւս վեհութեանը: Այդ ազուտոր տաղանդին մէջ՝ շատ բարձր ու շատ մաքուր սիրտ մը կար: Ջանչեանի մահով կը կորսնցնենք ոչ միայն հատընտիր միտք մը այլ աւելի թանկագին բան մը, նկարագիր մը, ձառող լը: Իր ամբողջ կեանքը խանդավառ անշահախնդրութեան, իրական այլասիրութեան, անկեղծ անձնութիւնութեան պատկեր մը կը ներկայացնէ: Այդ պարզուկ, ժուժկալ ու ինքնամիտի մարդը, իր կուզ ու անու մարմնոյն մէջ՝ բնութիւնէն անխրաւուած, իր բոլոր ուժերը սկիզբէն մինչեւ վերջը գործածած է ամենէն ազնիւ դատերուն համար, — կեղեքուածներու, զբկուածներու, տառապողներու դատերուն, եւ իր բոլոր աւելնը մսխած է պանծացնելու, պաշտպանելու, հանրացնելու այն ազատական ճիգերը որ իր երկրին մէջ կատարուած են: Եւ այս բոլորը կատարած է, զազափարական գոհացումներու միակ ծարաւէն մղուած, նիւթական փոխարինութիւններուն միշտ արհամարհոտ: «Բարեհորդուհներուն» մասին իր խոջոր աշխատութեան գրիթէ ամբողջ հասոյթը նուիրած էր ուս ուսանողութեան եւ եւ ուս սովեալ մուժիքներուն, ճշգրտաբան

օգնութեան» հրատարակութիւնը, որուն համար այնքան ժամանակ, տաղանդ ու աշխատութիւն վատնեց՝ ստանց սեւէ գրամական վարձատրութիւն ակնկալելու, Թուրքիոյ կարօտեալ Հայոց օգնութիւն մը հասցնելու միակ նպատակը ունէր: Եւ չենք կրնար այստեղ չնկատել որ այդ պարզ դրչի մարդը, այդ ազգատիկ խմբագիրը շատ աւելի բան ըրաւ, նոյն իսկ նիւթապէս, մեթշուառ որբերուն համար, ինչպէս եւ բովանդակ հայկական դատին համար, քան թէ մեր բոլոր հարուաները, որոնց մեծամասնութիւնը քանի մը ֆրանքի ողորմութիւն տալով կալծեցին իրենց պարագը կատարած ըլլալ հանդէպ իրենց ոգեւար ազգին: Ու այս անհուն գործը կատարող անձը համեստութիւնն իսկ էր: Իր յորելեանին օրը, դիտմամբ իր տուէնէն հեռացեր էր, որպէսզի զինքը շնորհաւորելու եկող անձերուն գովասանքներէն ազատ պահէ իր հպարտ ամօթխածութիւնը:

«Ճշգրտական օգնութիւն»ը հրատարակելէն ու որբախնամ գործին մէկ կարեւոր բաժնին հոգատարութիւնը ստանձնելէն ի վեր, իր ամբողջ կեանքը ատոր նուիրել էր. ուղղակի եւ անընդհատ յարաբերութեան մէջ էր որբերու երկրին հետ. օգնութիւն ազերսող անհամար ազաղակներ իր վրայ կը տեղային, օրէ օր աւելի բազմաթիւ ու աւելի անձկագին, այդ բոլոր անպատասպարու յուսահատ թշուառութիւնը կը տասապեցնէր զինքը. կը բազձար բիւրապատկուել՝ այդ ամբողջ ցաւը բուժելու, այդ բոլոր արցունքները չորցնել կարելու համար. այս հեւ ի հեւ ու գոհակ գործունէութիւնը մաշեցուցած ըլլալու է իր անողջութիւնը՝ կուրծքի հիւանդութեամբ մը արդէն վասնդուած, եւ վերջ ի վերջոյ զինքը զգեանած ըլլալու է՝ իր ծայրայեղ բարութեանը տակ խոր ոսկուած:

Ջանչեանի մահը ազգային սուգի մը հանդիսաւորութիւնը ունեցաւ ուս մտաւորականութեան համար. կը հրատարակենք ստորեւ մէկ քանի կտորներ այն դատականներէն ու յօդուածներէն զոր իր գաղաղին վրայ արտասաներ ու մամուլին մէջ հրատարակեր են իր ուս կզբայրակիցները, եւ որոնք բոլորն ալ գորովագին հիացման արտայայտութիւն-

ներ են : Բայց ինչ որ բոլոր այդ խանդավառ գնահատումներէն աւելի անգին է Ջանչեանի յիշատակին համար, եւ ինչ որ իր մեծ սիրտը վատահաբար ամէն բանէ աւելի պիտի յուզէր, այն է թէ իր դերեղմանին վրայ դրուած բոլոր դափնիները արցունքով թրջած են :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



ՌՈՒՍԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ ՁԱՆՇԵԱՆԻ ՄԱՍԻՆ

«Ռուսքայա Վետոմոսթի» թերթը, որուն մշտական աշխատակիցն էր Ջանչեան, հետեւեալը կը գրէր անոր մահուանը յաջորդ օրը :

«... Դեռ տարի մը չկայ որ տօնուեցաւ Ջանչեանի գրական-հասարակական գործունէութեան քսանուհինգամակը. ու այդ տօնը ցոյց տուաւ թէ ո՛րքան անոր անունը ժողովրդականացած է մեր ընթերցող հասարակութեան մէջ : Եւ այդ հուշակին կատարելագոյն արժանի էր ան : Հանդուցեալը թէ՛ իր գաղափարներով, թէ՛ իր անձնական յատկութիւններով, եւ թէ՛ գանոնք իր բազմարդիւն կիանքին մէջ ապացուցանելու եղանակովը մեր մէջ ճշմարիտ «հանրային գործիչ» հազուագիւտ տիպար մըն էր : «Հանրային գործիչ» բացարձակութիւնը մեր մէջ դեռ նոր է, եւ Ջանչեան այդ անունը կրողներուն մէջ լաւագոյններէն մէկն էր : Ըլլալով տարօրինակէս վառվռուն մարդ մը, որ օրուան հանրային աղէտքներուն անտարբեր չէր մնար, մարդ մը որ մինչեւ ուկորներուն ծուծը տողորուած էր այն գաղափարներով որոնց համար իր ամբողջ կեանքին մէջ, մինչեւ վերջին րոպէները, գործունէութեան բոլոր առարկէզներուն մէջ կը կուէր երիտասարդական պայծառ կրակով մը, Ջանչեան ամէն ահզ եւ ամէն բանի մէջ կը զեկավարուէր իր սիրած նշանաբանով, magis amica veritas (մեծագոյն բարեկամ՝ ճշմարտութիւն) : Մագմամբ ոռւս չըլլալով հանգերձ, ան ճշմարիտ ոռւս հարեւասէր էր սակայն, այս բառին լաւագոյն իմաստովը. ամէն ինչ որ թանկագին էր ոռւս հասարակութեան համար, այդ հասարակութեան բոլոր լաւագոյն ձգտումներն ու գաղափարները, ամէն ինչ որ զայն կ'ուրախացնէր եւ կը վշտացնէր, այդ բոլորը

հանդուցեալին համար միշտ կենսական, անձնական, սրտագին հարց եղած է : ... Միեւնոյն սրտագին զգայութեամբ արձագանք կուտար իր հայրենի երկրի՝ Կովկասի, ինչպէս եւ իր հայրենակից Հայերու կարիքներուն ու շահերուն : Իր անձնական աշխատանքովն ու եռանդովը, կարողացաւ շատ խոշոր գումարներ հաւաքել Թուրքիոյ վնասուած Հայերուն օգնելու համար : Զինքը անձամբ ճանչցողները, որոնք աչքով տեսած են թէ ի՛նչպէս ծանր բարոյական տանջանքներ կրեց ան՝ իր հայրենակիցներուն թշուառութիւններէն խորապէս ցնցուած, ակամայ կը հարցնեն թէ իր ատողջութիւնը այդ մտայլ ու ծանր շրջանին մէջ իր զգացածներէն ու կրածներէն չքայքայուեցա՞ւ : Մահը անոր վրայ հասաւ անսպասելի կերպով, թէպէտ հանդուցեալ Ջանչեան հիւանդի վիճակի մէջ էր՝ ամիս մը առաջ իրիմէն Մոսկուա դարձած ատենը : Այդ վերջին օրերը սաստկացան իր շատոնց ունեցած սրտի հիւանդութեան նշանները : Բայց մահուընէ երեք օր առաջ անկողին մտաւ, եւ չկրցաւ ելլել, որովհետեւ տկար կը զգար ինքզինքը եւ տարութիւն ունէր : Մահուան օրը, յուլիս 17ին (29), իր կատարեալ գիտակցութիւնը պահած էր, եւ մահուընէն ժամ մը առաջ «Ռուսքայա Վետոմոսթի» ի խմբագրապետին հետ իր մէկ յօդուածին վրայ կը խօսէր : Մահը աւելընթարթի մը մէջ վրայ հասաւ : Ջանչեան մեռաւ հանդարտ, առանց տանջանքի : »

Բրոֆեսոր Անուչին, աշխատակիցներէն մին «Ռուսքայա Վետոմոսթի» թերթին, հետեւեալ դամբանականն արտասանած է Ջանչեանի դաւազակին վրայ .

«Թանկագին ընկեր, բարեկամ եւ աշխատակից, քսան տարիէն աւելի դուն բաժնեցիր մեզի հետ «Ռուսքայա Վետոմոսթի» զեկավարութեան աշխատանքը : Արձագանք մալով հանդերձ ամէն բանի որ մարդկային է, դուն մասնաւորաբար կը հետեւէիր իրաւագիտական ու դատաստանական հարցերու, եւ կեանքիդ ամենազլխաւոր նպատակներէն մին ընտրած էիր բացատրել ոռւս հասարակութեան վաթսնական թուականներու մեծ բարենորոգմանց նշանակութիւնը եւ սպուած խօսքի միջոցով պաշտպանել անոնց հիմունքն ու սկզբունքները : Ռուսըլլալով՝ դատարարակութեամբ, զարգացմամբ, անձնութեամբ, գրական գործունէութեամբ, դուն միեւնոյն ատեն անձնուէր զաւակ էիր

քու հարազատ ազգիդ եւ անոր մեծ ծառայու-
թիւն մատուցիր իր թշուառութեանը միջո-
ցին, քու աշխատանքիդ եւ եռանդիդ շնորհիւ
հաւաքելով մեծ գումարներ հայ որբերը պա-
տրասպարելու համար: Լայն կրթութեան եւ
զգայուն սրտի տէր ըլլալով, դուն կարող էիր
հաւասարապէս գնահատել թէ՛ բնութեան ու
մանաւանդ քու հայրենիքդ եղող Գովկասի
գեղեցկութիւնները, եւ թէ՛ արեւմտեան քա-
ղաքակրթութեան լաւագոյն կողմերը: Գուն
Չերմապէս կը սիրէիր ոռոս գրողեցիները որ քեզ
համար թանկագին էին: քու սրտիդ մէջ ար-
ձագանք կը դանէին գեղարուեստի, գրականու-
թեան եւ հանրային կեանքի բոլոր ընթացիկ
երեւոյթները: Բայց մասնաւորապէս նուեւ
բուած էիր դուն՝ քու սիրելի լրագրիդ գոր-
ծին: Դեռ մահուընկէ ժամ մը առաջ, խմբա-
գիրներէն մէկուն հետ անոր մատին կը խօսէիր
եւ կարելի է ըսել թէ մեռար քու սիրելի
թերթդ մտածելով: Ջերմ, համոզուած հրապա-
րակազիր, դուն ապրեցար ու մեռար փիլի-
սոփայ, եւ բարի, քաղցր ժպիտը դեռ ազնիւ
զէմքիդ վրայ պահուած կը մնայ: Ընդունէ՛
մեր խորին շնորհակալութիւնը այն ամէն ծա-
ռայութեանց համար զոր դուն մատուցիր մեզի,
ամբողջ ոռոս հասարակութեան, ամբողջ ժողո-
կութեան: Թող հողը թեթեւ գայ վրագ: Յա-
ւիտեան պիտի յիշուիս դուն, թանկագին ըն-
կե՛ր եւ բարեկամ:»

Հետեւեալ դամբանականը արտասանած է Ս. Ա.
Մուրումցեղ, նախկին բրոֆեսոր եւ իրաւա-
բանական ընկերութեան նախագահ:

«Մնաս բարով, Գրիգոր Ավետովիչ, մնա՛ս
բարով, հին բարեկամ եւ աշխատակից: Դուն
մենէ տարածամ բաժնուեցար: Այժմ կանգնած
անգութ մահուան առջեւ, քու բարեկամներդ եւ
յարգողներդ իրաւունք ունին երախտագէտ
ըլլալ կեանքին, որ քեզ օտտեց այնպիսի ձիր-
քերով ինչպէս քիչերու կը պարգեւէ: Դուն
բողոք ունեցար քու պատանութեանդ տարի-
ներուն սրտանց հաւատալ օրինապահութեան,
արդարութեան եւ ճշմարտութեան խտէալնե-
րուն, եւ ամբողջապէս նուիրուել այդ խտէալ-
ներուն տարածմանը:»

«Բայց այդ բաղդը միեւնոյն ատեն կեանքի
մեծ սիրադործութիւն մըն էր, եւ դժուար սըխ-
րագործութիւն, որուն համար դուն իրաւունք
ունեցար կրկնակի շնորհակալութիւն ընդու-
նելու: Շատերը եւ շատ բանի համար պէտք է

որ «շնորհակալ ենք» ըսին քեզի: Ամէն բանէ
առաջ, շնորհակալութիւն քեզի, ի դիմաց
Մոսկուայի նախկին Իրաւարանական Ընկերու-
թեան անդամներուն, քու բազմամեայ գոր-
ծունէութեանդ համար իբրեւ անոր քարաու-
ղար, անոր հրատարակութեանց աշխատակից,
անոր զբաղումներուն մասնակից: Շնորհակա-
լութիւն քեզի քու մասնաղէտ ընկերներէդ,
փաստաբաններէն, որոնց դուն կը ձգաէիր
ցոյց տալ թէ փաստաբանը արդարութեան
մասնակից է եւ թէ փաստաբանութիւնը հասա-
րակական ծառայութիւն մըն է: Շնորհակա-
լութիւն պէտք է յայտնէ քեզի ոռոս հասարա-
կութեան նոր սերունդը այն եռանդին համար
որով դուն աշխատեցար ամրապնդել այդ սե-
րունդը այն երազներուն մէջ որոնք մեր նա-
խորդներն ու մեր ուսուցիչները կ'ողբերէին
ու մեր հասակակիցները կը զեկավարէին:
Վերջապէս ոռոս հասարակութիւնը շնորհակա-
լութիւն կը մատուցանէ քեզի այն բանին հա-
մար որ դուն անոր ծանօթացուցիր քու արիւ-
նակից եղբայրներդ, մեզի սորվեցուցիր զա-
նոնք սիրելու գնահատել: Թող յաւիտեան
կենդանի մնայ Գրիգոր Ջանչեանի յիշատակը
եւ թող խաղաղութեամբ հանգչի անոր աճիւնը»

«Բրավօ» իրաւաբանական մեծ լրագիրը կը
գրէ հետեւեալը:

«Հետզհետէ կը գունատի եւ կը մարի այն
անազին ու պայծառ խարոյկը որ այնքան մօտ
անցեալի մը մէջ կը լուսաւորէր եւ կը տաք-
ցընէր Ռուսաստանը: Հուպհատ կը պակսին
այն մարդիկը որ կը պահպանէին անոր սրբա-
զան բոցերը: Մէկ քանին այլ եւս չկան, իսկ
միւսները հեռու են, ուրիշ կրակներու մօտ ու
բոնք ուրիշ սեղաններու առջեւ վառուած են:
Գրիգոր Ջանչեան մին էր սակաւաթիւներէն,
ան ապրեցաւ եւ մեռաւ վաթսհական թուա-
կաններու առկայծող խարոյկին մօտ: Մեզի՛
իրաւաբաններու համար, մասնաւորապէս
թանկագին է Ջանչեանի պատկառանքը զէպի
մեծ դատաստանական օրէնքները: Որպիսի՛
հրճուանքով ան կ'ողջունէր հին սկզբունք-
ներուն ամեն մէկ յաղթանակը, օրինակ՝
1898 փետր. 3ի օրէնքը, որ կը լայնցնէր
երգուեալներու դատարանի գործունէութեան
չըջանակը: Եւ ո՛րքան ջերմ կերպով կը ցան-
կար որ օրէնքներու վերաքննութեան յանձ-
նաժողովը դատաստանական օրէնսդրութեան
հին գինին նոր տիկերու մէջ թափած ատեն

եւ ոչ իսկ կաթիլ մը չկորսնցնէ այդ բերեղային մաքուր հեղուկէն :

«Բայց ամէն բան անցաւոր է : Քնաթաթախ հանդարտութեան ժամանակին շուտով կը յաջորդէ եռանդի եւ ուժի ստեղծագործ ծաղկման ժամանակամիջոցը : Երբ նորէն յիշուին «մոռցուած խօսքերը» , կը յիշուի նաեւ այդ խօսքերը քարոզող Զանչեանը, այն պատկերներն զոր մենք վշտահար ձեռքով անոր գերեզմանին վրայ կը դնենք , մեր որդիները պիտի աւելցընեն ուրախութեան պսակներն :

«Սեպտեմբերի Քուրիէր» լրագիրը կը գրէ .

«Յանձին նոր վախճանած Գրիգոր Զանչեանի, մենք կը կորսնցնենք ոչ միայն հողեկան սպիչեցնող մաքրութիւն ունեցող անձ մը , ոչ միայն անարգուած ճշմարտութեան եւ մարդկային լաւագոյն իտէալներու համար անխոնջ մարտնչող մը, այլ եւ մեր ամենէն սաղանդաւոր հրապարակագիրներէն մէկը . . .

«Իբրեւ ծագումով հայ , Զանչեան ի հարկէ անտարբեր չէր կարող մնալ իր Թուրքիոյ հայրենակիցներուն տանջանքներուն : Վնասուած Հայերու օգտին՝ հրատարակեց «Եղբայրական օգնութիւն» հաւաքածուն : Հաւաքածուն երկու տպագրութիւն ունեցաւ եւ վախճուածն հաղար բուպլի արդիւնք տուաւ : Զանչեանի հայկական ծագումը բնական է որ հանգիստ չէր թողուր զանազան մատնիչներն ու զրպարտիչները , որոնք կը պատկանին «տնաբոյս» հայրենասէրներու բանակին : Ուշադրութիւն կը հրաւիրէին, մատնանիչ կ'ընէին՝ ուր որ անկ է , «սեքարաթիպի» եւ այլ անմիտ բաներու մասին կը խօսէին , կը փախսային թէ Զանչեան իբրեւ Հայ միայն Հայերու համար կը գործէ : Ի՞նչ գայթակղեցուցիչ լրբութիւն : Այդ պարոնները , իրենց յատուկ խարերայ ձեւերով , խաղաթղթերը կը խարդախէին եւ զիտամբ լռութիւն կը պահպանէին իրենց ծանօթ կողմ այն փաստերուն մասին որոնք կը վկայեն թէ Զանչեան Հայերուն համար միայն չէր աշխատեր . «Մեծ բարեկրթագումներ»ու մասին հրատարակած իր գրքին գըրթէ ամբողջ հատոյթը հեղինակը զանազան ժամանակ նուիրեց ուս ուսանող երիտասարդութեան եւ ուս սովորանջ մեծիքներուն : Պահպանողականները պարզապէս չէին ուղերներել Զանչեանին, այդ ոգով ուս մարդուն որ զգացուած , ոգեւորուած երգեր կը հնչեցնէր ի պատիւ ազատարար բարեկրթագում

ներուն , որոնք ա՛յնքան խոտելի են խաւարի եւ մտրակի երկրպագուներուն : Շատ բան կարելի է ըսել Զանչեանի մասին , բայց միայն լաւ բան : «Մարդ» էր ան . Անոր թաղման աւտեն շատերը կուլային , եւ այդ արցունքները ի ցոյց մարդկան չէին , անկեղծ , անյխաղբիլ արցունքներ էին : Կարելի չէ չողջունել Զանչեանի անունով ընթերցարան բանալու յաղափարը , արդէն նուիրատու թիւններ սկսած են հաւաքուիլ այդ նպատակով , եւ ի հարկէ այդ ձեռնարկը կը յաջողի :



ԳՈՐԾԻ ՄԱՐԴԻԿ

ՊՈԼՍԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

Բ .

Շար . (*)

Սարըսըլըքեան Մարտիրոս ազա Պոլիս հանելէն քիչ ետքը կորսնցուցած էր իր մայրը , որուն հետ եկած էր Շապին-Գարահիսարէն ու հաստատուած Բերայի մէջ : Այդ մահը մեծ հարուած մը եղաւ իրեն համար : Հիւանդութեան միջոցին բժիշկ ու դեղ արդէն բուական զրամ կորցած էին իր քսակէն , եւ հիմակ թաղումի ու գերեզմանոցի ծախքը կուզար բարդուիլ անոնց վրայ : Բերայի թաղական խորհուրդը մանաւանդ հոչակաւոր էր մեռելներու մասին իր ծայրայեղ սակաղիներովը եւ Մարտիրոս ազա սոսկուելով կը մտածէր որ թերեւս 30—40 ոսկիի պիտի նստէր մօրը թաղումը :

—Տարի մը առաջ իր քաղքին մէջ չէ՞ր կըրնար մեռնիլ , կը մտածէր , յուսահատ շրջելով սենեակին մէջ :

Ատուռն կանուխ գացեր էր Ս . Երրորդութեան եկեղեցին որպէսզի թաղական խորհրդի անդամներուն հետ բանակցի թաղումի մասին , բայց ոչ ոք հոն էր այդ ժամուն : Հիմա , իր տանը մէջ , կը սպասէր բարապանին որ խոստացած էր պէտք եղած տեղեկութիւնները անել եւ դալ իրեն իմաց տալ : Սպասելով

(*)Տես «Անահիտ», Բ . Տարի , թիւ 6—7—8

հանդերձ, Մարտիրոս ազա ուղեղը կը չարչրկէր միջոց մը, ճար մը գտնելու, որպէսզի կրցածին չափ ածան ազատի ծախքի այս անակնկալ փորձանքէն :

Յանկարծ յոյսի ճառագայթ մը փայլեցաւ իր մտքին մէջ : Հնարք մը յղացած ու ծնած էր : — «Ի՞նչպէս մինչև հիմայ չմտածեցի» , ըսաւ ինքնիրեն : Իր գտած միջոցը այնչափ խեղացի, այնչափ ապահով երեւցաւ իրեն որ ա՛լ զէմքը բոլորովին պայծառացաւ ու գոհ եւ ուրախ նստաւ թիկնաթոռին մէջ :

— Չէ թէ ածան, այլ այս կերպով ձրի թաղել կուտամ, կը մտածէր անձառ հեշտու թեամբ մը :

Քիչ մը ետքը ծառան ներս մտաւ :

— Ժամէն երկու հոգի եկեր են , ձեզ սեսնել կ'ուզեն :

— Երկու հոգի . . . վեր հրամցուր :

Երկու հոգին քիչ մը շիւ երեւցաւ Մարտիրոս աղային որ միայն բարապանին կը սպասէր :

Ծառան ներս մտցուց բարապանը որուն կ'ընկերանար սեւեր հագած ուրիշ անձ մը .

— Ահաւասիկ եկանք, ըսաւ բարապանը խօսքը Մարտիրոս աղայի՝ ուղղելով :

Յետոյ, հետը ընկերացողը ցոյց տալով ,

— Ձեզ կը ներկայացնեմ Արսէն էֆէնտի կուլեանը, թաղական խորհրդի անդամ եւ միանգամայն Շիշլիի գերեզմանատան հոգաբարձու թեան ատենապետը . իրեն հետ կրնաք ամէն բան կարգադրել :

Ու բարապանը դուրս ելաւ առանձին ձգելով երկուքը :

Արսէն էֆէնտի տեղաւորուեցաւ թիկնաթոռի մը մէջ :

— Ձեր տիկին մայրը արդեօք շատո՞նց ի վեր կը տառապէր, հարցուց թեթեւ մը հազալէ ետքը :

— Մա՞յրս . . . իմ մայրս շատոնց սեռած է , էֆէնտի :

— Ի՞նչպէս, հանգուցեալը ձեր մայրը չէ՞ :

— Չէ՛, ճանրմ, չէ՛ . . .

— Հապա առաւօտուն եկեղեցի եկած ատեն նիդ բարապանին ըսեր էիք որ հանգուցեալը ձեր մայրն է :

— Սխա՛լ է հասկցեր , էֆէնտիս, մայրս չէ , ո՞վ է ըսեր որ մայրս է. պառաւ կնիկ մըն էր, հետս բերի որ հոս տան գործերը ընէ . բարով խերով չբերէի, գլխուս փորձանք եղաւ . . . ես բարապանին ըսի որ ժամկոչը զրկէ որպէս զի մեռելը առնէ ժամ տանի , այսչա՛փ . սակէ վատ

բան մը չըսի. դուք պարապ տեղը յոգնեք, ելեք եկեր էք :

— Յոգնութեան մասին խօսք ընելու կըրդէ, պատասխանեց կուլեան. միշտ թեթեւ մը հազալէ ետքը . իբրեւ թաղական խորհրդի անդամ եւ իբրեւ նախանաւանդ գերեզմանոցի հոգաբարձու թեան ատենապետ, կրկնակ պարտականութիւն ունիմ ննջեցելոց մասին իմ ծառայութիւններս մատուցանելու : Գալով հանգուցելոյն ձեր մայրը ըլլալու կամ չըլլալու խընդրին, իր կարեւորութիւնը կը կորսնցնէ սա իւրողութեան առջեւ թէ՛ իր ոչ-մայրութեան վիճակը պատճառ մը չէ առանց թաղումի վերցընելու իր մարմինը, հետեւաբար՝ ամէն պարագային անհրաժեշտ է որ նախապէս խորհրդակցութիւն մը կատարենք միասին, պարտու պատշաճը տնօրինելու համար : Սա եւս պարտք կը զգամ այժմէն աւելցնելու թէ՛ դուք չէք որ իրաւասութիւն ունիք վճռելու հանգուցեալ տիկնոջ ձեր մայրը ըլլալուն կամ չըլլալուն խնդիրը :

Արսէն էֆէնտի կուլեան որ վստահօրէն դիտէր թէ մեռնողը Մարտիրոս աղային մայրն էր . հասկցաւ գաւառացի վաճառականին միտքը եւ անմիջապէս պատրաստեց իր յայտակարիժը որուն համեմատ իրեն շահ պիտի ելլէր «մա՞յր թէ սպասուհի» ի այս կնձոտս պարագայէն :

Իր խօսքերը հատիկ հատիկ արտասանած էր, պէտք եղած բառերուն վրայ շեշտելով ու միեւնոյն ժամանակ աչքին պոչովը դիտելով Մարտիրոս աղային զէմքը որուն վրայ ճաճանչող պայծառ վստահութիւնը տեղի տալ կը սկսէր անորոշ մտահոգութեան մը մշուշնորուն : Երբ խօսքը լմնցուց, ծխախոտը հանեց, քիչ մը դրսւ սիկատէթի թղթին վրայ եւ՝ գլուխը կախ՝ սկսաւ մէջի փոքրիկ , մանրադիտական կտորուանքները զատել, պլորելէ առաջ :

Մարտիրոս ազա շատ գոհ չմնաց այդ արարողութենէն որ այցելութիւնը երկարելու դիտաւորութիւն կը յայտնէր Արսէն կուլեանի կողմէն : «Այս մարդն ալ ո՞ւր կէ մէջ տեղը ելաւ, կը խորհէր . իցի՛ւ թէ ատուեն եկեղեցի չերթայի ու շիփ շիտակ մտուելը հոն զրկէի . մեղք որ գտած միջոցս քիչ մը ուշ միտչս ինկաւ» : Ուղեց վայրկեան մը առաջ վերջ տալ ներկայ կացութեան որ կրնար երկար խօսակցութեան մը անակնկալներուն մէջ աւելի

կնճոտով, ուստի չոր ու կտրուկ ձայնով մը պատասխանեց .

— Էֆէնտիս , նորէն կ'ըսեմ . պարապ տեղը յոյներ էք հոս գալով , աւելի աղէկ կ'ըլլար որ ժամկոչը զրկէիք ու անէր տանէր մեռելը , ճրի թաղումի մը համար այսչափ յոգնութիւն , իրարանցում չ'արժեր :

— Ձրե՞ . . հանգուցեալ տիկնոջ յուղարկաւ . որութեան հանդէսը կ'ուզէք որ ճրիարա՞ր կատարուի :

— Ի՞նչ հանգուցեալ , ի՞նչ տիկին , ի՞նչ յուղարկաւ որութիւն , ի՞նչ հանդէս , զոչեց Մարտիրոս աղա որուն համբերութեան քանակութիւնը զգալի կերպով պակսիլ կը սկսէր . անտէր մեռել մը կայ մէջտեղը , եկեղեցի պիտի զրկենք որ թաղեն՝ ինչ կ'ուզեն ընեն . սա է բոլոր ինդիքը : Եթէ ասոր համար ժամկոչին քանի մը դուրուչ տալու է՝ տանք ազատինք , բայց անկէ դուրս բանի մը չեմ խառնուիր , կը հասկնա՞ս , էֆէնտիս , ահա քեզի վերջին խօսքս :

Ան Մարտիրոս աղա բարկութենէն կարմրած ոտք ելաւ եւ սկսաւ մեծաքայլ ժուռ գալ սենեակին մէջ :

Արսէն Կուլեան մտիկ ըրաւ այդ խօսքերու պոթկումը առանց յուզումի ամենափոքր նըշան մը ցոյց տալու , յետոյ թիթեւ մը հազաց , զվճարին վրայ տգեղ ծամածոութիւն մը ըրաւ , որ իրեն յատուկ ժպտելու ձեւ մըն էր , եւ՝ հատիկ հատիկ խօսքերը կաթեցնելով՝ պատասխանեց .

— Գրգուման վիճակի մէջ ձեր արտասանած խօսքերը , Մարտիրոս աղա , որոնց անպատեհութիւնը դուք առաջինը պիտի ըլլաք զգալու երբոր վերստին գտնաք ձեր պաղարիւն վիճակը , բարեբախտաբար վերագրելի են այն խորին յուզումին որ ձեր կրած դառն կորուստէն յասաջ եկած է անշուշտ : Առանց այդ չքմեղանքին՝ իրաւունք պիտի ունենայի վերաւորեալ համարիլ անձս եւ ըստ այնմ ի պատշաճութիւն հրաւիրել զձեզ :

— Աղբա՛ր , գրաբար մի՛ խօսիր , չեմ հասկնար , պոռաց Մարտիրոս աղա , որ ա՛լ չէր կրնար կրել Արսէն Կուլեանի բռնած սմանդուկ կերպով գրգռիչ գիրքը :

Յետոյ եկաւ նստաւ թիկնաթոռին վրայ իր ոտիսին դէմը եւ ձայնը ցածցնելով շարունակեց .

— Էֆէնտիս , պարապ խօսքերով ժամանակ չանցընենք , սա մեռելը պիտի առնէք թաղէ՞ք :

— Ինչո՞ւ չէ :

— Ձրիարա՞ր :

— Քանի որ կ'ըսէք թէ անտէր կին մըն է ու զրամ ալ չէ ձգած , բնական է որ եկեղեցիին պարտականութիւնն է ճրի թաղել :

— Հա՛ , տեսա՞ր մի , հիմակ իրարու խօսք կը հասկնանք , զոչեց դաւառացին ուրախութեամբ , զարմանալով հանդերձ թաղականին յանկարծական հաճոյակատարութեան վրայ :

Արսէն Կուլեան քթին տակէն խնդալով հարցուց .

— Ի՞նչ է մեռնողին անունը եւ մականունը :

— Անո՞ւնը . . . կեցիք նայիմ . . . Մարիամ . . . Մարիամ Թօփուզեան :

— Ամուսին , զաւակ , եւն , չունի՞ :

— Ձէ՛ , չէ՛ , մէկը չունի :

— Շա՛տ աղէկ :

Ու զրպանէն թուղթ մը հանելով գրեց Մարտիրոս աղային ըսածները . յետոյ , անտարբեր ձայնով շարունակեց .

— Հոգ մի ընէք , հիմակ ես ժամկոչը մէկուն հետ կը զրկեմ , դագաղ մըն ալ կը բերին ու եկեղեցի կը փոխադրեն մեռելը . . . միայն թէ , աղէկ միտքս ինկաւ , մեռնողին համիտիէն պէտք է տաք որպէսզի օրինական արձանագրութիւնները կատարուին եւ թաղումը կարելի ըլլայ ընել :

Համիտիէն . . . այս պզտիկ մանրամասնութիւնը հաշուի չէր առած Մարտիրոս աղան : Զգաց որ իր ամբողջ խաբեբայութեան կազմուածքը կը քայքայուէր համիտիէի այդ անուղոք ու անակնկալ երեւումին առջեւ : Յետին ճիղ մը փորձեց սակայն :

— Իրաւ որ չեմ գիտեր , զուցէ կորսուած է համիտիէն . . . ճա՛նըմէֆէնտիս , հիմա՛նոր դժուարութիւն մի՛ հաներ մէջտեղ :

— Շատ կը ցաւիմ , Մարտիրոս էֆէնտի , բայց առանց համիտիէի անկարելիէ մեռելը թաղել , բացարձակապէս անկարելի է :

Արսէն Կուլեան այնպիսի վճռական ու հանդիսաւոր ձայնով մը արտասանեց «բացարձակապէս անկարելի է» բառերը որ միւսը հասկըցաւ թէ փախուստի ամէն միջոց զոյցուած էր իրեն դէմ , անդառնալի կերպով :

— Երթամ փնտռեմ :

— Ձանացէ՛ք որ գտնէք , պոռաց թաղականը Մարտիրոս աղային հտեւէն , որովհետեւ , նորէն կը կրկնեմ , բացարձակապէս անկարելի է առանց համիտիէի թաղել :

Քառորդէ մը վերադարձաւ վաճառականը հա-

միտիէով միասին : Արսէն Կուլեան թուզթը առաւ, կարգաց, եւ Մարտիրոս աղային դարձուց ըսելով :

— Կարծեմ սխալեր էք, ասիկա ձեր տիկին մօր համբոխէն ըլլալու է, Մարիամ Թօփուղեանի անուն չկայ մէջը :

— Ասիկա է, ասիկա :

— Բայց հոս Վառվառ Սարըպըյրգեան գրուած է :

— Աղբա՛ր, երկայն մի ընե՛ր, աս է կ'ըսեմ կոր :

— Բայց կը խնդրեմ սխալ մը չըլլայ, մեռնողին բուն անունը ի՞նչ է :

— Վառվա՛ռ է, Վառվա՛ռ է, մայրս է մեռնողը, գոչեց Մարտիրոս աղա՛ս՝ Լհամբրութիւնը հատած :

— Ես ի սկզբանէ ըսի որ հանգուցեալ տիկինը ձեր մայրն է, չուզեցիք խօսքիս համոզուիլ . . . ինչ որ է, ա՛լ չխօսինք այս մասին :

— Հիմա սա ըսէ ինձի, քանի՞ք պիտի թաղէք մեռելը . . . ես շատ բարա չեմ կրնար տալ, ա՛ժա՛ն կը թաղէք նէ՛՛ աղէկ, եթէ ոչ՝ եկեղեցի չի պակսիր Պոյոսյ մէջ, ուրիշ աւելի աժա՛ն գործ տեսնող եկեղեցի մը կը գիտնամ :

— Ես քու մեռելդ ձրի պիտի թաղել տամ, Մարտիրոս աղա . . . բայց . . .

Եւ Արսէն Կուլեան պարզեց իր ծրագիրը : Կեղծ համբոխէ մը շինել պիտի տար անմիջապէս, թաղական խորհրդի քարտուղարին միջոցով, ու մեռելը պիտի թաղէր իբր Մարիամ Թօփուղեան, եւ ի փոխարէն Մարտիրոս աղա վեց ոսկի պիտի վճարէր իրեն : Վաճառականը այս անյուսակի կարգադրութենէն այնչափ հրապուրուեցաւ որ անմիջապէս ուզեց վճարել երեք ոսկին, մնացած մասն ալ թաղումէն ետքը տալու խոստումով :

Արսէն Կուլեան գրպանեց դրամը եւ մեկնեցաւ : « Ինձի խաղ պիտի խաղար, ապուշը, մայրս չէ՛ ըսելով ինձի . . . Արսէն Կուլեանի՞ն, կ'ըսէր մտքէն, զէպ ի Երրորդութեան եկեղեցին երթալով, ես խաղի եկող մա՞րդ եմ : »

Արսէն Կուլեանին խա՞ղ խաղալ փորձել . . . իրաւցնէ ապուշ ըլլալու էր մարդ ատանկ փորձ մը ընելու համար : Թէեւ Մարտիրոս աղա սա արդարացումը ունէր որ տակաւին նոր կը ճանչնար Շիշլիի գերեզմանատան հուզարարութեան ատենապետը :

Ատենն է որ մենք ալ մեր ընթերցողներուն ճանչցնենք զինքը :

Արսէն Կուլեան պախալին մտասիւպարը կազմող գործի մարդն էր, գործի մարդ մը առանց որ եւ է խոստովանելի գործ ունենալու : Ո՛չ վաճառական էր ինք, ո՛չ սեղանաւոր, ո՛չ պաշտօնեայ, ո՛չ փաստաբան, ո՛չ բժիշկ, ո՛չ խմբագիր, ո՛չ արհեստաւոր, վերջապէս բան մը չէր ան այլ միայն « ազգայինճի » : Սահմանագրութեան հաստատումէն ի վեր այդ եղամ էր իր միակ զբաղումը եւ ատոր մէջ փայլեցուցած էր գործի մարդու բոլոր տաղանդը :

« Կեցցէ՛ Սահմանագրութիւն », « Սահմանագրութեան նոր բարեւ մ'ալ տանք », եղած էր իր նշանաբանը, ու իրա՛ւ ալ, պատկառանքով, երախտագիտութեամբ բարեւած էր Սահմանագրութիւնը երեսուն տարիէ ի վեր : Գեանամ, բէշերը վրայ վրայի բերած, բարեւի կեցած էր անոր առջեւ, ինչպէս գրագիր մը իր չորպաճիին առջեւ, որմէ կախուած է իր ապրուստը : « Նոր բարեւ մ'ալ տանք » . . . ու ամէն մէկնոր բարեւ նոր շահագործում մըն էր Սահմանագրութեան : Թաղական, հոգաբարձու, մասնատողովի, յանձնատողովի ատենապետ, եւրոսիոսան, ազգային ժողովի գիւանին անդամ, վարչական խորհուրդներու գործակից, ամէն տեղ « նոր բարեւ մը » տուած ու նոր զեղծում մը գործած էր :

Երեսուն տարիէ ի վեր Սահմանագրութեան ամէն օրէնքները, կանոնները, յօդուածները, կէտերն ու ստորակէտերը ծամած, կուլ տուած եւ որոճացող կենդանիներու պէս նորէն ու նորէն ծամած ու մարսած էր : Նոյն իսկ ակընյայտի խաբեբայութիւն մը չկար զոր կարող չըլլար հաշտեցնել օրէնքին հետ : Անհարապատ տղաքը հարապատել, հարազատները անհարազատել, ամուսնացածը կրկին ամուսնացնել, չամուսնացածը ամուսնացած հռչակել, հրեան հայ շինել, հայը հոռոմ շինել, հոռոմը տաճիկ շինել, ձախէն բարեւ մը տալ Սահմանագրութեան եւ ապօրէն կնուէք մը կատարել, աջէն բարեւ մը տալ ու աւազակ դանձապահ մը արգարացնել, իրեն համար ջուր խմելու պէս բաներ էին : Սահմանագրութեան հաստատումէն ի վեր չկար զեղծում մը որ իր տաղանդին դրոշմը չկրէր :

Իր գործի մարդու այդ կարողութիւնը պատուաւոր զիրք մը չինած էր իրեն Բերայի բարձր դասին մէջ ուր կ'ընդունուէր գրեթէ ակնածանքով : Մասնաւորապէս Կերմերեան Մարկոս էֆէնտի տունը միշտ բաց էր իր առջեւ, մանաւանդ որ, ինչպէս տեսանք, Մարկոս

էֆէնտի գանձապահն էր թաղական խորհրդին, եւ շատ ատեն պէտք կ'ունենային գլուխ գլխի խորհրդակցութիւններ կատարելու թաղական գործերու բարւոք մատակարարութեան մասին :

Առաջին օրէն իրար գնահատած ու հասկըցած՝ վերենք ազգային գործունէութեան մէջ մղող ծածուկ շարժառիթները կռահած էին : Մարկոս էֆէնտի դիտէր թէ Արսէն Կուլեան կրեւորն տարիէ ի վեր ապրուստի միջոց ըրած էր Բերայի թաղական խորհուրդը եւ Պատրիարքարանը . նոյնպէս Արսէն Կուլեան գիտէր թէ Մարկոս էֆէնտի ի'նչ կերպով կը շահագործէր իր գանձապետի եւ հիւանդանոցի հոգաբարձուի պաշտօնները : Եւ որովհետեւ շատ անպաւնէր իրենց շիւ ու ծամածուկարգադրութիւններուն համար իրարու պէտք կ'ունենային , հաշիւներու այդ համեմատչութիւնէն ծնած էր մտերմութիւն մը որ մեծնալով եւ ուռճանալով ա'լ եղած էր կատարեալ մեղսակցութիւն մը . այնպէս որ մեր պատմութիւնը սկսած ատեն Մարկոս էֆէնտիի զեղծումները հարկ չէին զգար ծպտուելու Արսէն էֆէնտիի զեղծումներուն առջեւ, ու փոխադարձաբար :

Իրարու մասին ունեցած այս վստահութեան պատճառաւ, Արսէն Կուլեան, Մարտիրոս աղայի մայրը իբրեւ Մարտիրոս աղայի սպասուհին ճրիաբար թաղելէ քանի մը օր ետքը , երբ հրնարամիտ խաբեբայութիւններու վրայ խօսք կ'ըլլար մէջերնին, Մարկոս էֆէնտիի պատմեց այդ եղելութիւնը իբր գործնական ոգիի տակաւ զարգացման մէկ նոր ապացոյցը գաւառացի ազգայիններու քով :

Մարկոս էֆէնտի խիստ շահագրգռուած մտիկ ըրաւ պատմութիւնը, առեն ատեն հիացողական բացազանչութիւններ արձակելով , յետոյ գոչեց .

— Կանոնադրա՛ր, մեր մէջը այդ տեսակ շունչանորդի մարդիկ շատ կան , բայց մե՛ղք որ երկրին կացութիւնը եւ հանգամանքները մեզի նպաստաւոր չեն : Ան քու չհաւնած գաւառացիդ չի կա՞յ մի, Եւրոպա կ'երթայ կոր տէ՛՛ Եւրոպացիները կը խաբէ, գործ կ'ընէ կոր : Դեռ երէկ բան մը իմացայ, պատմեմ, բերնիդ ջուրերը պիտի վազէ :

Ու Մարկոս էֆէնտի պատմեց թէ ինչպէս կեսարացի Հայ մը յաջողեր էր Համպուրի մէջ իբրեւ մեծահարուստ վաճառական ներկայանալ եւ գործատէրերէ շատ մը ապստիկ ապ-

րանք առնելէ ետքը, Անգլիոյ մէջ ծախել ու կծիկը գնել :

— Ատ բան մը չէ, դուն սա մտիկ ըրէ : Ու Արսէն Կուլեան յիշեց հանճարեղ հայ ոսկերիչ մը որ կեղծ հին դրամներ շինած, ոսկեզօծած ու մեծ մեծ գներով ծախած էր անգլիացի ու ֆրանսացի դրամախոյզներու :

— Անոր խըյախը իմ քովս կայ, առաջ բերաւ Մարկոս էֆէնտի, ու ա'լ աւելի անամօթ գողութեան գէպը մը յիշեց, ծանօթ հայ վաճառականի մը կողմէն ի գործ դրուած, արուեստին ամբողջ կատարելութեամբը :

Սօսակցութիւնը ընդհանրանալով՝ երկու բարեկամները հետզհետէ իրարու պատմեցին ամբողջ Բերայի , Գատրքէօյի , Օրթաքէօյի համբաւաւոր գերդաստաններուն առեւարական ճարպիկութիւններն ու գործնական ոգիի փայլուն առաջոյցները :

Մին Բերայի հրկիզեալներուն համար ժողովուած դրամէն 5—6 հազար ոսկի կոկորդը անցուցած էր խառնափնդոր հաշիւներ ցոյց տալով, ուրիշ մը վարպետութեամբ Ղալաթիոյ եկեղեցւոյն մէկ քանի կալուածները իւրացուցեր էր, երբորդ մը ճարպիկութեամբ իր քոյրերուն ժառանգութեան բաժինը կուլ առած էր , հինգերորդ մը խաբեբայական սնանկութիւններու մասին մասնաւոր ընդունակութիւն մը ցոյց տուած էր , վեցերորդ մը իրեն մասնադիտութիւն ըրեր էր բարեգործական նպատակներու համար հաւաքուած գումարները քովը պահել ու տարիներով շահագործել , առանց մէկուն հաշիւ տալու . . .

Երկու բարեկամները մտան մեծ փողոցին վրայ գարեջրատուն մը եւ նորէն շարունակեցին իրենց խօսքը : Փոխն ի փոխ պատմուելով դիզուած բոլոր այդ ճարպիկութիւններու կուտակումը կը խանգավառէր զիրենք, ու տեսակ մը հպարտութիւն կը զգային մասծելով թէ այդ գործի մարդերու արիւնն էր որ կը հոսէր նաեւ իրենց երակներուն մէջ :

Արսէն Կուլեան որ քիչ շատ ընթերցում ըրած մարդ էր եւ միանգամայն ֆրանս-մասոն , իմաստասիրական խորհրդածութիւններ ընելու սկսաւ : Հայոց գործնական ոգիին ընթացքը եւ ուղղութիւնը որոշեց . իր ծագումը փնտռեց . ամիրայական շրջաններէն անցնելով , հասաւ Լեհաստանի, Ռուսիոյ, Արիմու հայ գաղթականութիւններուն, յետոյ դատումով մը ցատքեց Հնդկաստան , մինչեւ ծալա երկարեց իր խուզարկութիւնները եւ նոյն ճամբով վերա-

դարձաւ. նորէն Պոլիս, սա եղրակացութեան հասնելէ ետքը թէ Հայը զործի մէջ երբեք տեղի չի տար Յոյնին ու Հրեային:

Այս ամբողջ խօսակցութիւնը սակայն Մարկոս էֆէնտիին մոռցնել չէր տուած Մարտիրոս ազան, ու երբ ոտքի ելաւ, Կուչեանէն բաժնուելու համար, ըսաւ.

— Սա Մարտիրոս աղան օր մը մեզի բեր, կ'ուզեմ տեսնուիլ հետը:

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

Շարունակելի)



ՎԱՐԴ ԵՒ ՍՈՒԱԿ

— օ —

Շար. (*)

ԺԲ.

Բայց հողովական ժամանակն իր անիւր միշտ թաւալելով զէմքը կ'այլայլէ ու յանկարծակի անակնունելի պատահարներ յարուցանելով իր ստորակարգելներուն կացութիւնը կը փոփոխէ. եւ ահա ուրիշ ազմուկ մըն ալ բարձրացաւ ու Վարդա անին բնակիչներուն զուգնաքեայ անդորրութիւնը վրդովեց:

Այդ միջոցներուն Չմեռ-Արքայ կոչուած Աւ պարքախա հզօր եւ մեծ թագաւորը, իմանալով Գարուն-Պագաւորին փախչիլը, Արփի-Սպարապետին ետ դառնալը եւ Աշուն-Իշխանին Վարդարան գերահռչակ քաղաքին տիրելը, սաստիկ բարկացաւ թէ՛ ի'նչ անպատշաճ բան է որ Աշունին աստիճանն ունեցող մասնաւոր իշխան մը ճարտարական հնարքներով տիրէ այդպիսի գեղեցիկ ու վայելուչ տեղի մը: Իր Չիւն-Յրտագոյն անուն սպարապետը կանչեց, եւ անոր խիստ հրամաններ տալով պատուիրեց որ շուտով ձմեռուան եղանակին սառնաշունչ զօրականները ժողովէ, եւ Վարդարան քաղաքը երթալով զայն իր զօրքերուն ձմեռնային բնակութիւն դարձնէ եւ հոն պարապ տեղ մը չթողու, այլ բոլոր խորշերն ու անկիւնները զօրականներով լեցնէ: Եւ եթէ բնակիչներէն մէկը համարձակի ասոր զուռը կղզել, երդիքէն ներս իջնեն, եւ եթէ երդիքը գոցեն, լուսամու-

տէն մանն ու բունութեամբ ամէն տեղ գրաւելով ամենուն փոխանցին Արջային Շրջանակին սառնութիւնը, որպէսզի ամենքը ձանչնան ձմեռնային իշխանութեան մեծագոյն զօրութիւնն ու ազգեցութիւնը:

Այս հրամանը ընդունելով, Չմեռ-Կայսեր Չիւն-Յրտագոյն սպարապետը, զօրքերու անհուն բազմութիւնը գումարելով աճապարեց յանկարծակի դիշերանց Վարդարանին վրայ յարձակիլ եւ իր տիրոջը պատուէրին համաձայն ամբողջ քաղաքը լեցուց անգութ եւ խստաշունչ զօրականներով եւ հոն եւ ոչ իսկ ստնաչափ տեղ մը պարապ չթողուց ուր մէկը կարենար ապաստանիլ:

Գաղթին բնակիչները առտուն արթննալով եւ տեսնելով անհուն բազմութիւնը ձիւնատե սակ սպիտակափայլ զօրականներուն՝ որոնք լուսնապոյն զորքերու պէս ամբողջ երկրին վրայ տարածուած էին, ահուզողի մէջ ինկած ամենքը փութացին իրենց տուներու դուռները, երգիքներն ու լուսամուտները գոցել եւ անոնց մէջը փակուիլ: Աշուն-Գուքսին Տերեւաթափ-Սպարապետը, այս տեսնելով, իր կայքն ու կայրասիքը թողլով, գաղտագողի մազապուրծ փախաւ:

Այն ատեն Չիւն-Յրտագոյն սպարապետը, համարձակ տիրելով, բովանդակ Վարդարան քաղաքը բնակութիւն դարձուց իր խստաշունչ զօրականներուն, որոնք սառնամանիքներու ծնունդ ըլլալով՝ ժողովրդին ի'նչ վիշա ու նեղութիւն տալերին գրչով կարելի չէ բացատրել. անոնց սարսափէն ամենքը իրենց տան մէջ բանտուած ու ամբացած կը սասանէին. եւ անդու զօրականները, դեռ ով որ բացօթեայ գտնէին՝ շնչասպառ կ'ընէին, չոր փայտի պէս կը սառեցնէին:

Եւ այս բոլոր խստութիւնը բաւ չհամարելով, կը ջանային տուներուն մէջ թափանցել եւ հոն պանուղները սառեցնել: Եւ անոնք պաշտպանութեան ուրիշ հնարք չունէին բայց եթէ փայտ դիզել ու այրել եւ բոցովը սառնաշունչ զօրականներուն զէմ մարտնչելով զանոնք իրենց սեռեակներէն վտարել, եւ հնոցներուն կրթնած՝ անոնց կ'ապաստանէին, եւ այդ պատճառով չարաբարոյ ազահները վայտը կրակի գնով կը ծախէին:

Եւ եթէ հարկ ըլլար զուրս ելլել, աղքատները՝ անոնց վախէն՝ երազափոյթ սուրհանդակներու պէս կը վազվզէին, եւ հարուստները

*) Տե՛ս «Անահիտ», Բ. տարի, թիւ 1—2:

բեռնակրի պէս ազուէսի, գայլի եւ արջու մաշկերով բեռնաւորուած կը պարտէին, որպէսզի անոնց նետերուն սայրասուր սլաքներէն չխուցուէին: Իսկ քաղաքին եւ դաշտերուն աղբիւրներն ու գետերը, երկիւղով պաշարուած, բիւրեղանման մարմարեայ վէմերու տակ կը պահուըտէին: Եւ մինչդեռ քաջամարտիկ ու մանք գիմազբելու կ'ելլէին, անզուսպ զօրականները, անոնց վրայ խնդալու համար, անոնց ընչացքը տապարով չկոտորուելիք թեակներու կը փոխէին եւ անոնց մօրուքին թելերը սաւառած մարգրիտներով կը պճնէին, այդ քաջ ախոյեանները կը ծաղրէին ու կը կատակէին:

Եւ այսպէս Վարդարանին բնակիչները, այնքան նեղութեանց ու տառապանքներու մէջ մնացած, միմիայն երկնքէն օգնութիւն կը յուսային:

ԺԳ:

Այս բոլոր փոփոխութեանց ու այլայլմանց միջոցին, Գարուն-Թագաւորը, որ իր Վարդ-Անթառամ աղջկանը հետ մէկտեղ Արեւելք փախած, իր ազգական Գարնանամուտ Թագաւորին քով ապաստանած՝ պատեհ ժամանակին կը սպասէր որպէսզի փառքով ու մեծ զօրութեամբ գալով կրկին տիրէ իր Վարդարանին, ուստի եւ իր մարդիկը զրկած էր որ ամէն կողմ լրտեսեն:

Լրտեսները դառնալով լուր բերին իրեն թէ՝ «Ամառ-Կայսեր ու Ձմեռ-Կայսեր միջեւ մեծ համակրութիւն մը գոյացած էր եւ Արփի-Լուսաւոր մեծ սպարապետը Ձողիակոսին վրայ եկած ըլլալով իր կայարանէն՝ դէպ ի հիւսիս կ'ընթանայ՝ զայն բարեխառնելու համար. Ձմեռուուն թագաւորն ալ, այլեւայլ զբաղմանց մէջ բռնուած, ժամանակ չունի Վարդարանին կողմերը նոր զօրք զրկելու. ուրեմտ ատեն է որ քու մեծութիւնդ Վարդարանին վրայ քալէ՝ քու սեփական երկրիդ տիրելու:»

Գարուն-Թագաւորը իր Գարնանամուտ-Թագաւոր ազգականին հետ խորհրդակցելով եւ

ժողովելով արեւելքի եւ տաք հարաւին միջեւ գտնուող հոգմնասատոյց քաղցրաշունչ զինուորներն եւ անձրեւի կայլակներու պէս բազմաթիւ զօրապետները, ճամբայ ելան:


Եւ դարմանելու համար այն առաջին վնասը զոր հասուց Վարդարանին, Արփի-Լուսաւոր սպարապետն ալ անոնց փոխ տուաւ իր ջեռուցիչ զէնքերը. որով ամէն պատրաստութիւն տեսնուած ըլլալով եկան Վարդարանը պաշարեցին եւ անոր չորս կողմի դաշտավայրերը ոռոգելով, սկսան վերէն ու ներսէն հեղեղներու թնդանթները արձակել եւ Ձմեռ-Թագաւորին զինուորները հեղձամուղձ ընել: Ձիւն-Յրտադոյն սպարապետը իր զօրականները կը խրախուսէր զէմ դնել եւ քաջաբար մարտընչել, բայց ըստ որում հետզհետէ կը շատնար խեղճուողներուն թիւը եւ շատերը փախչելու գիտելով կը կորնչէին, եւ յոյս ալ չունենալով որ նոր զօրք օգնութեան կը հասնի, յուսա հասած՝ ինչպէս սառը կրակին առջեւ՝ հալեցաւ, հոսեցաւ եւ իր զօրքերուն սակաւաթիւ մնացորդին հետ անյայտացաւ հալածուեցաւ այդ սանձաններէն:


Այն ատեն մեծ փառքով ու յաղթանակութեամբ Գարուն-Թագաւորը Վարդարան քաղաքը մտաւ եւ թշնամիներէն աւար մնացած ցրտութիւններէն մաս մը նուէր տալով Գարնանամուտ Թագաւորին եւ անոր զօրքերուն, մեծ շնորհակալութեամբ ու յարգանքով զայն ճամբայ դրաւ դէպ իր երկիրը:

Յետոյ հետամուտ եղաւ Վարդարանին պալիսպը նորոգելու եւ վերակազմելու իր զօրքերն ու զօրապետները, գործակալներով, օրինորդներով եւ նաժիշտներով մէկտեղ, զոր առաջուրնէ աւելի պճնալից վայելչութեամբ զարդարեց: Եւ իր Վարդ-Անթառամ դուստրը շատ փառաւոր իշխանութեամբ իր նախկին գահոյքը բազմեցուց:

ՉԱՒԱՐԻԱ ՄԱՐԳԱՐ ԽՕՃԷՆՑ

(Շարունակելի)





Ծրագիր հայկական եկեղեցիի մը (ձախատմաս)

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՄԸ Ի ԲԱՐԻՉ

ՄԲՆԳԻՐ՝ ՂՐԿՈՒՄԹ 1900Ի ՏԱՍՆԱՄԵԱՅ ՅՈՒՅԱՀԱՆՊԵՍԻՆ

(Ճարտարապետութեան բաժին)



«Շանգ-էլիզէի Մեծ Պալատին մէջ օտար ճարտարապետներու գործերուն տանամեայ ցուցահանդէսը կը պարունակէ շատ ուշագրաւ կտորներ որոնց մտադիր ենք մեծ մասը ծանօթացնել մեր ընթերցողներուն :

«Պիտի սկսինք օսմանեան բաժինէն, ուր կը գտնենք ծրագիր մը մեզի բարեզգիներուս համար կրկնակի շահեկան, այն պատճառով որ անոր հեղինակն եղող երիտասարդ ճարտարապետը, Պ. Արամ Թաթանճեան, մեր

Գեղարուեստից ազգային վարժարանին օտարազգի աշակերտներէն մէկն է, եւ թէ ան՝ իր յղացման մէջ՝ սահմանուած է Բարիզը օժտելու շատ մասնայատուկ կրօնական չէնքով մը, «Սուրբ Խաչ» անուանեալ հայ եկեղեցիով մը : Իր ծրագրին մասին, մեր պաշտօնակիցը հաճեցաւ մեզի տալ մէկ քանի ծանօթութիւններ զոր շահեկան կը նկատենք այստեղ ամփոփել :

«Կրօնական ճարտարապետութիւնը գրեթէ քրիստոնէութեան առաջին դարերէն սկսեալ

Հայաստանի մէջ զարգացած է : Արդէն մեր արուեստը միշտ շատ յարգելի է եղած այդ երկրին մէջ . եւ հայազգի ճարտարապետներ ու կառուցիչներ են որ կանգնած են մեծագոյն մասը այն պալատներուն որոնցմով կը հպարտանան Պոսփորի շքեղ արուեստները :


«Հայոց եկեղեցական արուեստը , որ մեզի շատ քիչ ծանօթ է : Եսաներորդ ու տասնութեկերորդ դարերուն յայտնուեցաւ իրրեւ ածանցում մը սովորական ու բնական զանգական արուեստներուն , բայց ունենալով շատ մասնաւոր նկարագիր մը , գրեթէ ոճ մը , նըրբութեամբ ու վայելչութեամբ համակուած : Անիի աներակներուն մէջ կը զտնուին կարեւոր հատակատորներ շէնքերու որ վերոյիշեալ թուականներուն կառուցուած են Բագրատունի թագաւորներէն : Այդ հատակատորներու ուսումնասիրութիւնն է որ Պ. Թանթաճեանին մատակարարած է ճարտարապետական տարրերը իր այլ ծրագրած եկեղեցիին , զոր «լուսաւորչական» անունով կ'որոչէ :

«Ծանօթ է որ այժմ Հայոց մէջ երեք դասանոց կայ . լուսաւորչական , կաթողիկէ եւ բողոքական : Լուսաւորչական եկեղեցին է որ պահեր է , դարերուն մէջէն , հին Հայաստանին ճարտարապետական արուեստի իւրները , զոր կը փափաքին փայլուն կերպով վերակենդանացնել ու հաստատել այն շէնքին մէջ սր Բարիզ պիտի կանգնուի եւ որուն կառուցումը կը մազթէինք որ մօտալուտ ըլլար :

«Պ. Թանթաճեանի ծրագրին քննութիւնը մեզի թոյլ պիտի տայ ճանչնալ այս արուեստին մէկ քանի մասնայատկութիւնները՝ ճարտարապետութեան եւ զարդարման տեսակէտով :

«Նախ , կը նկատենք գլխաւոր ճակատամասն , (թէպէտ շատ ճոխարար զարդարուած է ան)

թէ այդ ճարտարապետութեան մէջ ամբողջապէս բացակայ է մարդկային դէմքի ո եւ է արձանագործութիւն : Քանզակեալ զարդերը պարզապէս երկրաչափական են : Խաչին կրկնուած վերարտադրութիւնը անոնց տիրական մոթֆֆը կը կազմէ : Բաղմներփնութիւնը , շատ ժուժկալ , գլխաւորապէս կը ստացուի ճերմակի վրայ սեւի ընդհանուր գործածութեամբ մը եւ բազմերանգ կոխածոյ քարերու կիրարկումով , մասնաւորապէս գորշ ու դեղին քարերու , որոնք շատ առատ կը գտնուին Հայաստանի մէջ :



Յատակագիծ

կը սահմանուած է պարունակելու մեծ զանդակը , զոր տօնի օրերը միայն կը հնչեցնեն . միւս զանգակները , որոնք ամենօրեայ հնչումներուն կը ծառայեն , փոքր աշտարակներուն մէջ տեղաւորուած են :

«Լուսաւորչական եկեղեցիներու ներքնամասը ընդհանրապէս մուտ է . լոյսը հոն շատ մեղմ չափով մը բաժնուած է . պատերը մուտ գոյներով ներկուած են . արձանագործութիւնը բնաւ տեղ չունի հոն :

«Գմբէթին առանցքին մէջ ու խորը , զետեղուած է աւագ խորանը , որուն վերեւ կախուած է պատկեր մը որ տօներուն համեմատ կը փոխուի . Զատիկի օրերուն , օրինակի համար , այդ պատկերը Քրիստոսի յարութիւնը կը ներկայացնէ . տարուան օրերուն մեծադոյն մասը , պատկերը կը ներկայացնէ Աստուածածինը՝ Յիսուս մանուկը գերկն առած :

«Աւագ խորանին աջ ու ձախ կողմը, զեփեղուած են երկու երկրորդական խորաններ Գրիգոր Լուսաւորչին անուանը նուիրուած, եւ որոնց մէջ տարին անգամ մը պատարագ կը կատարուի : Սովորական պատարագը աւագ խորանին մէջ կը կատարուի : Սրբատունին մէջ, կը գտնուին նմանապէս խորաններ, մին Գարբէլ հրեշտակին, միւսը Միքայէլ հրեշտակին նուիրուած . բոլոր խորաններն ալ յատակէն բարձր դիբքի վրայ կը գտնուին . կողմնակի սանդուխներով կը բարձրացուի անոնց առջեւ :

Չարդաւորումին մէջ, խորհրդանշանները բազմաթիւ են . այսպէս, ներքնամասին մէջ ամէն կողմ պատկերացուած կը տեսնուին ազաւնիներ, իբրեւ Ս. Հոգւոյն նիւթական կերպարանաւորումը, եւանկիւններ որ Ս. Երրորդութիւնը կը ներկայացնեն, եւ որոնց մէջ տեղը աջք մը գծուած է՝ յիշեցնելու համար թէ Աստուած ամէն բան կը տեսնէ : Գմբէթին ներքեւ Հայր Աստուած պատկերացուած է սպիտակամօրուս ծերունիով մը որ հրեշտակներով, ամպերով պաշարուած է : Չարդապատկերներուն մնացեալ մասը Ս. Գրքէն տեսարաններ կը վերարտադրեն :

Աւագ խորանին վերեւը, հինգ նկարներ կը ներկայացնեն Քրիստոսի չարչարանքները, յետոյ, Յարութիւնը, Վերափոխումը, չորս Աւետարանիչները եւ Աւետումը՝ գմբէթին ներքեւ :

«Յատակը մոզաիքներով զարդարուած է, սրոնց մոթիֆները կը կազմեն ձուկեր, թռչուններ, ընդելուզուած ծաղիկներ : »

Լ'Արշիթեֆիւր Ս. Տիմիթի
(Թիւ 22, 2 Յունիս 1900)

* *

Պ. Թահթահանի այս ծրագրին վրայ Ֆրանսական քննադատի մը կարծիքը մեր ընթերցողներուն հաղորդած ատեննիս, կ'իմանանք թէ մէկ քանի ուսանայ եւ թրքահայ հարուստներ, պատասխանելով այն հրաւերին զոր երկու տարիէ ի վեր Բարիզի թագական խորհուրդը կ'ուզէ հայ հասարակութեան Բարիզի մէջ հայկական մատուռ մը կառուցանելու համար, խոստացի են կարեւոր գումար մը նուիրել որպէս զի այդ գաղափարը անյապաղ ու վայելչօրէն իրականանայ : Անշուշտ այս պահուս հայ ժողովրդին համար մա-

տուռի մը կառուցումէն շատ աւելի կենսական ու հրատապ սպաննջներ կան գոհացնելու . բայց չենք կրնար յարաբերական գոհունակութիւն մը չզգալ նորէն, իմանալով որ մեր հարուստներէն ոմանք, թէեւ իրենց դրամը չեն յօժարիր նուիրել այդ կենսական սպաննջներուն իրականացմանը, գոնէ բարեգործական հասարակ, դիւրին ու յաճախ անընդատակ նուիրատուութիւններէն տարբեր բան մը ընելու տրամադիր կը սկսին ըլլալ : Նպաստելով ազգային շէնքի մը, տեւական ու օգտակար հաստատութեան մը հիմնարկումին : Բարիզի պէս արեւելեական կեդրոնի մը մէջ կանգնել հայկական ոճով սիրուն մատուռ մը, — փոխանակ մատուռի տեղ ծառայող արդի ողորմելի խցիկին — մէկէ աւելի տեսակէտներով օգտաւէտ գործ մըն է . խնամքով կառուցուած հայկական մատուռ մը, Փրանսացւոց ոստանին մէջ կենդանի ապացոյց մը պիտի ըլլայ մեր ցեղին ինքնուրոյն գրոշմին՝ իր յատուկ ճարտարապետութեամբն ու իր յատուկ դաւանանքովը բնորոշուած . եթէ մահմետականներէն առաջ, որոնք տասը տարիէ ի վեր մզկիթ մը կ'ուզեն կառուցանել Բարիզ եւ դեռ չեն իրագործած իրենց գաղափարը, Հայերը յաջողին իրենց հիկեղեցին կառուցանել Սէնի փոխառններուն մօտ, բարոյական յաղթանակ մը տարած կ'ըլլայ մեր ցեղը : Այսպիսի ձեռնարկ մը պէտք է անշուշտ ամենամեծ խնամքով կատարուի, եւ շէնքը, ինչ ալ ըլլայ անոր ծախսուելիք գումարը, արուեստի գործ մը պէտք է որ ըլլայ՝ Հայոց ճաշակին պատիւ բերելու հանգամանք ունեցող : Կ'իմանանք որ Պ. Թահթահան իր ծրագիրը ներկայացուցեր է նուիրատու հարուստներէն մէկուն, եւ մեզի կը հաղորդեն թէ ուսանայ ճարտարագետ մըն ալ Անի զբրկուեր է տեղւոյն վրայ ուսումնասիրութիւններ կատարելով ծրագիր մը պատրաստելու համար :

Բայց քանի որ այսպիսի հաստատութեան մը կառուցման նպաստելու տրամադիր հարուստներ կան, մենք կը կարծենք թէ անբաւական ու պակասաւոր կ'ըլլար գործը եթէ միմիայն մատուռ մը կանգնելով շատանար Բարիզի հայ թագական խորհուրդը . մենք կը փափաքէինք որ մատուռին կից հիմնուէրնաւ դպրոց մը եւ փոքրիկ քլիւպ մը : Հայկական քլիւպի մը պակասը չափազանց զգալի է Բարիզի մէջ . Բարիզի Հայերը իրարու հետ, եւ Փրանսացիները բարիզաբնակ Հայերու հետ հաղորդակցութեան մէջ դնելու համար՝ քլիւպ

մը անհրաժեշտ է : Իսկ դպրոցի մը կարեւորութիւնը պէտք չունինք բացատրելու . Մուրատեան վարժարանին փայլուն յիշատակները դեռ կենդանի են, եւ այժմ առաւել քան երբեք հարկաւոր է որ Բարիզի մէջ քոլէժ մը ունենանք, ուր ոչ միայն Բարիզի հայ դաղութիւն տղաքը, այլ եւամէն կողմէ եկած հայ պատանիներ : նախապատրաստական կրթութիւն մը եւ հայ դաստիարակութիւն մը ստանան՝ Համալսարանի ընթացքին հետեւելէ առաջ : Այս բոլորը ամենամեծ դիւրութեամբ կրնան իրագործել մեր հարուստները, եթէ ըմբռնեն որ իրենց անունը իրապէս ազգին երախտագիտութեանը արժանի դարձնելու համար, հովին տարողնուած աննշանակ ու անիմաստ բարեգործութիւններու տեղ, այսպիսի անկորուստ ու բազմաբեղուն գործեր կանգնելու պէտք է որ նուիրեն իրենց դրամը :

Ա. Զ.



Ա Ղ Զ Ե Կ Ս Ե

Գերմանական փոքրիկ քաղաք մը մէկ երկու միջնադարեան բաղեղնապատ շէնքերով, շղթայակապ պարսպադռներով ու սեւ կաթողիկէով մը որ արժաթեայ երկնից տակ կը ցցէ իր գոթացի ճարտարապետութեան սուր սլաքները— ու յետոյ կարմրագոյն անոյշ իրիկնայոյսը որ կուգայ մեղմիկ ծաւալել խաղաղացեալ քաղաքին վրայ, — ահա թէ ո՛ր տեսակ տեղաստան մը կը ներկայանայ աչքիս առջեւ երբ անո՛ր կը խորհիմ : Եւ կը տեսնեմ զինքն անցնիլ արեւէն ոսկեգունած գետակին երկայնքը՝ որուն մէջ ա՛րարանոցները վերէն վար գուլարթ ստուերներ կը թափէին, հոգ տնկուած ծաղկահոտ թմբիներու գուգաչար կարգին տակ՝ որոնց ծայրերը կ'երթային հեռուն իրար միանալ : Նազելի աղջիկ մըն է ան՝ մանկական թիթեւ քալուածքով, ոսկեթուխ խրացաւոր կօշիկները հազիւ հազ հեաք կը թողուն կոպճուտ այլ հարթ գետնին վրայ : Չեռքին մէջ կը ճօճէ կապոյտ հովանոցակ մը եւ կարծես արեւուն անգամ պղբելով չ'արգիլեր անոր ճառագայթներուն որ դէմքը փայփայեն : Սիրուն, կու-

սական գլուխը կը պատեն խարտիշագոյն մշշակերպ մազեր՝ որ խոպոպիքներ կը հանեն ամէն կողմանէ : Ու թշիկները կարմրուկ են, բերանն՝ ալ ալոջի նման, միամիտ նայուածքին մէջ չեմ գիտեր ինչ կայ ուրախ որ գրեթէ չարածճի աղջկան մը կերպը կուտայ անոր : Ան կը քալէ ժպտաւէնները թոյնելով եւ ծածուկ տեղեր՝ շուարած, լուրջ, աչքը չորս դին՝ վեր կը քաշէ ծնկակապերը որ միշտ կ'իջնան : Գիշեաք կը կայնի ջաղացքի մը մօտ, որուն փերփերացայտ անիւը սեւ ու ջրաթաթախ փայտերը կը ճճուացնէ : Անիւը կը ճախրէ ջուրը ծեծելով ու ոլորցնելով դայն եւ ալջիկը կը զուարճանայ անոր նորանոր եւ անդուլ մը խըրճանքը դիտելով : Ու ես կը մօտենամ, կը բարեւեմ զինքը : Վառ ու բախութիւն մը ազատարար ցոյց կուտայ ինչի եւ քրոջ պէս կը սկսի զիս հարցուփորձ ընել :

Հիւանդ էի այն ատեն, շատ հիւանդ, անմարդահազոր, տրտում : Մշտագրգիւ ջղերս զիս կը խորշեցնէին ամենքէն : Կրելով անանուն տառապանքը որ նորահաս երիտասարդներու հոգւոյն մէջ կը նստի, ինքզինքս սաստիկ ապերջանիկ կը զգայի եւ սակայն առանց բարութիւն ունենալու, Ամենայն ինչ առիթ կուտար սիրտս մտմտքելու՝ արեւը որ պայծառ կը ցուար երկնից մէջտեղ, ծառերը որ հեծեծազին շշնջմամբ իրարու վրայ կը հակէին : Խառնագիծ կակուղ հեռաստանը որ երկրի անհարթութիւնները կը սքօղէր, մարմութք ճառագայթ մը որ անօսը ամպիմը բեհեղը կ'երփնէր՝ այնպիսի խոհեր կը թելադրէին ինձի որ ներքին այլայլութեամբ բազուկներս կը բանայի եւ անաղաղակ ճիշ մը կուրծքս ու կուրրգս կը յոգնեցընէր : Վասն զի համագոյնից գործելու ժրութիւնը սաստիկ կը նեղէր իմ անջան եւ աննպատակ հոգիս . չորս զիս կը նըշմարէի ոլորումը բիւրարբիւր առէչներու որ կը հիւսէին կենաց կապերը, այն կապերն որ մեզ ողջութիւնը բաղձալի կ'ընեն : Երբ ճաճախչներն որ մեր արեան մէջ թափանցելով մեր զգայարաններուն պարտասեալ կարողութիւնները կը զօրացընեն ու անոնց յօժարութիւնները կը բազմացընեն, երկնից ու բնութեան գեղեցիկ պէսպիսութիւնը որ ակնապարար նարօտներով մեր ուշը կը յանկուցանէ եւ ապրելու կարօտը զոր սարփմամբ թաթառուչ մննք մեզի կուտանք՝ խորհրդածութեամբ եւ վերլուծութեամբ տեսակ մը հակազդեցութեան պատճառ կ'ըլլային եւ փոխանակ ինքզինքս

յանձնելու բնատուր անխորհրդական լինելու թեան՝ կ'ատէի այդ մեղմխանքը որ զմեզ անձնիշխան չի թողուր եւ իսկապէս նողկալին հաճելի կ'ընէ մեր քմաց : Կան մարդիկ, եւ ես անոնցմէ եմ, որոնց գաղափարներն իսկ բաւական են իրական ցաւեր ներշնչելու :

Ան կը հասկնար զիս, թեւեւ չփոթ եղանակաւ՝ սակայն վերջապէս կ'ըմբռնէր թէ ո՛ւրիշ կը ծագի թախիծս : Եւ անմեղութեամբ ի կիր կ'արկանէր բոլոր իր կնոջական միջոցները զիս փրկելու համար անոր ծանրութենէն : Տառապանքը միշտ շահեկան կ'երեւայ կնոջ, եւ ամենքն ալ առանձին հակամիտութիւնն ունին սփոփիչն ըլլալ ուզելու անոնց որ վըշտահար են : մասնաւորաբար կը սիրեն այդ դերը : Իրենք զիրենք միշտ դժբաղդ կը զգան, եւ անոնց սիրտը այնչափ լեցուն է գաղտուկ մորմոքներով որ լուծեամբ առապող հոգին հասարակօրէն շուտ մը անոնց հետ կը համաբանի : Աշխարհ զանոնք կեղծելու կը բռնադատէ իր պարսաւադէտ մանրախոյզ դիտողութեամբը եւ այնչափ կը սոսկան չարամիտ մեկնութիւններէ որ ստիպուած են շատ անգամ իրենց ներքին զգացումը բոլորովին ծածկել ու լուի : Եւ որո՞ւ կրնան դիւրութեամբ սիրտ բանալ : սեռակից մը թերեւս նենգութեամբ իրեն խաղ դարձնէ՛ լսածը, իսկ էրիկ մարդոց հետ այդպիսի մտերմութիւն մը չ'ուշանար սիրահարութեան առաջնորդելու : Ամուսնացեալ կին մը, աշխարհիս ալ աւելի փորձ ըլլալուն, կը տեսնէ խութքը եւ ըստ այնմ կը շարժի : Սակայն աղջկան մը սրտին աւելնը շատ աւելի յանկարծական, շատ աւելի անխորհուրդ աղմանց կը հպատակեցնէ զանի, եւ անոր համար իսկ աղջկան մը ձգածութիւնը անգին րոպէներ կը շնորհէ անկեղծութեան եւ փափկագոյն յուզման : Սակայն շատ քիչերը գիտեն զանոնք վայելել եւ շատ քիչերը արժանի են աղջկան մը վճիտ նայուածքին :

Բոլոր այս ծանր խորհրդածութիւնները կ'ընէի ես ինձի՝ աւելի լաւ ըմբռնելու համար զօղած կապակցութեանս փափուկ հանգամանքը եւ ամենայն զգուշաւորութեամբ կը դիտէի այդ սիրուն հոգեակին սլացքները, ինչպէս կը դիտենք թռչնիկ մը որ մեր լուսամբաին մօտ ոստոստել ու ճռուողել կուգայ եւ զայն չխրտչեցնելու համար շունչերնիս անգամ կը զգայենք : Ես ալ անոր չափ գեռահասակ

էի եւ բնականաբար իրարու հետ շուտով յարմարեցանք : Անոր ծանօթութիւնն ըրի հասարակաց պարտէզին մէջ ուր մօրը եւ բարեկամուհւոյ մը հետ միասին նստարան մը բռնած էին աւազանին մօտ : Պտոյտէ մը վերադարձեր էին եւ հակառակ տաքուն սպիտակ բուրդ մը անոր ուսերը կը ծածկէր : Անոնց զիմացը նստած վէպ մը կը կարդայի եւ քիչ մըն ալ խուժըր կը դիտէի : Մայրը տարիքոտ կին մըն էր, սակաւ ինչ կուզ այլ ծիծաղերես, ու սրտանց կը խնդար երկու աղջիկներուն կատակասէր զրոյցները լսելով : Ստէպ ստէպ աղջկանը կը նակին բուրդը կը շտկէր որպէսզի վար չսահի անոր ընդոտ շարժումներէն, մանաւանդ որ աւազանէն բարձրացող զովութիւնը կրնար վնասաբեր ըլլալ : Յետոյ ձեռքով մէկզի կը հրէր անոր ուրբուն խոպոպիքները, որպէս զի հրաւ վառ այտերը չնեղուին : Եւ կը տեսնէի անոր տիկներուն աշխոյժ շփումները մանրախիճ աւազին վրայ՝ որուն հետ կը խաղային շառաչմամբ ու նօսը զգեստին խորհրդաւոր ծալքերը իրարու մէջ մտած սրունքներուն բոլորը : Շատրուանը իր բարակ կաթիլներուն արծաթածայր գարգամանկը կը ծածկէր եւ կը նմանցընէր աղջկան մրմնջաւոր խօսուածքը, մեծաթերթ շուշանները կը խնկէին աւազանին բոլորած իր եզրը թաղարներու մէջ փթթած : բաւական չէ՞ր ախորժանօք բազմելու համար այդտեղ տօթագին օրով :

Սակայն միւս օրիորդին չեմ գիտեր ինչ մէկ զուարճալի դիտողութիւնը՝ գիրուկ պարոնի մը վրայ, այնչափ սաստիկ շարժեց անոր ծիծաղը, որ անկարող զայն մեղմացնելու՝ կոնակը նստարանին փակցուց եւ սպիտակ բուրդը ջուրը ինկաւ : Շատրուանին բոլորանի ցնցղկած կայլակները վէտ ի վէտ կ'երերցընէին ողորկ ջուրը որ բուրդը քաշեցին տարին, ու ջուր ծածկելով ծանրացաւ սկսաւ յատակն իջնել : Երեքը միահաղոյն ճիչ մը արձակեցին եւ աղջիկները վազեցին ծառի ճիւղ մը, փայտ մը ճարելու համար որպէսզի վտանգեալ առարկան ազատեն : Բայց ես արդէն տեղէս ելեր էի եւ քաջութեամբ թեւս մինչեւ կէսը ջրին մէջ խութելով դուրսնանցի խխում թաթախ բուրդը : Շնորհակալութիւն, ուրախութիւն եւ շատ ալ պատիւ ըրին ինձի :

Այսպէս կրնամ ըսել վիպասանական եղաւ ծանօթութիւնս այդ օրիորդին հետ : Թէպէտեւ զանի չէի ազատեր սանձակոտոր երիվարի մը մահառիթ արշաւումէն եւ ոչ ալ փրփրաղէզ

ալիքներու կատաղութենէն՝ այլ միմիայն անոր սիրելի բուրգը աւազանի մը խորերէն որսացի, սակայն այդչափն ալ բաւական հաճելի անցաւ որ խօսքը երկարօրէն դարձնելէ ետքը թրջած թեւիս վրայ, բոլորովին գերմանական հոգածութեամբ. վերջապէս իրենց տունը հըրաւելցցին — այս էր արդար հատուցումս: Եւ ես ալ՝ հակառակ սովորութեանս՝ զացի անոնց:

Ո՛րչափ մեծ եղաւ անոնց խնտումը երբոր իմացան թէ իտալերէն գիտեմ. առանց շատ աղաչել տալու խոստացայ օգնել իտալերէնի դասերուն զոր նոր կը սորվէր:

— Ես ալ, ըսաւ անիկայ, իբր փոխարէն պիտի աշխատիմ զձեզ զբօսցընել, վասնզի կը տեսնեմ որ միշտ տրտում էք:

Սկսայ ծիծաղիլ եւ ան շիկնեցաւ: Անկէ ետքը երկու օրը հեղ մը զիրար կը տեսնէինք. զիս կը յանկուցանէր իր շնորհալի եւ անսեթեւեթ կերպովը, քնքոյշ ամենէն չընչին մանրամասնութեանց մէջ: Ի՛նչ սիրուն էր տեսնել անոր կաթով ելակ ուտելը կանանչ պնակներու մէջ, շրթներուն անկիւնները կը ձերմկնային՝ ախորժափրութիւնը ամբաստանելով, եւ երբ մարգաստաններու մէջ քառաթերթեան բախտաբեր առուոյտը կը փնտռէր՝ սիրտ հատցընելով, եւ զայն գտնելէն ետքը անոր վրայ իտալերէն գորովալից բառեր կը գրէր հօրը խաւրելու համար՝, ր բացակայ էր քաղաքէն՝ Թանաքի բծիկներ կը մնային վարդագոյն եղունգներուն ծայրը, եւ որպէս զի չտեսնեմ զանոնք՝ մատները ափին մէջ կը ծալլէր:

Իտալերէնի դասերը կ'ընէինք պարտէզը՝ տերեւոցի մը տակ. մանրիկ բերանրը կը խօսէր ու կը ժպտէր, մանիչակ աչուրները կը նայէին ու խոյս կուտային. — Լրջութեամբ կը հակաձռուէր ինձի հետ այնպիսի խնդիրներու վրայ, որոնց մասին զիտմամբ տարօրինակ, անլուր գաղափարներ յայտնելով զանի տակնու վրայ կ'ընէի:

— Է՛հ, ըսի իրեն յանգամ մը, յայտնի կ'երեւայ թէ պղտիկ աղջիկ մըն էք, երախայ մը:

Գլուխը կախեց լրջութեամբ, մէկ երկու կաթիլ արցունք կաթեցան թարթիչներէն, որպէս թէ առաւօտուն ցօղալից ծաղիկ մը թօթվէիր: Բայց տեսնելով որ աւելի կը ծիծաղիմ, ինքն ալ ինձի միացաւ եւ աչուրները սրբեց մոմաւով:

— Չա՛ր:

Պտոյտ մը ըրինք կառքով մինչեւ մօտաւոր

ջրվէժը: Փրփրայոյզ ու շառաչահոս ջուրը տեսնելով՝ անի ծափերն իրար զարկաւ տղունման եւ ուզեց որ վար կրճին մէջն իջնանք ուր կը գահավիժէր լեռնածուն քարէ քար աստիճանաբար ցատքելով: Հող այնպիսի աղմուկ մը կար որ ստիպուած էինք պոռալ զիրար լսելու համար, վասն զի ջրվէժէն ետքը հեղեղատը կը գոռար անագին ոստումներ ընելով ժայռի հատրններու վրայ որոնց բոլորը կը պտուտէր նախ քան յառաջ խոյանալը: Մացառալից լեռնորմին տակ ջուրը մաքուր ու սեւ յատակին գոյնը առած հանդարտ կը կենար գեանաքարերու մէջտեղուանքը: Այդ քարերուն վրայէն քալելով մօտեցանք վիժանքին: Թոնի ձեռքը ճիւղ մը ունէր զոր անոր տակ երկնցուց այնպէս որ ջրի տարափ մը երեսս ի վեր ցայտեց: Ա՛խ սատանայ — եւ այդ հայերէն բառն ալ սորվեցաւ:

Իսկ ի դարձին սաստիկ անձրեւայոյզք մը բռնեց զմեզ կառքին մէջ. հովանոցը անբաւական կուգար երեք հոգեոյ, եւ ի զուր կրցածնուս չափ իրարու կը մօտենայինք: Թոնի կը խընդար ու կը խնդար, քթիկը երկնցնելով անձրեւին եւ յետոյ շուտ մը ջրակաթ երեսը կը պատսպարէր հովանոցին տակ, բայց կաթիլները ծոծրակին վրայ կ'իյնային ու կը խրտաղբացնէին զանի: Փայլակներ կը լուսաւորէին մեր երեսները եւ որդաւմը կը պայթէր ու մանկամարդ աղջիկը անվախ երեւնալու համար անոր գոռալը կը ձեւացնէր:

Բոլորովին ազատ էինք որովհետեւ անոր մայրը բոլորովին զմեզ իրարու վստահացած էր:

— Չուարճացէ՛ք, տղաքս, կ'ըսէր մեղի, եւ երեք շրջադաշտութեանց արգելք չէր ըլլար: Իրիկուն մը լուսահանդէս կար հասարակաց պարտէզը, հոն գացինք: Մտե՛ ծառ վենետական լապտերներու դրասանգներ կախած էին եւ երաժշտութիւնն ալ կրցածը կ'ընէր: Ան ձեռքս բռնեց ըսելով թէ կրնայինք կորսուիլ բազմութեան մէջ ու այն գիշեր խենթի պէս խնդացինք ամէն մարդ ծաղրելով մէջերնիս:

Կա՞ր արդեօք սիրոյ նշմարանք մը զոր այդ անմեղ մտերմութիւնը պարարկէր: Կարծեմ երկու կողմէն ալ շատ չէինք մտածեր ատոր — գոհ էինք այսպէս քով քովի վազվզելով: Անգամ մը ուզեցի անոր վարդեր նուէրել, ծանր կերպ մը առաւ ու մերժեց:

—Չեմ գիտեր, կ'ըսէր, ինչո՞ւ համար ձեզի հետ այնպէս չեմ վարուիր ինչպէս ուրիշ եւրիտասարդներու հետ կը վարուիմ: Գիտէ՞ք որ ես շատ ծաղրող եմ եւ ատոր համար ալ անտանելի . բայց զձեզ չեմ, չեմ կրնար ծաղրել:

Եւ ոտքը գետին կը զարնէր բարկութեամբ:

Սակայն հողին յայտնութիւն մը ըրաւ: Կը մօտենար այն օրը որ քաղաքէն պիտի մեկնէի. իրարու առաջարկեցինք պտոյտ մը ընել անտառը: Եւ միջօրէէն ետքը անցանք գետակը որ անտառը քաղաքէն կը զատէր եւ միեցանք խորը:

Լոռութիւնն ու անդորրութիւնը զմեզ մէկէն ի մէկ ամփոփեցին, սկսած ընդհատեցինք մեր խօսակցութիւնը: Դղքիներ, հացիներ կը բարձրանային իրարու մօտ եւ հետզհետէ աւելի խիտ: Երկինքը կամաց կամաց կը փակուէր ամէն կողմանէ եւ լոյսը, որ մեր շուշին կը ծաւալէր, սաղարթախիտ ոտերու մէջէն մաշուելով անոյշ կանանչ գունով կը ճփար: Եւ հեռուէ հեռու ուր ա'լ միայն ծառերու բուները զատ զատ կը տեսնէինք, գաղաթները մէկ մեծապանդուած գմբէթ մը յօրինած՝ մթութիւնը գիշերային կ'երեւար: Երբեմն անտառը կարծես երկայնութեամբ կը ճեղքուէր եւ երկնից կապոյտը ակնապարար կը շողար. բայց շուտ մը բարձրաբերձ կատարները կը ծրարէին զայն եւ աներես ոյթ կ'ընէին: Արեւու ճառագայթ մը երբ կը ջանար մինչեւ մեզի հասնիլ այդ հիւսուածքին մէջէն գոյնզգոյն կը ցոլար մեր աչացը եւ կը կաքաւէր տերեւներու շարժմանց համեմատ: Տեղ տեղ ճածանչ մը չոր ճղի մը զարնուելով դարձեալ դէպուղիզ կը ցայտէր ու կը վերաւորէր մեր տեսանելիքը:

Անցած պահերնուս մէկ երկու ծառեր գլուխներն երերցուցին՝ իբր թէ նշան ընէին իրարու թէ մարդիկ կուգան: Եւ այս տպաւորութիւնը թէ անոնց խլրտումները ծածուկ միտք մը ունէին, ա'յնչափ իրական էր որ կ'ուզէինք գուշակել զայն: Ինչո՞ւ այդպէս լռախոհ կայնած էին ծառերը երբ մենք կ'անցնէինք, արդեօք ի՞նչ կը հնչնային մեր մասին, ինչո՞ւ երբեմն գլուխ կը թօթուէին: Եւ թէպէտեւ մեր խիղճը հանդարտ էր, սակայն տակաւ կ'այլալայլէինք այդ լռին վկաներուն դիմաց: Անզգաւաբար իրարու ուս ուսի տուինք եւ ձեռք ձեռքի բռնեցինք, բայց չհամարձակելով խօսիլ . իրօք ծառերը կերպարանաւոր էին, ոմանք ալեւորներու պէս մտածկոտ եւ քամակակոր կը

կքէին, այդ սէզ ու կանգուն: Դէպ ի աջ սարակի մը կողմն ի վեր իրարմէ բարձր կարգերով տեղերնին բռնած էին եւ դասի մը դպիրներուն նման օրհներգութեան պահը կը սպասէին երկիւղածութեամբ: Բայց ամենեւին ճայնիկ մը չկար, եւ կ'ապշէիր որ այդ մեծատարած անտառը կրնար այսպէս համահաւասար լոռութիւն մը պահել: Հազիւ հազ շշուկ կ'ելլէր երբ թռչուն մը ծառէ ծառ թռած ատենը ազազուն տերեւի մը դպշելով կը փրցնէր զայն եւ ոլոր ոլոր դառնալով գետին կ'իջնար: Հազիւ հազ տղանքը կը լսուէր ճճւոյ մը որ ծաղիկ կը փնտռէր: Եւ երեւակայութիւնը կ'ընդարձակէր, խորհուրդը կը փնտռէր այս լոռութեան, այս անհուն խորհրդածութեան: Արդեօք ի՞նչ գաղտնիքներ ունէր անտառը — ճամբո՞րդ մը որ անցած դացած ատենը աւազակի մը դանակին տակը ինկած էր — ու կը սարսռայինք: Ո՞վ գիտէ ուրիշ ինչեր ալ պահուած էին անոր թաւ խորքին մէջ, եւ ծառերը, խօսելու անկարող սարսափմամբ կը յիշէին:

Նղնիկ մը եւ եղնորթ մը որ մեր առջեւէն սրացան անցան զմեզ արթնցուցին: Թոնի ձեռքը քաշեց, ան ատեն զգացի անոր անոյշ գաղջութիւնը, եւ սկսաւ երկու անասունները հալածել որ անյայտ եղան: Յետոյ ալպեան մանիշակներ եւ ձորաշուշան փնտռելու ելաւ ու բարձրաձայն երգ մը հնչեցուց: Հիմա անտառը զուարթացած էր եւ ասդին անդին կը վազէինք ծաղիկ քաղելու: Ոսկեծաղիկն իր փայլուն շիզները մօտ առ մօտ կը փթթեցնէր եւ մարգոտ տեղուանք սապտուկը կը բանար ծաղկները որ կարծես մատով հողին մէջ խութուած էին: Յաջողեցանք մանիշակի երկու փոքրիկ փունջ կապել որոնցմէ մին իմ կուրծքս դրաւ եւ միւսն ալ իրը: Բայց փնտռուածքին ժամանակ բաւական յառաջացած էինք եւ ճամբան յանկարծ ոլորելով զմեզ եղեւնաստանի մը մէջ գտանք:

Այդտեղ եղեւնիէ զատ ուրիշ ծառ չէր աճեր. ասոնք ամէն կողմ ետեւէ ետեւ կը բարձրանային, մինչեւ իսկ ապառաժներու, խորխորատներու կողերուն վրայ կը վարսէին իրենց արմատները եւ յամառութեամբ կը սլաշտպանէին իրենց վտանգաւոր դիրքը: Ռետնի ախորժելի հոտ մը կը բուրէր անոնցմէ արեւուն ճառագայթներուն ներքեւ՝ որոնք հիմայ կրնային նրբին ու սլաքածեւ տերեւները թափանցել: Մոպազարդ սարերը աստիճան աստիճան կը վե-

բանային մինչեւ բարակ ու ծածանուտ կատարները. Գեանին վրայ խոտ չէր բուսներ, այլ լեռի եւ կարմրագոյն հող գոր կը ծածկէր հողմընկէց կոնգոմներու եւ եղեւնոյ ասեղներու թանձր խաւ մը: Եւ ատիկա գունաթափ գորգի մը նման ծայրէ ի ծայր կը պաստառէր անտառ: Անվախճան զանխուլ մրմունջ մը, ինչպէս բիւրաւոր ճճիներու տղոց, կը լեցնէր այդ առանձնանիստ վայրը, ուր աշխարհ իրաւցնէ կը լմնար:

Կայնեցանք. ա՛լ յոգնած էինք: Թոնի եւ դեւնոյ մը ամենէն ցած ճիւղը իրեն նստաբան ընտրեց, եւ ալ անոր մօտ քարի մը վրայ ինկայ: Խոնջ ոտուքները ծնկուքներուս կը թընցուց հանգչեցնելու համար զանոնք: Գրպանէս գերմանացի բանաստեղծի մը գրքոյկը հանեցի եւ սկսայ վերձանել անոր անտառի երգերը: Խորիմաստ զգայուն տողերը զմեզ տրամութեամբ կը համակէին, — անմտերիմ մենութեան, անգորով լքման ամլացուցիչ եւ խորչատիչ վիշաք կ'երգէր ան: Ծառագայթ մը իջած էր կարգացած թերթին վրայ՝ որ մատներուս մէջ կը դողողար: Աղջիկը, գլուխը ծառին յեցած՝ աչուքները փակեր էր ու անանկ մտիկ կ'ընէր: Ոտքերը ծնկուքներուս կը ճընչէին եւ ես չէի համարձակեր շարժում մը ընելու, վախնալով որ զանոնք մէկգի կը քաշէ: Նորօրինակ յուզում մը կ'արբեցնէր զիս: Յանկարծակի աչուքները բացաւ. հովը կ'անցնէր անտառին վրայէն. — բազմագոյն, զօրաւոր ներզայնակութիւն մը բարձրացաւ: Անբաւ միաճայնութիւն մը ողբական որ զմեզ անասելի վրդովմամբ յափշտակեց — ու բարձրացաւ, բարձրացաւ՝ հեռաւոր միջոցներու խորքը սաւ հեցաւ նուազեցաւ փրփուրներու հազիւ նուազելի շնչմամբ: Աւելի խոր լուսութիւն մը տիրեց — անտառն իր ցաւատանջ հոգին փչեր էր:

Ա՛խ, Աստուած, ինչ կը զգայինք մենք երկուքս — երիտասարդ, խանդոտ հոգիներ, զորոնք բախտին մէջ քմահաճոյքը միացուցեր էր այդտեղ: Կարելի՞ էր այդ առանձին տեղը զիրար միայն գտնելով՝ անգիմադրելի, զգլխիչ տենչանքը չունենայինք իրարու գիրկը նստուելու, զիրար յիմարաբար սեղմելու: Ու միմիայն մեր կրից չափազանց բռնութիւնը արգելք եղաւ ասոր:

Արեւը կը խոնարհէր՝ եւ իրիկունը շուտով կը թանձրանար անտառին մէջ: Գետինը կարմրած էր եւ հիմա ճառագայթները կոծրգ-

ներն ի վեր կը մագլցէին: Չայները կը շատնային հիմա եւ քանի մուծը կոխէր եւ ճառագայթներն ալ դէպ ի գագաթները վերանային, այնչափ անձկալից խուճապ մը նշմարելի կ'ըլլար բոլորնիս: Գետնասփիւռ տերեւները երբ կը խշրտէին, օձերու սոսկում տուող սօսափիւն մը կը հանէին: Ականջնիս տնկած, չորսդինիս կը բռջէինք անդադար ճառագայթները ելեր հասեր էին ծառերուն գլուխները՝ որոնց բացարձակ ամաններու երեւոյթը կուտային: Իսկ վարը բոլորովին խաւար էր:

— Պէտք ենք սուս զառնալ, ըսաւ Թոնի:

Չարմացած իր կողմը դարձայ. մթութեան մէջ բերը կը փայլէին եւ երեսը միագոյն կ'երեւար Տեղէն չէր երերացած:

— Ա՛խ, բարեկամս, կրկնեց ան յոգնած ու բեկբեկ ճայնով մը որ իրիկունս սոսկ այդպէս կը հնչէ, ի՛նչ տարօրինակ բան է՝ մեր կեանքը: Վաղը՝ ամենափոքրիկ սին զբազմանց անձնատուր՝ պիտի չյիշենք, գոնէ այսպէս ուժով պիտի չյիշենք այս իրիկունս հրաշալի զգացումները որ զմեզ տակնուվրայ ըրին: Եւ սակայն ատա՞նկ ըլլալու էր. ապրելու խեղճուկ, տափակ սովորութեանց համար մոռնալո՞ւ էինք հոգեւոր այնչափ անուշ հեշտութիւն: Ահա քիչ օրէն իրարմէ ի սպառ պիտի զատուինք, արդեօք բնաւ երբեք հոգ պիտի տանի՞նք թէ ինչո՞ւ համար դիպուածը զմեզ՝ խոհուն, այսչափ սաստիկ զգացող արարածներս՝ այս աշխարհիս վրայ իրար մօտեցուց եւ դարձեալ հեռացուց: Ինչո՞ւ համար իրարու վրայ անտարբերութեամբ մտածենք եւ միշտ այս դօրաւոր քաղցր զգացումները չկարենանք ունենալ:

Ապշած մտիկ կ'ընէի. ո՛չ, ա՛լ ան իմ առաջուան ճանչցած կատակասէր թեթեւախօս աղջիկս չէր: Այդ թախճալից խօսքերը շատ ու շատ խորին միտք մը ունէին եւ անոնց վրայ ուշադրութեամբ խորհիլը պիտի ազթէր կատաղութեան, անխելահասութեան սարսափելի ցաւ: Կատաղութիւն որ բան մը չենք կրնար ձեռք ձգել, կամք չունինք, վայրապար են մեր ճիգերը. անխելահասութիւն որ այս բարբարոս օրէնքներուն ինչ ըլլալը չենք կրնար հասկնալ:

Պատասխան պիտի տայի երբ որսափողի մը լայն դայլայլիկը ծաւալեցաւ անտառին խորերէն: Դանդաղ եղանակը ելեւէջները կը պարզէր կամաց կամաց՝ սրբազան կտաւի մը հիւն ծալքերուն պէս: Առաձգական հնչիւնները խորէ խոր անդունդէ անդունդ կը սահէին եւ

դարձեալ իբր թէ ներքսագոյն ալքերէ սակաւ առ սակաւ վեր կ'ելլէին, կ'ելլէին ու աղօտացած կը սլանային դէպ ի երկնից աստղալից եւ անօտր ամպերը գորոնք հիմա լուսինը կը լուսաւորէր եւ մարդարիտ կը թափթփէր անտառին տերեւներուն վրայ: Որսափողին ձայնը կը ցածնար, ուղղութիւնը կը փոխէր եւ թաւուռքին խորը կը քաշուէր: Հաւասարաչափ փշուռներ խաշածեւ իրարու կը հանդիպէին օդին մէջ եւ կը թրթռացնէին զայն. աւելի հեռուն երկրորդական արձագանքներ ալ կ'ելլէին անձանօթ խորշերէ, ու ձայները, տխրացած, լալագին, նորէն կ'երթային իջնալ թաքշիլ:

Ուժգին լաց մը զիս ոտքի հանեց: Թոնի ամբողջ մարմինը ցունց կուտար եւ դէպ ի ետեւ կ'իջնար ճիւղէն: Վախցած, սարսափած որ այդ ամայի տեղը պիտի մարէր, ջղաձգութեամբ թեւերուս մէջ առի զանի եւ սկսայ բոլոր ուժովս դէպ ի գետակը վազել որպէս զի ջուր սրսկեմ երեսին: Ճամբան քիչ քիչ հանդարտեցաւ. անկարող խօսելու՝ կը թողուր որ կրեմ զինքը, գրեթէ քնացած: Վզին ճարմանդը փրթեր էր ցնցուռներէ եւ զգեստը կէս մը բացուած, երկու մանրիկ ծոցերը իրարու մօտեցած հազիւ նշմարելի կ'ըլլային շապկին կարմիր ժապաւէնին մէջէն: Ալոջի նման բերանը կուրծքս կը տաքցընէր:

Ձանի խոտին վրայ գրի: Երբ կըցաւ ոտքի ելլել, արդուզարդը շտկեց եւ թեւ թեւի ճամբայ ելանք դէպ ի քաղաք:

Բայց չէինք ուզեր տուն վերադառնալ, ճամբուն երկայնքը այնչափ անուշ կը բուրէին թմբինները որ զմեզ կ'արբեցնէին: Ակամայ կամօք հասանք վանդակադրան մօտ այն տան ուր կը բնակէր Թոնի:

Դուռը բացի. ներս չմտած ձեռքը բռնեցի:

— Մնաք բարով, ըսաւ ան:

Ուժ չունեցայ պատասխանելու:


— Մնաք բարով, կրկնեց դարձեալ ձեռքս պինդ պինդ սեղմելով:

Չգալով որ ալ կարող չեմ ինքզինքս զսպել՝ փախայ:

«Վազը՝ ամենօրեայ սին զբաղմանց անձնատուր՝ զիրար պիտի չյիշենք» Ո՛չ, կը յիշեմ. կը յիշեմ մանաւանդ այն պագիկին համար զոր չառի— ան ինձի յաւէտ անձանօթ մնաց: Եւ ատոր համար իր վրայ միտքս եկած

ամենէն փոքրիկ մանրամասնութիւններն անգամ, որոնց քանի մը հատը ջանացի գրել, խաղաղ, պատարուն խանդաղատանք մը կը ներշնչեն ինձի: Եւ կ'երագեմ. այդ խռովալից բոպէն գուշակել կուտայ կաթոգին տարփում մը, բնական անդիմադրելի հակում մը, — վասն զի ատեն չեղաւ ո՛չ ստույթիւն տեսնելու, ոչ կեղծիք եւ ոչ ալ դրժանք: Այո՛, լաւ է այսպէս. գոնէ ներելի է ինձի գերագոյն պատրանօք խորհիլ որ թերեւս ես ալ խորին եւ անկեղծ եւ անարատ սիրով մը սիրուեցայ:

ՎԱՀՐԱՄ ԱՎԱՃԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆՔՐՈՒ ՆԻԿ

— 0 0 0 —

Հոգեհանգիստ ի յիշատակ Գ. Չանչեանի. — Բարիզի Հայոց մատրան մէջ, Չանչեանի մահուան լուրէն երեք շաբաթ յետոյ, կատարուեցաւ հանգիստը հոգեհանգստի արարողութիւն մը ի յիշատակ տաղանդաւոր հրապարակագրին եւ մեծ բարեգործին: Բարիզի հայ գաղութին հոգեւոր հովիւ Վրամշապուհ քահանայ Գիպարեան պարզ, իմաստալից եւ զգածեալ քարոզով մը բացատրեց կարեւորութիւնը կորուստին զոր կը կրէ հայ ժողովուրդը յանձին Գրիգոր Չանչեանի:

Անարդ Ֆրանս եւ Բարիզի Հայերը. — Յունիս 12ի շաբաթ իրիկունը, քաֆէ Վոլթէրի մէջ, ի պատիւ Անաթոլ Ֆրանսի հացկերոյթ մը տրուեցաւ «Անահիտ»ի խմբագրութեան ձեռքով կազմուած: Քսանի չափ Հայեր ներկայ էին, որոնց մէջ կը գտնուէին Պ. Պ. Հ. Առաքելեան, Տր. Չալեան, Միքայէլ Յովհաննէսեան, Յ. Իսաքէնտէր, Ա. Էգնատեան, Ռ. Մարկոսեան, Ե. Մանուէլեան, Վ. Սվաճեան, Է. Շահին, Տր. Քօլօլեան, Ա. Իբէկեան, Մ. Միհրըզատեանց, եւն: «Անահիտ»ի տնօրէնը հակիրճ բաժակաճառով մը հայ ժողովրդին երախտագիրութիւնը յայտնեց Փրանսացի մեծ գրագէտին՝ Հայոց խնդրոյն բերած իր թանկագին աջակցութեանը համար: «Առաջ, ըսաւ, ձեր պեղեցկադիտական հոյակապ գործին համար, ձեզի նկատմամբ հիացում ունէինք լուկ. հիմա որ մեր ցաւերուն անկեղծ ու պերճախօս թարգմանը կը հանդիսանաք ձեր երկրին մէջ, մեր հիացմանը կը միանայ խանտաղատագին սէր մը

ձեզի նկատմամբ . կը պարպեմ բաժակս ձեր կենացը եւ այս մեծ երկրին կենացը , որուն ազնուագոյն յատկութեանցը ամենէն փառաւոր ներկայացուցիչներէն մին էք դուք» . Անաթոլ Յրանս մէկ քանի յուզեալ բառերով իր ուրախութիւնը յայտնեց Հայերու կողմէ իրեն ցոյց տրուած այս մտերմական , զորովագին համակրանքին համար , եւ խրախուսանքի ու կազդուրանքի ֆրազով մը սրտապնդեց իր ասպընջականները . «Ձեր ցեղը յաջողքը է , ըսաւ , հակառակ որ ամենէն դժուարին ու ապերախտ կացութիւնը իրեն վիճակուած է եղեր միշտ , պահպանել իր ամենէն ազնիւ , ամսնէն մաքուր ձիրքերը . ճամբու վրայ մնացած , բազմաթիւ ազգերէ կոխտուած , կրցեր է նորէն մինչեւ այսօր պահպանել իր լեզուն , նկարագիրը , աւանդութիւնները եւ հաւատքը ինք իր վրայ . չպիտի կորսուի ան ուրեմն . կը մաղթեմ անոր լաւագոյն ապագայ մը , եւ այդ ապագային կը պարպեմ բաժակս »

Այդ երեկոյթին մէջ Անաթոլ Յրանս առիթ ունեցաւ տեսնելու հտկար Շահինի փորագրանկարներէն մէկ քանին , եւ խորին սքանչացում մը յայտնեց երիտասարդ արուեստագէտին շատ հզօր տաղանդին համար . փափաքեցաւ անոր գործը աւելի ընդարձակօրէն ճանչնալ . երեկոյթէն մէկ քանի օր յետոյ , Շահին իր բոլոր գործերը տարաւ Անաթոլ Յրանսին ցոյց տալու . եւ խնդրեց աչկից իր կենդանագիրը փորագրել . Յրանս հաճոյքով հաւանեցաւ եւ Շահին արտադրեց բլանշ մը որ իր ամենէն փափուկ էջերէն մէկն է . Յրանս այդ բլանշէն օրինակ մը նուիրեց Շահինին՝ հետեւեալ ձևով «Առ հտկար Շահին , շնորհակալ ըլլալով իրեն՝ որ զիս այնքան շնորհով ու բարեացակամութեամբ պատկերացուց եւ հիացումս յայտնելով իր այնքան խորունկ տաղանդին համար » ու խնդրեց Շահինէն որ յանձն առնէ պատկերադարդել իր մէկ անտիպ վէպը որ պիտի չբատարակուի ի մօտոյ սակաւաթիւ օրինակներով քաջուած արուեստագիտական շքեղ տպագրութեամբ մը :

— Հայերը Տիեզերական Յուզանադէսին մեջ .
 — Հայ ցեղը , թէպէտ չունեցաւ իրեն յատուկ մասնաւոր բաժին մը Յուցահանդէսին մէջ , շատ պատուաբեր դիրք մը գրաւեց սակայն այնտեղ իր այլ եւ այլ բաժիններու մէջ տարտղնած ուժերովը : Մեր ընթերցողները գիտեն որ հունգարական եւ պարսկական բաժիններուն , — որոնք ցուցահանդէսին ամենէն շահեկան մասերէն համարուեցան — բնդհանուր յանձնակատարները երկու Հայ էին , Պ . Պելա տը Լուբաչ եւ Քիթապճի խան : Պարսկական բաժնին մէջ ամենէն աւելի ուշադրութիւն գրաւող ցուցագրութիւնը Հայու մը , Պ . Տիգրան Գէլէկեանի

հաւաքածուն էր պարսկական հնութիւններու , հաւաքածու որ մեծ գովեստներով գնահատուեցաւ միջազգային մամուլին մէջ . Պ . Գէլէկեան «Ժիւսի»ին անդամ ընտրուեցաւ . եւ Շահը խախտութեան տիտղոս շնորհեց իրեն : — Ազամանդի ցուցագրութեան մէջ առաջին տեղերէն մէկը բունց Հայու մը , Պ . Ա . Էգնաեանի շքեղ հաւաքածուն , որ բարձրօրէն ներբողուեցաւ մասնագէտներու կողմէ ոչ միայն կտորներուն հազուագիտութեան եւ գեղեցկութեան այլ եւ հատանումի մասնաւոր եղանակին համար զոր Պ . Էգնաեան հնարած է . — Իտալական բաժնին մէջ նշանակելի դեր մը խաղացած է հայազգի անձնաւորութիւն մը , իշխան Ապրօ Բագրատունի : Սերպիական բաժնին գոհարը կազմող սերպ ցեղագրական մուսէոնը , որ հըրաշակերտ մըն է համբերատար ու թափանցող ուսումնասիրութեան եւ արուեստագիտական համադրութեան , գործն է Հայու մը , Պ . Իսքէնտէր Մալխասունի (*) . — Ռուսական բաժնին մէջ մեծ տեղ մը կը գրաւեն Հայերը , որոնք ցուցադրած են ճարտարարուեստի զանազան արտադրութիւններ : — Տաճկական բաժնին մէջ զլիաւոր նորութիւններէն մէկն էր Պօղոս փաշա Նուպարի հնարած ելեքտրական ինքնաշարժ արօրը : — Արուեստի մէջ Հայոց դիրքը նմանապէս փայլուն է եղած : Նկարչութեան ուսական մասին մէջ կը շողայ Այվազովսքի հանճարը : Միջազգային բաժնին մէջ , Զաքարեան եւ Էտկար Շահին ոսկի մետոյլ ընդունեցան իրենց ցուցադրած պորձերուն համար : Պ . Ա . Թանթաճեան արձաթ մետալ ստացաւ իր հայ եկեղեցիի մը ծրագրին համար : Պ . Սոփոն Պէզիրճեան՝ պղնձէ մետալ , տաճկական բաժնին մէջ իր զետեղած արեւելեան ոճով մէկ քանի շատ ինքնատիպ ձեղնանկարներուն համար : Տիրանեան եւ Շապանեան նկարիչները պատուոյ յիշատակութիւն ընդունած են : Օրիորդ ՀեղարիՖէնտ երկու քոյրերը արձաթ մէտալ ընդունած են Յուցահանդէսին յատակագիծը ներկայացնող սիւրուն բանուածքի մը համար . եւ Օր . Պեզիրճեան պատուոյ յիշատակութիւն ընդունած է վարագոյրի սահմանուած գծագրութիւններու համար :

(*) Յիշենք այս մուսէոնի մասին , մէկ քանի գնահատուած ներ բարեկեան թերթերու . «Էլէնըման» կը գրէր , «վերէն ինկոզ ու շատ մեղմ գոյնով քողէ մը մաղուած Լոյսի մը տակ , մեղրամտէ անձերը , հրաշակերտներ խոտէն վարպետին աշակերտներէն մէկուն , կ'անջատուին՝ որոշապէս աւանձնացած կամ նկարադեղ ձեւով մը խմբաւորուած . հազուատները շատ գեղեցիկ են , ոմանք նոյն իսկ ամենամեծ ճոխութիւն մը ցոյց կուտան , եւ ամէն ինչ իսկատիպ է , Տին գոհարեղէնները , զէնքերն ու զանազան զարդերը : Երկու տարի շարունակ Պ . տը Մալխասունի , այս մուսէոնին հիմնադիրն ու կազմակերպիչը , Սերպիոյ դրացի բոլոր սը-

— Հայերը Համաժողովներու մեջ : — Բազմաթիւ Հայեր մասնակցեցան Յուդահանդէսին համաժողովներուն Գ. Հ. Առաքելեան, ծանօթ ոռուսահայ հրապարակագիրը, կարողաց ուսումնասիրութիւն մը Պապիականութեան մասին՝ կըրօնքներու պատմութեան համաժողովին մէջ, կովկասի Բոլանի Գիւրտերու եւ Պարսկաստանի Գիւրտերու մասին՝ Ազգագրական Համաժողովին մէջ, մասնակցեցաւ իբր Պարսկաստանի պատուիրակ ժողովրդական կրթութեան միջազգային Համաժողովին, ինչպէս եւ Խաղաղութեան համաժողովին եւ Մարպկութեան համաժողովին որոնց երկուքին ալ օրակարգին մէջ յաջողեցաւ հայկական խնդիրը մտցնել : Ասոնցմէ զատ, իբրեւ անդամ ներկայ գտնուեցաւ Մամլոյ, Ընկերվարականներու ժողովրդական աւանդութեանց համաժողովներուն Գ. Առաքելեանի ուսումնասիրութիւնները, ինքնատիպ ու լուրջ աշխատութիւններ, մեծապէս գնահատուեցան Յուդահանդէսին դիտական շրջանակներուն մէջ, եւ դերը զոր այդ հնարամիտ, հմուտ ու ժրջան հայ գործիչը կատարեց այս տիեզերական ցուցահանդէսի ամբողջ շրջանին մէջ, բարձրօրէն արդիւնաւոր եղաւ մեր ազգի վարկին համար՝ մեկէ աւելի տեսակէտներով : Կրօնքներու պատմութեան համաժողովներուն փակման խնջոյքին մէջ, Գ. Առաքելեան արտասանեց թոսթ մը որ խորին յուզմունք յառաջ բերաւ . « Հայերը, ըսաւ, ցեղական կամ կրօնական ատելութիւն չունին զիրենք կեղեքող իսլամ անգերուն դէմ . եւ ուրախ պիտի ըլլային որ չուշանար այն օրը ուր թուրքերը իրենց արդի մոլեռանդութիւնէն եւ բարբարոսութենէն սրբազրուած, կարենային իրենց հետ ձեռք ձեռքի գործակցիլ քաղաքակրթութեան գործին մէջ . բայց այդ օրը դեռ հեռու է դժբաղդաբար, եւ մինչեւ անոր ժամանակը՝ Հայերը իրաւունք ունին պահանջելու եւրոպայէն որ իրենց արդի հրէշային կացու-

լաւ երկիրները պըտրած է, նախանձախնդիր խնամքով մը փնտռելով ու հաւաքելով Տին ժամանակներէ մնացած բանուածքները, քանդակագործութիւնները, հազուադիւս դրամները, որոնք երկար դարերով կրցեր էին ճողովրդի թրքական վայրենութենէն ու հարստահարութենէն : Գործը լիակատար է ուրեմն, ամենախղճամիտ հոգածութեամբ մը յօրինուած, երկիրը ճանչցող խուզարկուի մը ձեռքով, եւ կը ներկայացնէ այն ճշմարիտ եւ անխաղախ նկարագիրը որ ուշագրութիւն կը դրաւ եւ մօտէն ուսումնասիրուելու արժանի է : — « Լա Վի իլ լիւսթրէ » կը գրէ . « Սերպիական բաժնին ցեղագրական մուսէտնը ցուցահանդէսին ամենէն շահեկան եւ ամենէն նկարագրեղ անկիւններէն մէկն է : Անոր ամբողջ արժանիքը պէտք է վերագրել Գ. Մալխասունիին, որ յանձն առած է զայն կազմակերպելու գործը, եւ միանդամայն Տոն ցուցադրուած հազուստները, զոհարեղէնները եւ ալազան առարկաները հաւաքելու աւելի գժուարին աշխատութիւնը : Քառասունի չափ սերպիական հոյակապ

թիւնը փութայ բարուքելու, որպէսզի կարենան աղասօրէն իրենց քաղաքակրթական ծառաւին յագուրդ տալ » : Կոմս Անճէլօ տը Կուպէրնաթիս, իտալացի մեծանուն գիտնականը, որ կը նախագահէր հացկերոյթին, խանդավառ համակրութեան մէկ քանի բառերով պատասխանեց Գ. Առաքելեանին, ըսաւ թէ ժողովուրդ մը, որ հակառակ այսքան դժբաղդ ու կեղեքուած ըլլալուն, ցեղերու ապագայ եղբայրութեան վրայ այնպիսի ըմբոստում մը եւ հաւատք մը ունի, սահմանուած է ապրելու, ու խնդրեց բոլոր կոչնականներէն որ իւրաքանչիւրն իր շրջանակին մէջ խօսքով ու գործով նպաստէ հայկական դատին լուծման անհրաժեշտութիւնը քարոզելու :

Գ. Կ. Պասմաճեան, « Բանասէր » ի տնօրէնը, ուսումնասիրութիւն մը կարողաց՝ Բաղդատական պատմութեան Համաժողովին Իրաւագիտութեան Պատմութեան բաժնին մէջ՝ Հայոց հին օրէնսգրութեան վրայ . նորութիւններով լեցուն այդ շահեկան աշխատութիւնը, որ պիտի հրատարակուի « Բանասէր » ի յաջորդ թիւերէն մէկուն մէջ, գովեստներով ընդունուեցաւ : Գ. Քովալեւիսքի, ծանօթ ոռուս ընկերաբանը, շնորհակալութիւն յայտնեց Գ. Պասմաճեանին՝ այն կարեւոր նպաստին համար զոր ան կը բերէր Իրաւաբանական Պատմութեան, երեւան հանելով դեռ բնաւ չխուզարկուած, գրեթէ բոլորովին անծանօթ մնացած անկիւն մը :

Գ. Մինաս Չերապ մասնակցեցաւ երեք Համաժողովներու, Գաղութային մամուլի միջազգային համաժողովին, ուր ղեկուցում մը կարգաց Հայերու կողմէ հրատարակուած Ֆրանսերէն լեզուով հին ու նոր բոլոր լրագրերներուն մասին, Կրօնքներու Պատմութեան Հաստիճիկին, ուր Մեծն Աղեքսանդրի վրայ Հայոց մէջ տարածուած աւանդութեանց մասին խօսեցաւ, եւ ժողովրդական Աւանդութեանց

հազուստներ այնտեղ ղետեղուած են զմայլելի արուեստով մը ու այցելուներուն հիացումը կը գրաւէն : Ընկերական բոլոր դատակարգերը եւ երկրին բոլոր մասերը ներկայացուած են այնտեղ : Գ. Մալխասունի ջանադիր եղած է սերպ ժողովրդին կեանքն ու բարքերը ծանօթացնելու . յաջողած է իւրաքանչիւր խմբակը այնպէս մը շարագասել որ պատմութեան էջի մը կամ հեքեթի մը համագրութիւնը եղած են անոնք : — « Բառի » թերթը կը գրէ . « Հանրապետութեան նախագահը մանրամասնօրէն այցելեց Սերպիոյ ցեղագրական մուսէտնը . . . Մեկնած ատեն Գ. Լուպէ իր ջերմ շնորհաւորութիւնները յայտնեց Գ. Մալխասունիին, հմուտ ցեղագետին, այն խնամքին համար զոր գրած էր այդ բոլոր Տին հազուստները վերափնդանացնելու : Եւ արդարեւ անոնք ամենաշահեկան ամբողջութիւն մը կը կազմեն անոնց համար որ կը փոփոքին ուսումնասիրել հազուստներու պատմութիւնը եւրոպայի մէջ » :

Համաժողովին ուր զեկուցում մը կարդաց «Զրոյցներու եւ հեքեաթներու ծագան եւ բընաչըրջութեան» մասին: Կրօնքներու Պատմութեան Համաժողովին պերնախագահը, կոմս տը Կուպերնաթիս, զիտել տուած թէ փոխանակ Աղեքսանդրի մասին Հայոց մէջ տարածուած աւանդութիւնները նոյնութեամբ ծանօթացընելու, —ինչ որ ընելով բաւականացած էր Պ. Չերազ, —աւելիչ ահեկան պիտի ըլլար որ անոնց ծագմանը, կազմութեանը, յաջորդական ձեւափոխումներուն վրայ հետազոտութիւն մը ներկայացնէր. Պ. Չերազ սխալ հասկեցաւ իտալացի գիտնականին դիտողութիւնը, եւ յաջորդ նիստին երկու հայկական նոր աւանդութիւն եւս հարգեց՝ ժողովրդական ձեւովը բառ առ բառ թարգմանուած, կարծելով թէ Համաժողովին առաջարկութեանը գոհացում կուտար ատով, — մինչդեռ իրմէ խնդրուածը քննական, հետախուզական աշխատութիւն մը, ամբողջութեան ուսումնասիրութիւն մըն էր: Ժողովրդական Աւանդութեանց Համաժողովին, Պ. Չերազ ընտրած էր մասնագիտական փափուկ ու կնճառոտ նիւթ մը, որու մասին յայտնեց կարծիք մը որ բոլորովին հին, այսօր ուժգնաբար հերքուած ու վերջնապէս մէկ կողմ թողուած է (աւինքն այն կարծիքը որուն համեմատ Բաղտրիոյ մէջ հին ատեն տեսակ մը Հոմերոս, մարդկութիւնը բարոյացնելու կամ զբօսցընելու համար, յղացած ու շարադրած ըլլայ բոլոր զրոյցներն ու հեքեաթները, որոնք յետոյ գաղթող ցեղերուն հետ երկրէ երկիր տարածուած ըլլան): Պ. Լ. Մառիշեէ եւ Պ. Մոնսէօն, Պրուսելի ազատ համալսարանին դասախօս, ցոյց տուին թէ այս վաղընջական տեսութենէն ի վեր զոր Պ. Չերազ կը բերէր Համաժողովին իբրեւ նորութիւն մը, Ֆոլքլորի գիտութիւնը առած է քայլեր որոնց պէտք է մարդ ծանօթ ըլլայ երբ տեսական կարեւոր հարցի մը վրայ կը խօսի Համաժողովի մը մէջ:

«Անահիտ»ի տնօրէնը մասնակցեցաւ Բաղդատական Պատմութեան Համաժողովին Գրականութեանց Պատմութեան բաժնին, ուր կարդաց ուսումնասիրութիւն մը «Փրանսական դրականութեան հայ արդի մատենագրութեան վրայ դործած ազդեցութեան» մասին. այդ ուսումնասիրութիւնը պիտի հրատարակուի Համաժողովին արձանագրութեանց հատորին մէջ. Պ. Չոպանեան ֆրանսական ու հայ մտքին միջեւ գոյութիւն ունեցած յարաբերութեանց վերլուծումն աւարտեց ակնարկելով Թուրքիոյ Հայոց արդի կացութեան. «Այն պահուն ուր ձեզի կը խօսիմ, ըսաւ, թրքական Հայաստանը ահաւոր մարտիրոսութեան մը մէջ կը շարունակէ ոգորիլ, եւ գրական գործունէութիւնը

գրեթէ բոլորովին ընդհատուած է այնտեղ. տարուամ շարժում մը դեռ կը մնայ Կ. Պոլսոյ հայ գաղթականութեան մէջ, քանի մը թերթեր ու հանդէսներ մինչեւ ցարդ կը հրատարակուին այնտեղ՝ հեղձուցիչ մթնոլորտի մը մէջ ուր կը տիրապետէ այնքան ծիծաղաշարժ որքան բռնաւորական գրաքննութեան մը որուականը. բայց ես կը հաւատամ որ լուսագոյն օրերը պիտի չուշանան հասնելու, եւ մեր ժողովուրդը պիտի կարենայ նորէն, արդի ամօթալից կացութենէն ազատած իր երկրին մէջ, վերսկսիլ իր բարոյական ու մտաւորական գործը»: Ունկնդիրները ջերմապէս ծափահարեցին այս վերջաբանը, եւ նախագահը առաջարկեց որ համաժողովը մասնակցի այս «սրտաշարժ ու արդար մաղթանքին». այդ առաջարկութիւնը ընդունուեցաւ բուն ծափերով: Պ. Չոպանեան մասնակցեցաւ նաեւ ժողովրդական Աւանդութեանց Համաժողովին, ուր կարդաց Դաւթի եւ Մհերի զիւցազնական հեքեաթին վրայ ուսումնասիրութիւն մը, որով ցոյց տուաւ հայ ժողովրդին շատ ազնիւ բարոյական մտահոգութիւնները՝ այդ հոյակապ հեքեաթին մէջ խտացած: Այդ Համաժողովի փակման խնջոյքին յաջորդող երաժշտական երեկոյթին մէջ, որ նուիրուած էր Պրեթանի ժողովրդական երգերուն, Պ. Չոպանեանի առաջարկութեամբ հայկական երգերուն ալ մաս մը յատկացուեցաւ. Պ. Սմիբեանի երիտասարդ հայ թեւտոր որ իր ուսումը ստացած է Միլանի Գոնսէրվաթուարին մէջ, երգեց՝ շատ համակրելի ու մաքուր ձայնով մը՝ «Ծիծեռնակ»ը, «Զիմվզին»ը եւ «Հայրիկ»ը, որոնց բաներուն Փրանսիէն թարգմանութիւնը նախապէս կարդաց Պ. Չոպանեան. այդ երեք հայ երգերը խանդավառ ծափահանութիւններով ընդունուեցան, եւ տեսանք սիրունալեւոր Կուպերնաթիսը որ «Կեցցէ Հայաստան» կ'աղաղակեր, ոտքի ելած ծափահարելով: Պ. Չոպանեան մասնակցեցաւ միանգամայն կուրաղութեան Համաժողովին:

Յուցահանդէսին Միջազգային կուրաղին բանախօսութեանց շարքին մէջ որոնք տեղի ունեցան Համաժողովներուն պալատը, Բրոֆ. Կամպարեան, Մոսկուայի համալսարանին հայազգի գասախօսներէն մին, բանախօսեց «Բարիզի Համաժողովներուն մէջ բաղդատական իրաւաբանութեանց» մասին. Պ. Բիրայեան «Կովկասի ատոնին ճարտարաբանութիւն» մասին, Պ. Բ. Միքայէլեան «Թուրքիոյ մէջ Հայկական խնդրոյն» մասին, Պ. Գրիգոր Տիգրանեան «Ռուսական ճարտարագործութեան մէջ խնայողութեան արկղերուն» մասին, եւ Տր. Լորիս-Մելիքոֆ՝ «Ռուսիոյ մէջ ժանտախտի դէմ պայքարին կազմակերպութեանը» մասին:

Բաշինջաղեանի ցուցանանդէսը . — Պ. Գ. Բաշինջաղեան, ուսուէայ մեծանուն նկարիչը, իր աշխատանոցին մէջ, 132 Bd. Montparnasse, մասնաւոր ցուցանանդէս մը կազմակերպած է, ուր հաւաքած է իր գործերէն երեսունի չսփ : Մեծ մասամբ կովկասի ու Ռուսահայաստանի բնութեան տեսարաններն են, (Կովչայի կիրճը, Երեւանու դաշտը, Անիի աւերակները լուսնի լույսով, Սեւանի լիճը, եւն) հանդարտ, համբերատար, ժուժկալ ու փափուկ աշխատութեամբ մը կտաւին վրայ վերարտադրուած : Ռուսական բաժնին ընդհանուր յանձնակատարը, անբացատրելի վարմունքով մը, վերջին պահուն ետ դարձուց Պ. Բաշինջաղեանի երկու նկարները որոնք ուսարուեստագէտներու ցուցահանդէսին մէջ մեծ յաջողութիւն դասած էին եւ վաղուց նշանակուած էին Տիեզերական Ցուցահանդէսին ուսական բաժնին մէջ գըրուելու համար : Ամէն անոնք, հայ կամ եւրոպացի, որ կը հետաքրքրուին անկեղծ ու փափուկ արուեստի մը, պիտի փութան անշուշտ երթալ այցելել այս մասնաւոր ցուցահանդէսը ուր Բաշինջաղեանի աղնիւ ու գորովալից վրձինը իր ամենէն սիրուն էջերէն մէկ քանին ի տես է դրած :

Պ. Պեղիբեանի աշխատք . — Պ. Սոփոն Պէլիբեան, որ այս օրերս վերստին հրապարակելու աւպոմով մը, հին դէմք մըն է՝ մեծ անիրաւութեամբ մը մեր նոր սերունդին գրեթէ բոլորովին անծանօթ մնացած եւ որ սակայն արժանի էր՝ իր Պոլսոյ մէջ ու Եւրոպայի մէջ կատարած գեղարուեստական գործովը՝ ամենէն ամուր համբաւներէն մէկն ունենալու մեր մէջ Պ. Պէլիբեան, ընկեր ու գործակից Պալեան ճարտարապետներուն, Սուլթան Ալիզի շրջանին հայազգի մեծ արուեստագէտներէն մէկը եղած է՝ իր ճիւղին, այսինքն զարգանքակարչութեան մէջ . ինքն է որ Չրաղանի պալատին ձեղնանկարները, պատերուն եզրանկարները յօրինած, կարասիներուն ձեւերը գրծագրած ՝ վարագոյրներուն օրինակները պատրաստած է, — այդ բոլորը՝ պարսկական, արաբական եւ թրքական ոճերուն ճոխ ու գեղեցիկ խառնուրդով մը ուր կը յայտնուի պերճ ու վայելուչ երեւակալութիւն մը՝ ճարտար ու ճապուկ վրձինի մը միացած : Պ. Պէլիբեան, ասկից 7—8 տարի առաջ Լոնտոնի մէջ սկսաւ հրատարակել աւպոմ մը ուր կը փափաքէր ամփոփել իր անթիւ գծագրութիւնները . այդ աւպոմը, որուն հրատարակումը նիւթական պատճառներով չկրցաւ շարունակուիլ, բարոյական մեծ յաջողութիւն գտաւ արուեստագէտներու քով եւ մամուլին մէջ . Աւպոմը ձօնուած էր Ն. Ա. Բ. Շլեզվիկ-Հոլլ-

թայնի Քրիսթիան իշխանուհիին, որ հետեւեալ նամակը կը զրկէր իր քարտուղարուհւոյն ձեռքով Պ. Պէլիբեանին՝ ի պատասխան աւպոմէն օրինակի մը որ իրեն համար մասնաւորապէս պատրաստուած հողմահարի հետ մը ուղարկուած էր իրեն . »Օր. է. Սոքլ (քարտուղարուհին) իր յարգանքները կը մատուցանէ Պ. Ս. Պէլիբեանին : Ն. Ա. Բ. Շլեզվիկ-Հոլլթայնի Քրիսթիան իշխանուհւոյն փափաքին համաձայն կը գրէ անոր իմացնելու համար ընդունած է իր նամակը եւ այն սիրուն հողմահարը զոր հաճած է իշխանուհւոյն զրկել : Ն. Բարձրութիւնը շատ չնորհակալ է իրեն՝ այդ գողտրիկ նուէրին համար, որ ա՛յնքան նշանաւոր է իր բեզդագրութիւն եւ իր բեզ յօրինուածք : Իշխանուհին մեծապէս կը գնահատէ զայն եւ շատ հաճոյքով զայն կ'ընդունի : » Սըր Յրէտէրիք Լայթըն, անգլիացի նշանաւոր նկարիչը եւ Լոնտոնի Գեղարուեստից արքայական ակադեմիային նախագահ, հետեւեալ նամակը կը զրկէր Պ. Պէլիբեանին . «Սիրելի պարոն, շնորհակալ եմ ձեզի այն նեղութեան համար զոր յանձն առեր էք ձեր գծագրութիւններէն այնքան ստուար հաւաքածու մը ինծի զրկելու : Մեծ հետաքրքրութեամբ զննեցի զանոնք, մասնաւորապէս խաւաքարաին մէջ գրուածները : Ճարտարապետական ոճով շինուած մեծ գրծագրութիւններուն մասին, ինծի կը թուի թէ մեր արեւմտեան երկիրներուն գաղափարները շատ տեսակէտներով բոլորովին տարբեր են արեւելեան երկիրներու գաղափարներէն : Բայց զուտ զարգական գծագրութիւններուն համար, ամբողջապէս համախոհ եմ ձեզի հետ, եւ անոնց մեծ մասը ինծի շատ վայելուչ երեւցան ձեւով ու շատ մեծ ազաւորութիւն գործելու կարող : » Պ. Սոփոն Պէլիբեան, կը գրէր «Տի Գուին» թերթը, ուշադրութեամբ ուսումնասիրած է իր արուեստը եւ յաջողած է անուն մը շինել իրեն՝ չնորհիւ իր ինքնատիպ աշխատութեան ձեւին : Գիտէ արեւելեան զարգական արուեստին յատկանշական նօթը պահպանել ինքնադրոշմ մնալով հանդերձ եւ առանց երբեք իր նախորդներուն հետեւելու : Նմանապէս սովորական սխալը չէ գործած եւրոպական հասարակ մոթիֆները ընդօրինակելու, նորասէրամաթէօններու հաւանութիւնը վաստակելու համար : Իր զարգացածագրութիւնը, պարսկական ոճէն ներշնչուած ըլլայ կամ արաբականէն եւ կամ թրքականէն, միշտ ինքնատիպ, հնարամիտ է եւ յաճախ ծայրայեղօրէն չնորհալի : » Երկար պիտի ըլլար բոլոր լրագիրներուն գովեստները այստեղ յիշատակել : Այս անգամ Պ. Պէլիբեան գտած է Յրանսացի հրատարակիչ մը, եւ հաւանական է որ իր

ալպոմը , որուն առաջին պրակը երեւցաւ արգէն . ամբողջութեամբ լոյս տեսնէ : Կը յուսանք որ մեր հայրենակիցները անտարբեր չմնան Պ. Պէզիրճեանի այս հրատարակութեան հանդէպ որ շատ պատուարներ է մեր ցեղին (*):

Այստեղ կը թարգմանենք յառաջարանը զոր ալպոմին համար գրած է Ֆրանսացի ծանօթ քննադատ մը , Պ. Ֆրանց Ժուռոէն .

«... Այդ արեւելեան տրուեստը , այնքան յիմարաբար ճոխ ու այնքան զմայլելի կերպով այլազան , զժբաղդաբար քիչ ու գէշ ծանօթ է մեր մէջ , Պիտի նոյն իսկ ըսեմ թէ զասական դաստիարակութիւն ստացողները զայն բոլորովին կ'անգիտանան եւ կը նկատեն իբրեւ ո՛ր եւ է շահեկանութիւն չունեցող գեղեցկագիտական բանաձեւ մը , քիչ մը բարբարոս , եւ որ կարող է նոր սերունդներու վրայ վատնգաւոր ազդեցութիւն մը գործելու : Այո՛ , անբացատրելի մոլորումով մը , մենք հիմնապէս կը ճանչնանք յունական ու հռոմէական արուեստը , գոթական արուեստն ու Վերածնութեան արուեստը , ԺԷ . եւ ԺԸ . դարերու արուեստը , եւ տարտամ , խաթարուած , այլանդակուած , ստալոյթ ու ծիծաղելի ծանօթութիւն մը միայն ունինք Տաճկաստանի , Պարսկաստանի , Ալճերիոյ եւ հարաւային Սպանիոյ հրաշակերտներուն մասին : Եւ սակայն , ո՛րքան անզին գանձեր կան այդ առաւելաշնորհեալ երկիրներուն մէջ կուտակուած : Ներշնչման ի՛նչ հարուստ ու անսպառ աղբիւր մըն է որ անճարակօրէն ձեռքերնուս կը փախցնենք : Ի՛նչ անմահական վայելքներէ մենք մեզ կը զրկենք՝ չուսումնասիրելով այն գլուխ-գործոցները որոնք այդ արտասովոր հողերուն վրայ կը շեղջակուտուին :

«Այսպիսի աններելի անտարբերութեան դէմ հակազդեցութիւն մը յարուցանելու համար է որ Պ. Սոփոն Պէզիրճեան , արուեստագէտ մը եւ հնագէտ մը , ուզած է քօղին մէկ ծայրը վեր առնել , եւ անտարբերներուն աչքին առջեւ դնել արեւելեան զարդարուեստի հրաշալիքները : Այսպիսի մարդու մը ձեռքով պատրաստուած ալպոմ մը անհաշուելի ծառայութիւններ պիտի մատուցանէ , որովհետեւ շատ երեսի վրայ ձգուած լեզուի մը քերականութիւնն է որ հեղինակը կարողացած է վերակազմել այնքան ճաշակով , ուշիմութեամբ ու թաքթով որքան հմտութեամբ :

«Տխուր կէս մը զոր պէտք է նկատել , այն է թէ՛ Կ. Պոլսոյ մէջ , ուր արեւելեան արուեստը անկորնչելի յիշատակներ ձգած է , անցեալին ուսումնասիրութիւնը շատ պակասաւոր կերպով կը կատարուէր : Ո՛չ մէկ գրաւոր տո-

քիւման , ո՛չ մէկ դասագիրք , ո՛չ մէկ վերարտադրութիւն , ո՛չ մէկ գծագրութիւն , ո՛չ մէկ փորագրութիւն . աւանդութիւնը բերնէ բերան հաղորդուելով կը պահպանուէր , եւ ի՛նչ խեղճ պայմաններու մէջ : Ենորհիւ Պ. Սոփոն Պէզիրճեանի , զոր Սուլթան Ապտիւլ-Ազիզ Օսմանեան պետութեան առաջին արուեստագէտներէն մին կը նկատէր , առաքելի համոզումներուն ու կորովին , Գեղարուեստից վարժարան մը հիմնուեցաւ , Տաճկաստանի արուեստագիտական հարստութիւնը ընդհանուր անտարբերութեան դէմ պաշտպանելու նպատակով :

«Քաջալերուած ու մղուած՝ յառաջանալու այն ճամբուն մէջ զոր ինք իրեն համար գծեր էր , Պ. Սոփոն Պէզիրճեան կարեւոր աշխատութիւններու ձեռնարկեց : Արեւմուտքի մէջ ուսումնասիրեց , զննեց , բաղդատեց , խորհրդածեց , գծադրեց , զանազան ոճերը քննեց կարեւնալու համար զանոնք մեթոտով ու գիտակցութեամբ բաղդատել : Աշխատութեան այդ երկար տարիներուն արդիւնքն է որ կը հրատարակէ այսօր , եւ գործը զոր արտադրած է՝ ամենաբարձր շահեկանութիւն մը կ'ընծայէ : Այս հաւաքածուն , որ կը պարունակէ հազար հինգ հարիւրէն աւելի կտորներ , ամենէն այլազան պիտոյքներուն գոհացում կուտայ : Արուեստագէտներուն զմայլանք պիտի պատճառէ , եւ միեւնոյն ատեն նշանակելի ծառայութիւններ պիտի մատուցանէ ճարտարագործին , բրուտին , սպակեղործին , գծադրիչին , քանդակագործին , զարդագործին որոնց իւրաքանչիւրը իր մասնագիտութեանը համար ցոլք մը պիտի գտնեն այնտեղ լուսաւէտ Արեւելքէն :

«Ինչ որ զիս ամէն բանէ աւելի հմայեց այս համոզուածի ձեռնարկին մէջ , իր փափաքն է շատ քալուած ճամբաներէն դուրս ելլելու , միեւնոյն գեղեցկագիտական բանաձեւին վրայ չհիքնոսանալու , մեզի նոր զգայութիւն մը բերելու . հիանալի ոճի մը մասին իր ունեցած խորին հմտութեանը մեզի հաղորդակից ընելու , մէկ բառով՝ յայտնողի դեր կատարելու : Արեւմուտքը գրեթէ միմիայն իր ուրոյն գոյութեամբը կ'ապրի եւ պէտք եղածին չափ չ'զբաղիր իր շուրջն անցածովը . ատկից , հարկաւորաբար , յառաջ կուգան սովորամոլութիւնը , մշտակրկնութիւնը , սորվուած դասի անկենդանութիւնը եւ նախաձեռնութեան պակասը : Մտքերնիս բերնք այն անմիտ արհամարհանքը զոր ունէինք ատենով ճարտական արուեստին համար . եւ սակայն բաւական եղաւ որ ան երեւնար մեզի այնպէս ինչպէս որ է , ու մեր վրայ իսկոյն անագին ներգործութիւն մը ունեցաւ . հասկնանք թէ որ-

(*) Հասցե . Պ. Ս. Պէզիրճեան , 5 Rue Gozlin , Paris

քան օգուտ կարող ենք քաղել օտար մտաւորական հարստութիւններէն, որոնց մեր ուղեղը վերջ ի վերջոյ կը ձեւափոխէ նկարագիրը՝ նորաբեր յատկութիւնները միայն պահելով, եւ այն ատեն պիտի գիտնանք Պ. Սոփոն Պեղեր-ձեանի ալպոմին ընել այն ընդունելութիւնը որուն արժանի է եւ զոր սրտանց կը մաղթեմ իրեն պէս տաղանդ ունեցող անձի մը : »

ՏԻԿԻՆ ՄԱՍԱԿԵԱՆԻ ՄԱՀԸ .— Պոլսոյ լրագիրներէն իմացանք տիկին Գայիանէ Մատակեանի մահը, եւ այդ լուրը մեզի խորին ցաւ մը կը պատճառէ : Տիկին Մատակեան որոշ ու մեծապէս օգտուէտ դեր մը կատարեց Թրքահայոց մանկավարժական յառաջդիմութեան մէջ . ինքն է որ վարպետ-տուտուներու միջնադարեան գրութիւնը կործանեց ֆրէօպէլեան մանկապարտէզներուն սխտեմը մեր մէջ մտցնելով, եւ մեր ծաղկոցներն իսկ (այսինքն մեր նախակրթարանները, որոնք հակառակ իրենց սիրուն անունին աւելի «խամբոց» կոչելու արժանի հաստատութիւններ էին), տիկին Մատակեանի գործին ազդեցութիւնը կրեցին եւ հիմնովին կերպարանափոխուեցան : Նորասէր, գործունեայ, ձեռներէց ու յանգուզն, տիկին Մատակեան ամէն տեղ եւ ամէն շրջանակի մէջ ջանադիր եղած է Հայոց բարեբրուն մէջ հետզհետէ աւելի եւրոպացմանը մտցնելու :

Կովկասի թերթերը կը հազորդեն թէ ինքն է առաջին հայ օրիորդը որ յաղթելով բոլոր նախապաշարուներուն, Եւրոպա դացած է ուսում ստանալու, եւ ինքն է որ Կովկասի կրթական հաստատութիւններուն օգտին համար սիրողներու կողմէ խաղացուած թատերական ներկայացումներ սարքած է՝ որոնց ինքն ալ մասնակցած է : Պոլսոյ մէջ, ինքն էր որ զբաղւան երեկոյթներ կազմակերպեց առաջին անգամ, ընտանեկան հաւաքումներ որոնց մէջ զբաղէտներ ու դրասէր օրիորդներ ու պարոններ կը համախմբուէին մտաւորական խօսակցութիւններով կամ գրական խաղերով քանի մը ժամեր անցընելու, ինչ որ ազնիւ նորութիւն մըն էր մեր թղթախաղով կամ բամբասանքով կազմուած սովորական երեկոյթներուն մէջ : Ինքն է դարձեալ որ Բերայի աղջկանց արուեստանոցին հիմնարկութեանը գործակցեցաւ, ու յետոյ անոր մէջ կիրականօրեայ դասախօսութիւններ հաստատեց հայ վարժակիներու համար : Պոլսոյ թերթերէն կ'իմանանք որ այս վերջին տարիներուն մէջ, Բերայի Հայոց աղքատախնայ ընկերութեան ամենէն անձնուէր եւ ամենէն կենդանի ուժը ինքն է կազմեր : Գիտակից ու խանդավառ այլասիրութեան զեղեցիկ ու հազուադիւտ դէմք մըն է որ կ'անհետանայ մեր մէջէն, եւ տխրութեամբ

կ'արձանագրենք այս կորուստը : Անոնք որ մտէն ճանչցած են տիկին Մատակեանը, պիտի չմոռնան բոլոր զեղեցիկ բաներուն համար յիմարաբար խանդավառող, ամէն հանրօգուտ գործի համար ինքզինքը ամբողջութեամբ նուիրող այդ քաջ ու մաքուր հոգին, եւ յարգանքով պիտի յիշեն այդ անունը որ հոմանիշ կարող է մնալ ամենաթանկագին յատկութեան մը որ մեր մէջ շատ քիչ տարածուած է, ձեռներեցութեան :



ՄԵԻՔԵՆԻ ԵՐԿՈՒՀԱՐԻՐԱՄԵԱՅ ՅՈՒՆԵԱՆԸ

— 0 —

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան կողմէ Հ. Ղևոնդ Ալիշան հետեւեալ հրատէրը զրկած է «Անահիտ» խմբագրութեան, ինչպէս եւ ազգային ամէն հաստատութեանց :

Նոր Իրգ դարուս հետ կը սկսի Գ. դար Մխիթարեան Ուխտիս, գոր երջանիկ հայր մեր հաստատած է Ս.ստուծոյ եւ Ա.ստուածամօր նախախընամութեամբ՝ ի 8 Սեպտեմբերի 1701 տարւոյ : Փափագելով այս երկուհարիւր ամեայ Յորեւանի յիշատակը՝ ըստ կարի մերում եւ ըստ տկարութեան՝ արժանաւորապէս կատարել, ի միջոցի լրման եւ յարման երկու անցեալ դարուց եւ Գին, յ 8 Սեպտ . 1901, պարտք երախտագիտութեան համարիմք՝ ոչ միայն ծանուցանել մեր պատուական ազգայնոց, ու յոց բարոյական օգտին նուիրած են Հայր մեր Մխիթար եւ իր որդիքն՝ իրենց նպատակ ջանքն ու աշխատանքը, այլ եւ համարձակիմք խնդրել իրենց բարեյօժար կարելի նիւթական նպաստը, ի պէտս ծախուց պատրաստութեան հանդիսի եւ մնայուն յիշատակաց Յորեւանին, որոյ համար այլ եւ այլ գրաւոր վայելչապարզ գործք առաջարկուած եւ սկըսուած այլ են ի հրատարակութիւն, ի պատիւ Նախահօրս մերոյ եւ ի վայելս զինքն եւ իր գործը յարգողաց, որոց ընծայաբերութեանց կամ տրից համեմատ՝ կ'ելնէ իրենց այլ մասն՝ այն հրատարակեալ յիշատակներէն, եւ անկարողաց այլ նպաստելու՝ մնան ձրի բաշխելիք ինչ :

Եթէ լրութիւն Հայոց, յերս ինչ տարբեր տեսութիւն ունեցեր է եւ ունի, սակայն հարկ

է խոստովանիլ որ զրեթէ առհասարակ ազնուապէս միաբաներ է այս երկերիւրամեայ շրջանին մէջ՝ ի յարգութեան՝ առ Հայր մեր Մխիթար, ճանչնալով զնա մի ի գերագոյն բարերարաց, երախտաւորաց եւ պարծանաց իւրոց, որոց համաձայն՝ օտարազգիք անգամ տեւսողք իր կանգնած եւ կանոնած վանաց եւ վարժից, վկայեն գովութեամբ եւ զարմանօք:

Չեմք տարակուսիր որ այս նոր երրորդ զարուս սկզբան եւ ընթացից մէջ՝ նորոգէ հայրն Մխիթար իր եռաշնորհ հոգին՝ Աստուածասիրութեան, ընկերասիրութեան եւ իմաստասիրութեան՝ յորդիս իւր, եւ ըլլայ անդադար բարեխօս վասն Ազգիս, ձայնակցելով իր եւ մեր նախնի երանաւէտ Սուրբ Հարց լուսաւորչաց Հայոց:

Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼԻՇԱՆ

Աւելորդ կը համարինք բացատրել կարեւորութիւնը հանդէսին գոր Մխիթարեան միաբանութիւնը մտադիր է կազմակերպել. մեր բողոքողին համար Մխիթարի անունը Սահակի, Մեսրոպի, Խորենացիի անուններուն հաւասար սիրելի եւ նուիրական անուն մըն է. անոր յիշատակը սօնելով, մեր ազգը յարգանք մատուցած պիտի ըլլայ իր մտաւորական ու բարոյական ամենէն գեղեցիկ յատկութիւններուն՝ որոնց հզօրագոյն խտացումներէն մէկը եղաւ Մխիթար: Ինչ վերապահումներ ալ որ ունենանք Վանքին մտաւորական արդի կացութեանը մասին, ամենքս ալ պարտաւոր ենք պատկառանքով խոնարհիլ այս հրաւերին առջեւ գոր Վանքը կ'ուղղէ ամենուս եւ ուր մեծ Մխիթարեան մը, մեծ Հայու մը յիշատակին շուրջը համախմբուիլ կ'առաջարկէ: Անհրաժեշտ է որ ամէն կողմէ, Հայութեան բոլոր հատուածները, բոլոր կուսակցութիւնները մասնակցին այդ հանդէսին եւ իրենց օժանդակութեանը շնորհին, որպէս զի ան ըլլայ ինչ որ պէտք է, այսինքն հոյակապ ու ազնիւ համագումարում մը ազգային բոլորութեան՝ հայրենիքի ու գրականութեան սիրոյն ամենամեծ վառարաններէն մէկուն շուրջը: Արտասահմանի բոլոր գաղթականութիւնները պէտք է որ պատգամաւոր մը զրկեն այդ հանդէսին: Կ'իմանանք որ Հ. Թուխիկեան, տաղանդաւոր Մխիթարեան մը, մտադիր է հրաւեր կարգալի բարեզի հայ գաղութին որպէս զի պատուիրակ մը զրկէ Վենետիկ՝ Մխիթարի յորեկանին: Բարեզի հայ գաղութը, որուն մէջ կան մէկէ աւելի Մխիթարեանց նախկին աշակերտներ (Յ. Իսփէնտէր, Վ. Սվաճեան, Է. Շահին, Վ. Մոզեան, եւն. .) անշուշտ սիրով պիտի պատասխանէ Հ. Թուխիկեանի կոչին, ու բոլոր միւս գաղութները, ինչպէս եւ բոլոր հայ խմբակներն

ու մարմինները, պիտի հետեւին անտարակոյս Բարեզի գաղթականութեան օրինակին:



ԳՐՔԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

—o—

Բանասէր. — «Բանասէր»ը, որ իր երկրորդ տարեշրջանը մտաւ արդէն, բացարձակապէս արժանի էր այն յաջողութեանը զոր գլուխ եւ որ, մինչեւ ցարդ աւելի բարոյական քան նիւթական, կը յուսանք պիտի ածի եւ ամրանայ հեռագհետէ: Շատ տարբեր կարգ մը թերթերէ որոնք վերջերս սունկի պէս բուսան ամէն կողմ արտասահմանի հայ գաղութներուն մէջ՝ աւելի անձ մը ապրեցնելու կամ այս ու այն կրքերուն յագեցում տալու ճղճի՞մ նպատակով, այս թերթը կուգար իրական պէտք մը գոհացնել: Բանասիրութիւնը մեր մէջ կրօնական հաստատութեանց մինաշնորհ դարձած էր մինչեւ հիմա, եւ «Արարատ»ը, «Բազմավէպ»ն ու «Հանդէս ամսօրեան», հակառակ (մանաւանդ վերջնոյն) հայկական գիտութեան մատուցած շատ կարեւոր ծառայութիւններուն, ունէին անխուսափելի թերութիւն մը, այն է արգելքը կրօնական, պատմական, ընկերաբանական այլ եւ այլ խնդիրներու վրայ բացարձակ ազատութեամբ խորհրդածելու, արգելք որ այդ հանդէսներուն կրօնական միաբանութեանց կողմէ հրատարակուելէն կը ծագէր: Բարեզի պէս ազատախոհ կեդրոնի մը մէջ, զիտական նոր ու ազատ դաստիարակութիւն ստացած աշխարհական բանասէրներու խումբի մը կողմէ հրատարակուող հանդէս մը, զգալի պակաս մը լրացնելու սահմանուած էր: Պէտք է գովել երեք կրօնական, հանդէսները այն ազնիւ ու աննախանձ համակրութեանը համար որով ողջունեցին ու քաջալերեցին իրենց նորածին եղբայրակցին երեւումը: Ըսել թէ «Բանասէր»ը արդէն իրականացուց իր միամեայ ընթացքին մէջ ամէն ինչ որ կը սպասուէր այդ լայն ու զփուարին ծրագիրն ունեցող թերթէ մը, ճշմարտութեան դէմ մեղանչել պիտի ըլլար: Մինչեւ ցարդ «Բանասէր»ը հրատարակեց հատուածական տեսութիւններ, հում նիւթեղէններ, անծանօթէն երեւան հանուած տղերամաններ. ու դեռ չբեւեցան հո-

ամբողջական ուսումնասիրութիւններ, համա-
դրական աշխատութիւններ, —ինչպէս օրինա-
կի համար «Արթօ»ի խորահայեաց ուսումնա-
սիրութիւնները «Նոր կեանք»ին մէջ, —որոնք
անհրաժեշտ են որպէս զի բանասիրական հան-
դէս մը ստանայ իրական հեղինակութիւն մը
իր ասպարէզին մէջ, Այդ կարգին մէջ «Բա-
նասէր»ը առաւ միայն Հ. Ս. Պարոնեանի քննա-
դատականները Պ. Քառիէրի Խորենացոյ մա-
սին ունեցած տեսութեանց նկատմամբ, այդ
քննադատականներուն կրքոտ ոճը դիտողու-
թիւններու կրնայ տեղի տալ, բայց Հ. Պարոնե-
անի նկատողութիւնները, բազմաջան աշխատու-
թեանց եւ ինքնատիպ ու սուր հայեցողու-
թեան մը արդիւնք, մեծ մասամբ ուշագրաւ
են ու շահեկան, նմանապէս՝ իր ծանօթագրու-
թիւնները Խորենացոյ ձեռագրին ուղղաբա-
նումի մասին, որ կը փափաքէի տարածուէր
մեր բոլոր հին հեղինակներու գործերուն ու-
րոնք ա՛յնքան աղաւաղեալ կերպով տպագր-
ւում են: «Բանասէր»ը գովելի է նաեւ սկը-
սած ըլլալուն համար հրատարակել նոյն Հ.
Պարոնեանին մէկ խոշոր ու շատ կարեւոր
աշխատութիւնը, (Bibliographia armeniaca), Մա-
տենախօսութիւն հայկական ըստ օտար լե-
զուաց) աշխատութիւն մը որուն վրայ յարգե-
լի վարդապետը իր ամբողջ կեանքը մաշեցուցած
է եւ ուր ջանացած է նշանակել ամէն ինչ որ
երեւցած է օտար լեզուով, գրքի կամ յօդուածի
մէջ, հին ժամանակներէն մինչեւ 1900, հայ
ժողովրդի մասին. Պենետիքթեանի գործ մը,
պատկասելի՝ այն բազմակուտակ ու տաժանելի
աշխատութեամբը զոր կ'ենթադրէ եւ որուն
աւելորդ է բացատրել օգտակարութիւնը հայ
բանասէրներուն համար: Բայց յուսալի է որ
նոյն իսկ այն ձեւովն մէջ որ մասնագիրու-
թիւնը կը կազմէ այս Հանդէսը հիմնողին,
այսինքն հայկական բեռնագրերու ուսումնա-
սիրութեանց ձեւովն մէջ, «Բանասէր»ը պիտի
չուշանայ տալ մեզի, հատակոտորներու վերլու-
ծումներէ յետոյ, ամբողջութեան ուսումնասի-
րութիւններ: Հայկական բեռնագրերու հե-
տադասութիւնը ամենակենսական կարեւորու-
թիւն ունի մեր ժողովրդին ծագումը բացա-
տրելու, մեր պատմութեան հիմունքը երե-
ւան հանելու համար, եւ «Բանասէր»ը, որ կու-
շուած է այս գործին նպաստ մը բերելու, պի-
տի ջանայ անուշտ գոհացնել այն յոյսերը որ
իր վրայ դրուած են: Կը փափաքէինք այնտեղ
տեսնել հաւաքուած ոչ միայն ամէն ինչ որ

պ. Պատմաճեան ինքն իսկ պիտի եզրակացնէ իր
անձնական խուզարկութիւններէն, այլ եւ աշ-
խատութիւնները ուրիշ հայ բանասէրնե-
րուն որ այս նիւթով կը զբաղին, ու թարգ-
մանութիւնը այն բոլոր հին ու նոր ուսում-
նասիրութեանց զոր օտարագրի դիտականնե-
րը նուիրած են այս հարցին: Սպասելով «Բա-
նասէր»ի շրջանակին այս հարկաւոր ընդար-
ձակմանը, մենք պարտք կը համարինք գովել
պ. Պատմաճեանը՝ ամէն բանէ աւելի եւ առանց
վերապահումի՝ այն կորովին ու անձնուիրու-
թեանը համար որով կարողացաւ, նիւթական
ամենաչնչին միջոցներ միայն ունենալով
հանդերձ իր տրամագրութեանը տակ, սեղ-
ծել ու տեւական զարձընել դիտական հանդէս
մը որ իր որոշ տեղը արդէն ունի հայկական
գիտութեան մէջ եւ որ վաղը կարող է հոն նշա-
նաւոր դեր մը խաղալ:

Ի տարձեաց «Մշակ»ը. — «Մշակ»ի աշխատակից-
ներէն մին, որ «Մամուլ» համատարածութիւն ներքեւ
ամենօրեայ յօդուածներ կը հրատարակէ այն-
տեղ, յօդուած մը նուիրած է ինծի, անուղղակի
պատասխան մը տալու համար ի դիմաց պ. պ.
Ահարոնեանին եւ Մալումեանին, որոնց անուղ-
ղամտութիւնը անհերքելի փաստերով ի վեր
հանած է ի վերջին քրոնիկիս մէջ: Այս պարոնը,
իր ընկերները պաշտպանելու համար՝ ուրիշ
միջոց չէ գտած բայց եթէ անոնց օրինակին
հետեւիլ, Ահա ինչ կը դրէ՝ ինծի գրական
ազիտութիւն վերագրելու սրտաշարժ ճիգին
մէջ. «Անցեալ տարի կարելի էր կատարելապէս
ապշել տեսնելով պ. Չօպանեանի «Անտհիտ»ի
մէջ մի այնպիսի գոհար. խօսելով ոճի պար-
զութեան եւ գեղեցկութեան մասին, պ. Չօպան-
եան առանց այլեւայլութեան հաւատացնում
էր որ Տուրգենեւի ոճը ծանր է եւ անհասկանա-
լի. պարոնը, ի հարկէ, երազում էլ չէ տեսել
Տուրգենեւի ոճը:» Կ'ընդօրինակեմ այստեղ «Ա-
նտհիտ»ի այն միակ հատուածը որուն մէջ
թուրկիներֆի մասին խօսած եմ. «Կան ան-
շուշտ գրական գործեր որոնք գրուած են շատ
պարզ ոճով մը, առանց ձեւի կնճռոտութեան,
եւ այդպիսի գրուածները կրնան մասամբ հաւ-
կանալի ըլլալ նաեւ ռամիկին, այսպէս են ողու
վրպասանները (բայ ի թուրկիներֆէն որուն
ոճը ամենաբարձր նրբութիւն մը ունի):»

Ծիծաղելի չէ՞ որ գրող մը, որ այսպիսի խե-
ղաթրուումներ գործելու չափ անբարեխիղճ է
եւ կամ այսքան պարզ գաղափարներ ըմբռնել

չկարենալու չափ բթամիտ է, համարձակի ո եւ է կարծիք յայտնել Մանուէլեանի պէս գիտու նի մը, Գլոտ Պեռնառի պէս հանճարի մը ու Պոլսոյ ողբացեալ կեդրոնական վարժարանին պէս նուիրական հաստատութեան մը մասին:

Պ. Չերազ եւ գեղանի Զիպան. — Իր թերթին մէջ որ նպատակ ունի հայ ժողովրդին «իրական» արժանիքներն ինչպէս եւ ցաւերը ֆրանսական հասարակութեան ծանօթացնել, պ. Չերազ միայն չորս հինգ մերկ տողեր նուիրեր էր՝ այլ եւ այլ լուրերու բաժնին մէկ անկիւնը՝ Գրքոց Զանչեանի մահուանը, մինչդեռ ամենատարրական, ամենաանհրաժեշտ պարտականութիւն մը կար պ. Չերազին համար, իր անհետացմանն առիթով՝ այդ մեծ հայ գործիչն ու այդ մեծանուն հայազգի ուս գրագէտը ընդարձակ ուսումնասիրութեամբ մը Ֆրանսացւոց ճանչցնելու: Եւ այսօր քան կարեւոր դէպքի մը հանդէպ այս լակոնականութիւնը անով մանաւանդ տարօրինակ կը թուի, որ պ. Չերազ, Զանչեանի մը նկատմամբ այսօր Կծծի, իր սիւնակները չի խնայեր երբ Գալֆայեան խաչագողի մը շահատակութիւնները կ'ուզէ վատառողջ համակրութեամբ մը հովանաւորել կամ երբ հայկական պարկեշտութեան վրայ գազափար տալու համար ծիծերն ու փորը խաղցնող Զիպա մը երթալ տեսնել կը յանձնարարէ իր ընթերցողներուն...

«Պարկեշտ» բառին այս զարմանալի գործածութեանը մասին ըրած գիտողութեանս պ. Չերազ պատասխանել կարծեր է, իր թերթին վերջին թուոյն մէջ ծանուցանելով թէ Զիպան, հետզհետէ աւելի գնահատուած, ուրիշ տեղ մըն ալ հրաւիրուած է պարելու... Չեմ հասկնար որ առի ինչով կրնայ ապացուցանել փորի պարին «պարկեշտութիւնը». եւ այսպիսի տրամաբանութեան մը ետեւ ապաստանիլը բացատրելու համար, կամ gâtismeի տարտամ սկզբնաւորութիւն մը ենթադրելու է պ. Չերազին վրայ եւ կամ մարդու քթին խնդալու քիչ մը գոհհիկ մեթոտի մը կիրարկումը: Այդ «պարկեշտ» բառին անբարեխիղճ կիրարկման մասին գիտողութիւնս պարզ կատակի մը կամ ճղճիմ խճրճանքի մը համար չէր որ ըրած էի. հայկական դատը Եւրոպային ներկայացնելու եղանակին բոլորովին տարբեր ըմբռնում մըն էր որ զիս մղեց ատոր, մանաւանդ որ առաջին անգամը չէր որ կը նկատէի ուրիշի նմանօրինակ փորձեր պ. Չերազի թերթին մէջ, ուր որ մը մինչեւ իսկ ծանուցում մը տեսանք Օտեսաբնակ չեմ գիտեր որ հարուստ ուսուհային համար, «որ թէպէտ քառասունեակինդ տարեկան, բայց իր առնական ամբողջ ուժը

պահած է եւ պատրաստ է ամուսնանալու...» ենթադրեցէք որ Ֆրանսացի մը, կարողալով պ. Չերազի թերթը, երթար տեսնել «հայաղջկան մը պարկեշտ ու շնորհալի խաղացուածքը» հայ հայրենասէրէ մը յանձնարարուած, եւ յանկարծ ինքզինքը գտնէր պարի մը դիմացը որ արեւելեան սորկութեան ամենէն զաւրի արտագրութիւնն էր մէկն է, ի՞նչ պիտի մտածէր Հայոց բարքերուն մասին:

Եւ առիթ ունեցայ տեսնելու թէ ի՞նչ է այդ նոր տեղը ուր, պարսկական բալլիոյնի թատրոնէն յետոյ, գեղանի Զիպան հրաւիրուած է, եւ զոր պ. Չերազ այնքան հպարտութեամբ կը ծանուցանէ: Յուցահանդէսին ամենէն պարզելի զրօսալայրերէն մէկուն դրանը առջեւ, մարդ մը կեցած է եւ կը հրաւիրէ անցորդները, ազտոտ պոնիմանով մը, մտնել տեսնել իր խանութին հրաշալիքները. «Պիտի տեսնէք, կ'ըսէ, երկու աղջիկ (ատոնցմէ մին ամերիկուհի մըն է, միւսը մեր Զիպան), որոնք պիտի պարեն ձեր առջեւ Սարայի պարերը, Արեւելքի պարերը, նմանը չտեսնուած կատարելութեամբ, հեշտադրգիտ, արեցուցիչ պարեր, եւն. յիսուն սանթիմով, սիրոյ իրական վայելք մը ունեցածի պէս պիտի ըլլաք... մտէ՛ք, այս ճիշդ այնտեղն է որու համար ըսած են (հոս աչքի պզտիկ քթթում մը) le petit trou pas cher...»: Եւ այս պոնիմանը արտասանած ատենը, դրանը առջեւ իր քովը կեցած են, կիսամերկ, Զիպան եւ Ամերիկուհին. ու զանոնք ցոյց տալով, մարդը կը գոչէ. «Տեսէք, ահա մեր գանձերը, ահա մեր հուրիները, բայց չէք կրնար երեւակայել թէ ի՞նչ ձեւեր եւ ի՞նչ շարժումներ ունին երբոր պարելու կ'սկսին, եւն.»

Ներս մտնողները ուրիշ բան չեն տեսներ բայց եթէ ծանօթ, վարնոց, տգեղ փորի պարը, որ մերթ պարզապէս զուղաւորման շարժումները, գալարումները, ամբողջ միմիքը նմանցնելու կը ձգտի...

Ներկայացումէն յետոյ, պահ մը խօսեցայ Զիպային հետ, որ՝ այդ վիճակին մէջ հայրենակցի մը առջեւ գտնուելէն օսաստիկ նեղուած՝ շուարումի ու ամօթի շտապումով մը հազիւ քանի մը բառ կը ցաւ կակազել: Ինծի թուեցաւ թէ այդ խեղճ աղջիկը բնական հակումով մը, ինքնաբեր ու ազատ ձգտումով մը չէ որ այս ասպարէզն ընդգրկած է. չուզելով այդ գործն ընելու ձեւն ունի. իր հետն են տարւոք մարդ մը եւ կրնա մը, որ յայտարարեցին թէ ծնողքն են Զիպային, (թէպէտ ինծի տարօրինակ կը թուի որ հայր ու մայր մը այդպէս բացէ ի բաց իրենց աղջիկը այս անճոռնի գործին նուիրեն եւ անոր մարմնոյն շարժմանցը շնորհիլ յանձն տանենապրիլ). այդ անձերը ըսին ինծի

թէ Յուցահանդէսին փակումէն յետոյ, Գերմանիա կամ Ամերիկա պիտի երթան, այնտեղի թատրոններուն մէջ իրենց ազջիկը պարել տալու: Մեր ժողովուրդը շատ մը թերութիւններ ունի, բայց ընտանեկան պատիւը միշտ բարձր պահած է. եւ առաջին անգամ էր որ այսպիսի հայ ծնողքներ կը տեսնէի. տպաւորութիւնս շատ դժնդակ եղաւ: Կարելի չէ՞ր որ Բարիզի Հայերը ուշադրութիւն դարձնէին այս խեղճ ազջիկան կացութեանը վրայ, եւ ազատէին զինքը վերջնական անկումէն որ կրնայ չուշանալ: Մտողքը ինծիքսին թէ մէկ քանի կովկասցի Հայեր առաջարկեր են որ Պաքու կամ Թիֆլիս տանին ջիպան, (որ իր ճշմարիտ անունովը կը կոչուի Վիթթորիա Սաչիկեան) եւ խոստացեր են որ այնտեղ գերասահկան խումբի մը մէջ կը մտցնեն զայն. բայց այդ խոստումները դեռ խոստումի ձեւէն դուրս չեն ելեր: Օր. Սաչիկեան շատ բարեձեւ, դիւրաթեք ու նուրբ ազջիկ մըն է, դեռ մանկամարդ, ճապուկ ու շնորհալի շարժումներով, խորունկ խօսուն աչուրներով. թերեւ իրօքարուեստագետուէի մը կայ իր մէջ պահուած. մեղք է, եւ ամօթ է, որ զինքը թողունք իր այս անշնորհ ու խաթարիչ կացութեանը մէջ: Անոնք որ այդ ծառայութիւնը պիտի մատուցանեն իրեն, այլապէս ազնիւ ու գեղեցիկ գործ մը կատարած պիտի ըլլան անշուշտ քան այն երկդիմի դերը զոր պ. Չերազ կը կատարէ իր թերթին մէջ ոէքլամ ընելով ինկած հայազջրկան մը փորին:

Ա. 2.



ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

— 0 0 —

«Թան» իր յուլիս 23ի թուով կը հրատարակէ հետեւեալը.

«Մեր «Բըթի Թան»ի 16 յունիսի թուոյն մէջ, հրատարակեցինք այն գեղեցիկ բանաստեղծութիւնը զոր պ. Անաթոլ Ֆրանս արտասանեց Վոսովիլի ցերեկոյթին մէջ որ կազմակերպուած էր պ. Արչակ Զօպանեանի նախաձեռնութեամբ, ի նպատակ Հայաստանի որբերուն:

«Ֆրանսայէն դուրս ուրիշ երկիրներու մէջ, բազմաթիւ մարդասիրական մասնախմբեր կազմուած են եւ կարեւոր գումարներ զրկուած են Հայաստան: Խորհեցէ՛ք, խնդիրը 80000 որբերու համար է...»

«Այս պահուս Գերմանացիք քսաներեք որբանոց կը պահեն Հայաստանի մէջ, Անգլիացիք եւ Ամերիկացիք՝ տասներկուքի չափ, Ռուսները՝ տասնէն աւելի: Գերմանական մասնախումբերու պետերը, պ. պ. Լեքսիուս, Լուման, Ռորպախ, մէկէ աւելի անգամներ անձամբ գացած են Հայաստան, եւ իրենց աչքով տեսած են այն թշուառութիւնը որուն մէջ կ'ոգորի հայ ժողովուրդը: Ասկից զատ, յօգուածներով ու գրքերով, ի վեր հանած են այդ դժբաղդ ցեղին շարքաշուծեմուն, բարոյական կորովի եւ մտացութեան յատկութիւնները:

«Մոսկուայի մէջ, երկու տարի առաջ, պ. Գրիգոր Զանչեան հրատարակեց գիրք մը որուն աշխատակցած էին ուսական մտքին բոլոր ներկայացուցիչները. Մեծ-Դուքս Կոստանդին իր ստորագրութեամբ էջ մը անոր տալ հաճած էր, Թոլսթոյ, Չեխով, Գորոլենքո, Վերեսուկին, Կերեէ, Թիմիրեազով, իշխան Ուխթումաքի, եւն, անոր մէջ յօդուածներ ունէին: Հաստիքը որ գոյացաւ վաճառումովն այս գրքին որ մէկ քանի տպագրութիւն ունեցաւ, Պոլսոյ ուսական դեպպանին ձեռքով Հայաստան զրկուեցաւ, եւ տասնի չափ որբանոց հիմնուեցան այնտեղ:

«Օղտակար պիտի ըլլար որ Ֆրանսան ալ նմանօրինակ հիմնարկութիւններու ձեռնարկէր, ֆրանսերէնը մինչեւ ցարդ Հայոց երկրորդ մայրենի լեզուն եղած է: Լեքսին քաղաքական փրոփականտի դեր մըն է որ կը կատարեն ոուս, գերման ու անգլիացի հայասէրները: Կ'ուզեն իրենց ազգային ազգեցութիւնը տարածել Փոքր Ասիոյ մէջ, կորզել մաս մը այն բարոյական ու անտեսական տղգեցութենէն զոր մենք ունինք այնտեղ:

«Պարտք կը համարինք ուրեմն մեր ժողովրդին ուշադրութիւնը հրաւիրել այն վեհանձն Զանքերուն վրայ զոր կը թափեն այս նպատակով Հ. Շարմիթան, Արեւելքի գպրոցներուն տնօրէնը որ Ֆրանսացի կաթողիկոսներուն պերճախօս կոչ մը ուղղեց, ինչպէս եւ պ. Զօպանեան եւ պ. Անաթոլ Ֆրանս:»

* *

Հայ որբերուն համար, Անաթոլ Ֆրանս ընդունեցաւ . — Անանուն, (Ռուպէ) 2 ֆր. Միշէլ Պրէալ, 10 ֆր. . Լ. Աւժար, 6 ֆր. 5 ս. , Տիկին Լինտել, 25 ֆր. . Ժամէն 25 ֆր. . Անվէրսի «Մաթէն» լրագիրը, 25 ֆր 50 ս. , Լ. Կալէ(նանսի) 100 ֆր. : «Լիկ»ը ընդունած է հետեւեալ գումարները . — տիկնայք Պոնթան եւ Լըպօ, 15 ֆր. , Մ. Ա. , 10 , Ալպիի հանրապետական ընկերվարական ակումբ, 5 ֆր. , Ժ. Պառտէ , 1 ֆր. , Վինիոն , 5. ֆր, Օրիորդ Ռ. , 40 ֆր. , Պիյոն 2 ֆր. 50 ս. : «Թան» լրագրին միջոցաւ «Լիկ»ին գրկուած . — Ֆրանսուէի մը , 500 ֆր. : Պ. Չօպանեան ընդունած է . — Ֆրանսուէի մը, 100 ֆր. , պ. *** 50 ֆր. , պ. Բիէռ մը Պուչօ , 10 ֆր. , պ. Ժան Մոնիէ , 10 ֆր. , պ. Լանսոն , 5 ֆր. , *** , 1 ֆր. , *** 2 ֆր. , պ. Պլոք 3 ֆր. : » Թատերական ներկայացման շուտ շահը եղած էր 2071 ֆր. 20 ս. հանգանակութեամբ կազմուած գումարին հետ , ամբողջութեանը եղաւ 4,611 ֆր. 25 ս. :

«Լիկ տէ արուա տը լ'օմ»ը այս գումարը զրկեց Հայոց պատրիարքին . Օրմանեան պատրիարքը «Լիկ»ին ուղղեց շնորհակալութեան նամակ մը , որմէ հատուած մը հրատարակուեցաւ «Թան»ին եւ «Օոոո»ին մէջ :

«Հայկական Միութեան» կողմէ ի նպաստ հայ բանտարկեալներուն բացուած հանգանակութեան համար , Անահիտը ընդունեցաւ , 21 ֆր. (խուճի մը վիրաբոյժներու կողմէ) , 102 ֆր. զոր պ. Չ. Գոչեան մեղի զրկեց՝ արգիւնք հանգանակութեան մը զոր Աթէնքի հայոց մէջ կատարած է եւ որուն յաջողմանը համար մեծ եռանդով աշխատած է Աթէնք հաստատուած անձնուէր ու եռանդուն հայ մը , պ. Յ. Կարապետեան, այդ 102 ֆրանքի գումարը կազմուած է հետեւեալ նուիրատուութիւններով . (Աթէնքէն) պ. եւ տիկին Յակոբ Կարապետեան , 30 տրախմի, Յարութիւն Կիւլէսէրեան, 8 տ. , Ս. Պաղտասարեան, 5 տ. , Չատիկ Մատոյեան , 5 տ. , Ռիմ, 5. , Ալէքսան Եագճեան 5 տ. , Սերոբէ Կիւրճեան, 5 տ. , Երեմիա Կոտոչեան, 5 տ. , Սիմոն Կոնտուլիկեան , 3 տ. , Մ. Տողրամաճեան , 3 տ. , հայ մը (Կ. Մ.) 3 տ. , Մ. Մանուկեան , 2 տ. , Պ. Տոքթորեան, 2 տ. , Յ. Էթմէքճեան , 2 տ. , Յ. Քօլօեան, 2 տ. , Ռիմ 2 տ. . Մովսիկ , 2 տ. , հայ մը, 2 տ. , Պետրոս Էղոյեան, 2 տ. , Յ. Մաստիկեան, 2 տ. , Ռիմ , 2 տ. , Սիմոն Գըլլճեան , 2 տ. , Անտոն Փափազեան , 2 տ. ,

Բերիքլի Ղունարաքիւ . 2 տ, Յովհ. Տէր-Մանուէլեան, 2 տ. , Թորոս Պամաճեան . 2 տ. , հաճի անդրէաս Գերճակեան , 2 տ. , Ռիմ , 2 տ. , Սողոմոն Գէորգեան, 2 տ. , Մուրատ Միթարեան , 2 տ. , հայ մը (Գ. Ճ.) 2 տ. , Սարգիս Թաշճեան, 2 Ա. , ա. Ս. եւ եղբայրք, 1 տ. , հայ մը 1 տ. , Յովսէփ Մորլեան , 1 տ. , Արմենակ Ճերմակեան, 1 տ. , Սմբատ Տոնտիկեան, 1 տ. , Հայրքոտ , 1 տ. , Աւետիս Պէղիկեան , 1 տ. , Միհրան Նշանեան , 1 տ. , Ռիմ , 1 տ. : (Բիւէէն) Սիմոն Մանիկեան, 5 տ. , Խենթ 5 տ. , Վապուրականցի , 5 տ. , Գասպար Տէր-Յովհաննէսեան , 5 տ. , Կրեաէցի , 2 տ. , Յովակիմ Բարսեղեան, 1 տ. , Առաքել Ժամկոչեան , 2 տ. , կոչիկ ներկող Աբօ , 2 տ. , Իզմիրցի կառապան հաճի Գէորգ , 2 տ. , Միհրան Անոյեան, 1 տ 53 լիբթա : ամբողջը 161 տրախմի 53 լիբթա , սրուն մէջէն 1 տըրախմի 65 լիբթա Աթէնքէն Բարիկ զրկուելու մանաա-բոսթի ծախքը լլալով , կը մնայ 159 տրախմի 98 լիբթա , որ կ'ընէ 102 ֆրանք :

Հանգանակութիւնը, որ այլ եւս փակուած է, գոյացուց ուրեմն ընդամենը 455 ֆր. 55 ս. : Հայկական Միութեան խնդրանքով , պ Բիէռ Բիյառ, ֆրանսացի ծանօթ հայասէրը , այս գումարը ընդունեցաւ պ. Յ. Իսքէնտէրի ձեռքէն եւ յանձնեց «Լիկ տէ արուա տը լ'օմ»ին , որ զրկեց զայն Օրմանեան պատրիարքին , որպէս զի Պոլսոյ հայ բանտարկեալներուն բաժնիլ սայ :

«Օոոո» թերթը իր 1103 թուով հրատարակեց հետեւեալ նոթը .

«Մարդկային եւ քաղաքացիական իրաւանց պաշտպան Ֆրանսական Լիկը, որ արդէն Պոլսոյ Հայոց պատրիարք Մազաքիա Օրմանեան սրբազանին ուղարկած էր 4611 ֆր. 25 ս. ի գումար մը, արգիւնք Վոտվիլի ցերեկոյթին եւ հանգանակութեան՝ ի նպաստ հայ որբերուն , անկից զատ զրկեց անոր 455 ֆր. 60 ս. ի գումար մը , արգիւնք հանգանակութեան մը զոր Հայկական Միութիւնը բացած էր ի նպաստ հայ բանտարկեալներուն : »



ՀԱՅ ՅԵՂԻՆ ԴԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

— 0 —
Բ Ա Ն / Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն
ԱՐՏԱՍՍԱՆՈՒԱԾ 1900 ՅՈՒՆԻՍ 16ԻՆ
Պ Ա Տ Պ Ի Լ Ի ՅԵՐԵԿՈՑՓԻՆ ՄԷՋ

Տիկիներ, պարոններ,

Եղբայրներ այն հարեբաւոր տղեկներուն որոնք, Հայաստանի կոտորածներուն եղբրական շրջանին, մեռան՝ սուիիններու ծայրը շամփրբուած. կամ կրակով յամբօրէն խորովուած եւ կամ ժայտերու վրայ ջախջախուած, ութսուն հազար որբեր այս պահուս կը տապալարէին խորունկ թշուառութեան մը մէջ, ջարդերու հաւանական վերսկսման մը սարսափին ու սովամահ կորնչելու վախին միջև երերուն: Այդ խեղճերուն մէկ մասը ամփոփուած է որբանոցներուն մէջ զոր կը պահպանեն կովկասիու Եւրոպայի Հայերը եւ օտար մարդատէրներու մասնախումբերը: Բայց դարմանուելիք չարիքը չա՛տ ընդարձակ է, եւ ստուար մաս մը այդ որբերէն բոլորովին լքուած կը մնան, իրենց տխրած էութիւնները քաշկռտելով իրենց քարուքանդ եղած հայրենիքին աւերակներուն մէջէն, իրենց հայրերուն արիւնովը դեռ միացող հողին վրայ: Իրենց հայրերը, մեծ մասամբ հանդարտ ու աշխատասէր զինաթափ գեղջուկներ, մեթոտականօրէն ու պազարիւնօրէն մորթութեցան բարձրագոյն հրամանով, որովհետեւ բողոքեցին անհանդուրժելի սարկական կացութեան մը դէմ ուր տաճիկ բռնապետութիւնը զիրենք կաշկանգած կը պահէր եւ որովհետեւ գործադրութիւնը պահանջեցին այն մէկ քանի տարրական բարենորոգումներուն զոր նոյն ինքն Եւրոպան անհրաժեշտ համարած էր եւ որոնց իրականացմանը հսկելու յանձնառու էր եղած՝ երեք դաշնագրով:

Պիտի չյամենամ — ատի տաժանելի պիտի ըլլար ինծի համար — այս տխուր պատմութեան տարօրինակութիւնը որակելու: Պիտի նախընտրեմ իմ շնորհապարտութիւնս յայտնելու փութալ այն մեծանուն Ֆրանսացիներուն որոնք հաճեցան համախմբել այսօր իրենց բարի կամեցողութիւններն ու իրենց տաղանդները՝ քիչ մը թեթեւցընելու համար այդ որբերու բանակին թանձրակուտակ թշուառութիւնը, եւ որոնք ատով միանգամայն ուղեցին

իրենց բարեկամութիւնն ապացուցանել դէպ ի ժողովուրդ մը որ, իբ պատմութեան ամենէն մութ շրջաններէն մէկուն մէջ, ինքզինքն իսկ որբ զգաց: Խորապէս շնորհակալ եմ «Մարդկային Իրաւանց Նիզակակցութեան» որ, հաւատարիմ 89ի մեծ սկզբունքներուն որոնք Ֆրանսան բոլոր ազատ մարդերուն մտաւորական հայրենիքը դարձուցին, հաճեցաւ իր հովանաւորութիւնը շնորհել այս բարձր մարդասիրութեան գործին: Անսահման երախտագիտութիւն մը ունիմ արտայայտելու իմ սիրելի ու մեծարոյ վարպետիս Անաթոլ Ֆրանսին, որ մեր դատին կը բերէ, ա՛յնքան ազնիւ ու գորովագին յուզմունքով մը, իր մեծ ձայնին թանկագին աջակցութիւնը, եւ տիկին Ռէժմանին, որ այս գործն իր արուեստագիտական հովանաւորութեանը տակ առնելով, ցոյց տուաւ թէ իր արուեստը խորունկ ու կաթողին սրտէ մը բղիւնուէն համար է որ այնքան պաշտելիօրէն մարդկային է եւ կենդանի: Շնորհակալ եմ նմանապէս այն բոլոր մեծ արուեստագէտներուն, — մեծագոյնները Բարլիզի, — որոնք իմ հրաւերիս հաճեցան այնքան սիրուն ընդունելութիւն մը ընել, եւ որոնց միացած մասնակցութիւնը այս ցերեկոյթը կը դարձնէ տօն մը գեղեցկութեան որքան բաւութեան:

Այս ազնիւ համակրութեան ցոյցը զոր մըտածող Ֆրանսային մէկ հատընտիր մասը կ'ընէ այսօր մեր ժողովրդին, խորին ու երկարածիք արձագանք մը պիտի ունենայ մեր աւերուած երկրին մէկ ծայրէն միւսը, եւ պիտի կազդուրէ անոնք որ կը տառապին հոն եւ որոնք, հակառակ այն ամէն յուսախաբութիւններուն զոր կրեցին, կը յուսան միշտ: «Ֆրանսա մեզ չէ լքած ուրեմն» պիտի մտածեն անոնք որ լուծերու անարգագոյնին ներքեւ կը հեծեն, եւ առիկա իրենց համար բարձր միտիթարանք մը պիտի ըլլայ: Որովհետեւ, — պիտի ձեզի խոստովանիմ ամենայն անկեղծութեամբ, — ոչինչ այնքան դժուարակ ու կսկրծեցուցիչ եղաւ հայ ժողովրդին, որքան ինքզինքը լքուած տեսնելը՝ մեծ կոտորածներուն ատեն, ոչ թէ Ֆրանսայէն, — քանի որ գտնուեցան քանի մը ազնիւ ձայներ որ այս երկրին հողին արտայայտեցին՝ գործուած ոճիրին դէմ բողոքելով, — այլ այս երկրին մէկ քանի զիւլանագէտներէն որոնք անտարբեր ու նոյն իսկ թշնամական գիրք մը բռնեցին զոհերուն նըկատմամբ: Հայերը կը սքանչանան Եւրոպայի

միւս մեծ ազգերուն վրայ , բայց կը սիրեն Ֆրանսան , նախ որովհետեւ այս անունը իրենց համար հոմանիշ է արդարութեան , ազատութեան , գեղեցկութեան գաղափարներուն , եւ յետոյ՝ որովհետեւ դարաւոր ու ներքին կապերով Ֆրանսային կապուած կը զգան զիրենք : Միջին Դարէն ի վեր , ուր Լուսինեաններու ֆրանսական գերդաստանէն իշխաններ հայկական գահը բազմեցան , մինչեւ մեր ժամանակը ուր մեր երիտասարդութեան մեծագոյն մասը Ֆրանսա կուգայ ուսում ստանալու համար եւ ուր մեր գրականութիւնը գրեթէ տարամերժօրէն ֆրանսական մտածման ներգործութիւնը կը կրէ , Հայերը Ֆրանսան նկատած են միշտ իբրեւ երկրորդ հայրենիք մը : ցուսախաբու թիւնը զոր պահ մը կրեցին , իրենց մէջ ցաւազին շուարում մը ծնուց եւ անսահման տըխրութիւն մը : Այս պատճառաւ է որ կրկնապէս երախտապարտ եմ այն Ֆրանսացիներուն որոնք համակրութեան այսքան գեղեցիկ արտայայտութիւն մը կ'ընեն դժբաղդ ժողովրդի մը , ոչ միայն որովհետեւ անգնահատելի բարոյական ծառայութիւն մը կը մատուցանեն հալածուած ազգի մը դատին , այլ նաեւ , ու մանաւանդ , որովհետեւ անգամ մը եւս՝ ու այսքան հանդիսաւոր կերպով՝ ապացուցանելով թէ Ֆրանսա միշտ բարեկամն ու պաշտպանն է կեղեքուած ժողովուրդներուն , նոյն ինքն Ֆրանսայի ամենէն նուիրական շահերը պաշտպանած կ'ըլլան :

Եւ եթէ խոշոր կարեւորութիւն մը կուտամ այս ցոյցին , պատճառը այն է որ համոզուած եմ թէ ոչինչ այնքան թանկագին է չարաբուած ժողովուրդներու դատին համար՝ որքան մտածման մարդոց համակրութիւնը , անոնք են որ հանրային կարծիքը կը կազմաւորեն ու կը վարեն , եւ անոնց ձայնն է որ վերջ ի վերջոյ կը յաղթանակէ , ես վստահ եմ որ այն պահուն ուր ջարդերն սկսան , եթէ բովանդակ եւրոպայի մտաւորական դասակարգը աւելի ճշգրիտ տեղեկութիւններ ունենար զէպքերուն մասին եւ եթէ աւելի լաւ ճանչնար մեր ժողովուրդը , զայրոյթի միաձայն աղաղակ մը պիտի արձակէր այնպիսի ուժգնութեամբ , որ պաշտօնական եւրոպան պիտի ստիպուէր մարդասպանին ձեռքը կեցընել : Որովհետեւ եթէ «հայկական խնդրոյն» լուծումը իր մէջ կը պարունակէ դժուարութիւններ ու կնճոտութիւններ , ժողովուրդ մը խողխողելը դահիճին արգիլելու իրողութիւնը պարզ ժխտէ մը

կախեալ էր , զիւրին ժէսթէ մը , ու եւրոպան այդ ժէսթը չըրաւ : Չըրաւ զայն , կը կրկնեմ , որովհետեւ եւրոպայի ժողովուրդները՝ այդ թուականին՝ շատ սխալ տեղեկութիւններ էին ստացած եւ մեզ չէին ճանչնար : Այն միջոցին ուր մեր երկրին մէջ կիւնիւր կը բղքուէին ու եկեղեցիներն ապաստանած հազարաւոր մարդիկը բեթրով կ'այրէին , մենք կարող եղանք եւրոպայի մէջ տեսնել անձեր որոնք մեր ժողովուրդը ցոյց տուին իբրեւ աւազակներու զէջ մը որ Օսմանեան Կայսրութեան բարեկարգութիւնը (1) կը խանգարէր : Այսպէս , չարարուողները նախատեցին , ի վեր հանեցին , չափազանցելով , թերութիւններն այդ ժողովրդին մէկ մասնաւոր հատուածին , զանոնք ընդհանրացուցին , բովանդակ ժողովրդին վերագրեցին . ու ոմանք այնչափ յառաջ պացին որ մինչեւ անգամ Սուլթանը շնորհաւորեցին՝ աշխարհս փտութեան տարբէ մը մաքրելուն համար . . . Ոչ մէկ շովինութիւն չունիմ ես , եւ սէրը զոր կը տածեմ իմ ժողովրդիս համար , կոյր ու մուկանդ հիացումէ մը չի կազմուիր . կ'ընդունիմ որ մեր ժողովուրդը զերծ չէ թերութիւններէ . բայց այդ թերութիւնները դարաւոր գերութեան մը արդիւնքն են , եւ կ'անպատուեն ոչ թէ շլթայուածը , այլ անոնք որ շլթաները դարբնեցին : Չեմ կարծեր որ գեղեցիկ ոչ ալ աղնիւ ըլլայ դարչահոտ գնտանի մը մէջ փակուած մարդու մը միայն աղտոտութիւնը տեսնել : Այդ մարդուն սիրտը շօշափելու է : Ու սիրտը , հայ ժողովրդին մէջ , առողջ ու կենսախայտ է մնացած : Միակ պատճառն այն զորովին զոր կը զգամ իմ ցեղիս համար , այն է թէ զայն կարող կը նկատեմ կեանք ստեղծելու , եւ թէ քաղաքակրթութեան լաւ բանւոր մը կը թուի ան ինծի :

Եւ ահա ինչ որ եւրոպա շատ քիչ նկատեց այն օրերուն մէջ երբ գերագոյն տանջանքները կրեցինք մենք եւ երբ կարծեցինք որ աշխարհս պիտի յիշէր խոնարհ բայց արի եւ նշանակալից բաժինը զոր մեր ցեղը ունեցած է դարերէ ի վեր քաղաքակրթութեան գործին մէջ : Փոխանակ այն յարգական համակրանքին զոր եւրոպական ժողովուրդները ցոյց տուին Յոյներուն՝ երբ անոնք , միեւնոյն լուծին ներքեւ տառապելով , աչուրնին զէպ ի եւրոպա դարձուցին , լոկ դթութեան համակրանք մըն էր որ եւրոպայի հանրային կարծիքը յայտնեց Հայոց նկատմամբ : Մենք յաւակնութիւնը չունինք մեր ժողովուրդը բաղդատութեան

գնելու յոյն ժողովրդին հետ, որ մեծագոյնը եղաւ բոլոր ժողովուրդներուն: Բայց եթէ Յոյնը հիմնադիրը հանդիսացաւ արեւմտեան քաղաքակրթութեան, Հայը անոր ամենէն արի զինուորներէն մին եղաւ. եւ կը կարծեմ թէ անարդար է որ այս դերը չճանչցուի: Արդի աշխարհը երախտապարտ է Յոյնին՝ որովհետեւ ան Պարսից արշաւանքը կասեցուց ու եւրոպան ազատեց ասիական տիրապետութենէն: Արդ, այս ստեղծագործութեան ու ինքնապաշտպանութեան գործին մէջ, Հայը Յոյնին համար մշտական ու կարեւոր օժանդակ մը եղած է: Հայոց պատմութիւնը շարունակական դիմագրութիւն մըն է Ասիոյ դէպ ի եւրոպա խուժանքին: Քրիստոնէութիւնն ընդունելէ առաջ, Հայը դեռ որոշ գիտակցութիւն մը չունի իր դերին. ուրիշ բանի չի մտածեր բայց եթէ իր հայրենիքը պաշտպանելու Արեւելքի ինչպէս Արեւմուտքի թշնամիներուն դէմ, Պարսկին ինչպէս Հռովմայեցիին դէմ. ճամարիտ է որ ցեղին միտքը արդէն դէպ ի Արեւմուտք կ'ուղղուի. Յունաստանն է որ զինք իրեն կը քաշէ: Մեր Տիգրան թագաւորը, Միհրդատի դաշնակիցը, Աթէնքէն բերել տուած էր իր արքունիքին համար, հսկողներ, արուեստագէտներ ու թատերական խումբեր, եւ իր Արտաւազդ որդին յունարէն լեզուով կը շարադէր ողբերգութիւններ որոնց մասին Պլուտարքոս գովեստով կը խօսի: Բայց մանաւանդ քրիստոնէութիւնը ընդունելէ յետոյ, մեր ժողովուրդը վերջնապէս կը յարի եւ կը դաշնակցի արեւմտեան աշխարհին: Ասիական հրոսներու բոլոր արշաւանքներուն ճամբուն վրայ զետեղուած, անոնց առաջին բաղխումն ինքը կը կրէ, եւ իր այնքան յամառ որքան փոփոխելի դիմագրութեամբ՝ անոնց դէպ ի եւրոպա խոյանքը կը մեղմացնէ, կը յամրացնէ: Ամբողջ երկու դար կը մաքառի հսկայ Պարսկաստանին դէմ որ կ'ուզէ զայն նուաճել ու իր մէջը ձուլել, եւ չի յաջողիր: Յետոյ կը մաքառի Արաբներուն, Թուրքմէններուն, Թաթարներուն, Մեմլուքներուն, Թուրքերուն դէմ, կը մաքառի՝ իր գոյութիւնը պահպանելու համար եւ միանգամայն պաշտպանելու համար արեւմրեան գաղափարները որոնցմով տողորուած է եւ որ զայն վտանգաւորապէս կը կղզիացնեն այդ մեծ արիւնոտ ջրերուն մէջտեղը. եւրոպական քաղաքակրթութեան յառաջապահ գունդը կը կազմէ: Խաչակիրները, իսլամութեան դէմ իրենց մղած պայքարին մէջ, ինքնա-

բուխ ու խանդավառ օգնութիւն մը գտան մեր Փոքր Հայաստանի իշխաններուն կողմէ, որոնք անոնց զօրք ու պաշար փոխ տուին, այն փոքր Հայաստանին որ, ինչպէս կը գրէ Մարքո Բոլո իր ուղեւորական նկարագրութեանց մէջ «կը կառավարուէր մեծ արդարութեամբ ու տնտեսագիտութեամբ» եւ որուն նաւահանգիստը, Բայաս, «չտեմարածն էր այլազան թանկագին ապրանքներու եւ Արեւելքի բոլոր հարստութիւններուն, կարծես դուռը արեւելեան երկիրներուն»: Ահաւասիկ՝ արդէն՝ ինչ որ կը մտածէր Հայոց մասին մեծանուն անձ մը որ Հայ չէր. «Հայ ազգին քրիստոնեայ եկեղեցւոյն ու հանրապետութեան մատուցած ուրիշ ծառայութիւններուն մէջ, կը գրէ Գրիգոր ԺԳ. պապը իր 1384ին հանած Romana Ecclesia կոնդակին մէջ, ուշադրաւ ու մասնաւոր յիշատակութեան արժանի է այն թէ երբ քրիստոնեայ իշխաններն ու բանակները Ս. Երկիրը բարբարոսներու ձեռքէն ազատելու գացին, Հայերը ուրիշ բոլոր ազգերէն աւելի փութկոտ ու եռանդուն կերպով օգնութեան հասան՝ մարդ, ձի, դէնք, պաշար, խորհուրդ տալով անոնց, մէկ խօսքով՝ իրենց բոլոր ուժովը ամենամեծ քաջութեամբ ու հաւատարմութեամբ օգնեցին այդ սրբազան պատերազմներուն մէջ:»

Բաց ի այդ դերէն զոր իր սեփական հայրենիքին մէջ կատարած է, Հայը յաճախ իր ուժերը փոխ տուած է յոյն-լատին աշխարհին զինուորական եւ մտաւորական կեանքին: Ներսէս, Յուստինիանոսի անպարտելի զօրավարը, հայազգի էր. Յովհաննէս Չմշկիկ կայսրը, Բիւզանդիոնի մեծագոյն պատերազմիկներէն մին, Հայ էր. եւ Հայ էր Պրոյերեսիոս, հանձարեղ հետորը որուն Հոռոմ արձան մը կանգնեց սա վերտառութեամբ՝ «քաղաքներու թագուհին, ճարտասաններու թագաւորին»: Նոր ժամանակներուն մէջ, Ռուսը յաջողեցաւ Պարսկին ու Թուրքը ջախջախել ու կովկասը գրաւել՝ շնորհիւ հայ ռազմագէտներու, Մատաթով, Տէր-Ղուկասով, Շուքովնիքով, Լազարէֆ, Լորիս Մելիքով զօրավարներուն: Անգրէաս Արծրունի հանքաբանը եւ հսչակաւոր Այվազովսքի նկարիչը, որ վերջերս վախճանեցան, Հայ էին: Ու նայն իսկ օսմանեան պետութեան մէջ, Հակոակ այն ստրուկի կացութեան որ իրեն կ'արգիլէր իր կարողութիւններն ազատօրէն զարգացնել, Հայը միշտ արտադրիչ ու կենսունակ տարրը կազմած է. ան է որ, Յոյնին հետ,

Փոքր Ասիոյ մէջ մշակած է երկրագործութիւնը, վաճառականութիւնը, ճարտարարուեստը . Հայերն են որ Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ ամենէն առաջ հաստատած են սպարան, թատրոն, պարբերական մամուլ, եւն կերպասները, ասղնագործութիւնները, գորգերը, ոսկերչական շինուածքները, որոնք հիացում կը պատճառեն Եւրոպայի մէջ իբրեւ թրքական ճարտարարուեստի արտագրութիւններ, գրեթէ տարամերժօրէն Հայերու ձեռքով յօրինուած են : Կ. Պոլսոյ ճարտարապետական գեղեցկութիւնները մեծ մասամբ ծնունդ են հայ հանճարին . Սիւլէյմանիէյի հրաշալի մզկիթը, այդ օսմանեան Այա Սոֆիան, գործն է Սինան ճարտարապետին որ Հայ էր . ու հայ ճարտարապետներ են, Պալեանները, որ կառուցած են Չրազանի, Պէյլէրպէյի պալատներն ու Տոլմապահչէինը, «որ, կարծես, կը գրէ Թէոֆիլ Կոթիէ, վենետիկեան բալաձձօ մըն է, աւելի ճոխ, աւելի ընդարձակ, աւելի նրբաքանդակ, աւելի մանրապաճոյճ, Գանալ կրանտէէն Վոսփորի ավուները փոխադրուած», եւ հայ ձեռքեր են որ նոյն իսկ Երլտրզ-Քէօշկի պալատը կանգնած են ուր կը բնակի այն հրէշը որ երեք հարիւր հազար հայ կոտորել տուաւ . . .

Ահա գործը զոր կատարած է այս ցեղը : Հիմա բառ մը պիտի ըսեմ իր նկարագրին մասին, որովհետեւ ան ունի իրեն յատուկ, բոլորովին որոյ նկարագիր մը : Եթէ Յոյնը իր պայծառ ու ամբողջական իմացականութեամբն եւ ձեւական գեղեցկութեան իր պաշտումովն ու ներդաշնակ, աղնիւ կեանքի մը բաղձանքովը բնորոշուած է, Հայը կը յատկանշուի անկքելի յամառութեամբ մը, կարծր յարումով մը իր ցեղական աւանդութեանց ու հաւատալիքներուն ու պարզ, ազատ, աշխատալից կեանքի մը ցանկութեամբը : Ընտանիքը, Հայուն մէջ, հին նահապետական ընտանիքին խտտաբարոյ մաքրութիւնն ու երկիւղած կարգապահութիւնը պահպանած է : Հայ եկեղեցին թերեւս բոլոր եկեղեցիներուն մէջէն այն է որ ամենէն աւելի պահած է ժողովրդական ու պարզ ոգին Յիսուսի հիմնած եկեղեցւոյն : Այս պարզութեան ձգտումներն են որ Հայերը մղած են պահ մը կուրի մտնել յոյն ոգիին հետ : Հայերը պարագլուխներն էին Բիւզանդիոնի պատկերամարտ շարժումին . եւ Հայերն են որ հիմնած են Պալիկեաններու այն կարեւոր ազանդը որ տեսակ մը ուրուագիծ եղաւ Բողոքականութեան զոր դարեր յետոյ Լուսեր պիտի

հիմնէր : Հայ ցեղին յատկանիշներուն մէջ յամառութիւնը ամենէն առաջ յիշեցի, եւ արդարեւ ոչինչ այնքան շեշտուած է իր մէջը որքան կուս յարումը հայրենի հողին ու ցեղային աւանդութիւններուն եւ պատրաստակամութիւնը զանոնք ց մահ պաշտպանելու կամ մահն ու ամենէն զարհուրելի չարչարանքներն ուրացութեան ամօթէն նախամեծար համարելու : Ձեր մեծ Գորնէյլը անգիտակցաբար արգարութեան հարկ մը մատուցած է մեր ցեղին, քըրիստոնէական դիւցազնութիւնը պանծացնելու համար՝ հայկական գէժ մը, Պոլիքսոսը ընտրելով : Հոովմայեցիին ինչպէս Պարսկին, Արաբին ինչպէս Թուրքին դէմ, Հայը միշտ ցոյց տուած է Պոլիքսոսի հաստատամտութիւնը եւ զոհարերութեան ոգին : Գեռ վերջերս, մեծ ջարդերուն միջոցին, երբ Տաճիկները մահուան սպառնալիքով Հայերն ստիպեցին իսլամութիւնն ընդունելու, ամբողջ ցեղը Պոլիքսոսի ոգին վերգեցաւ . հարիւրաւոր աղջիկներ ինքզինքնին գետերը կամ գահավէժները նետեցին հարէմէն ու բռնի կրօնափոխութեանն ազատելու համար . եւ տեսնուեցան այն որ քահանաներ որոնք ստոյիկեան քաջութեամբ մը նախամեծար համարեցին ողջ ողջ մորթազերծ ըլլալ կամ մաղմաղի վրայ խորովուիլ քան թէ ուրանալ իրենց հայրերուն հաւատքը :

Եւ պէտք է ըսեմ թէ այս յարումը հաւատքին՝ զուտ քրիստոնէական միատիքականութեան զգացում մը չէ, այլ ամէն բանէ առաջ սէրը («հայ») հաւատքին, «ազգային» եկեղեցիին, գորովն է եւ մեծարանքը նախահայրերու դաւանանքին համար, ցեղին սէրն է ինքնիրեն համար :

Որովհետեւ հակառակ ա՛յնքան տառապանքներու եւ նուաստացումներու զոր ստիպուեր է կրել, այս ժողովուրդը հպարտ է ինքնիրմով : Ուժ մը կը զգայ ինք իր մէջ : Եւ իբրօք ալ, հակառակ բազմազան ու հզօր ազդեցութիւններու որ իր վրայ ներգործած են, այս ժողովուրդը ունի ուժով ու յատակօրէն գծուած անձնականութիւն մը : Իրեն յատուկ լեզու մը ունի, լեզու մը որ ամենէն հարուստներէն ու ճապոնկներէն մին է, որ իր հին ձեւին մէջ կրցած է շքեղօրէն վերարտադրել հրէական, յունական եւ ասորական գրականութեանց հրաշակերտները եւ որ իր արդի ձեւին մէջ կը յաջողի ցրլացնել՝ առանց բնագրին նուրբ գեղեցկութիւններէն ոչինչ կորսնցնելու՝ Փըլլոպէոի, Կոնքուոի եւ Անաթոլ Ֆրանսի էջեր :

այս ժողովուրդը ունի մասնաւոր ճարտարապետական ոճ մը, իր գեղջկական միամտութեան մէջ շնորհալի ու նուրբ հրապոյրով մը համակուած. ունի յատուկ այրուբն մը եւ տօմար մը. ու ինքնագլուխ եկեղեցի մը որ խորապէս կը կրէ ցեղին գրոշմը :

Հակառակ ինք իրեն համար այս հզօր յարու մին, հայ ժողովուրդը միշտ ցոյց տուած է բաց միտք մը բոլոր օտար լաւ ազդեցութիւններուն, քաղաքակրթութեան բոլոր նորութիւններուն : Կիւթենպերկի դիւանին յիսուն տարի յետոյ, հայ գաղթականները որոնք Հոլանտա եւ Իտալիա հաստատուած էին, փութացին այդ գիւտէն օգտուիլ եւ իրենց հայրենիքի եղբայրներուն համար տպագրեցին ազօթքի, պատմութեան ու կախարդութեան գրքեր : Այս պահուս իսկ, այստեղ՝ Բարիդի մէջ, այս ժողովուրդը բաւական հզօր ապացոյց մը տուաւ իր բաց ու ճապուկ մտքին եւ ստեղծագործութեան յատկութիւններուն : Երկուստարդ Հայ մը, Պ. Մանուէլեան, հիւսուածաբանական հետազոտութիւններ կատարեց որոնք, իր վարպետին Պ. Մաթիաս Տիւվալի աշխատակցութեամբ, յանգեցան շատ կարեւոր վարկածի մը գիւտին, «նեովի-նեովորմ»ի վարկածին, որ գիտութեան մէջ «Տիւվալ-Մանուէլեան վարկած» անունը կը կրէ : Ուրիշ հայ մը, պ. Էսկար Շահին, փորագրիչ-նկարչի շքեղ տաղանդ մը ի յայտ բերաւ, օֆօրթներու եւ բուանթ-սէշներու շարքի մը մէջ, որոնք պ. պ. Ռոփէ Մարքսի եւ Կիւսթալ Ժէֆուուայի դնահատման համեմատ, զինքը այդ արուեստին վարպետներուն կարգը բարձրացուցին : Եւրոպայ մը, պ. Վ. Սվաճեան, զոր այստեղ իսկ վայրկեան մը առաջ ծափահարեցիք, Արեւելքի հոգիէն անտիպ մաս մը ձեռնարկեց ի լսյս հանել իր երաժշտական ինքնատիպ էջերուն մէջ : Տաճիկներուն որ կարծեցին թէ հայ ժողովուրդը պիտի կարողանան ջնջել՝ կիներ ու երախաներ փողոտելով եւ անդէն գեղջուկներ մորթելով այդ ժողովուրդը լաւագոյն պատասխան մը չէր կրնար տալ : Ահաւոր աղէտքէ մը անմիջապէս յետոյ, մոռաւորական կենսականութեան ամենաբարձր ապացոյցներ կ'ընծայէին, ու Տաճիկն ջարդողի տաղանդին իր ստեղծողի տաղանդը կ'ընդդիմաբերէ : Այս պատասխանը, արդէն, տեսակ մը վրիժառութիւն ալ է :

Կ'ուզեմ խօսքս աւարտել՝ ի վեր հանելով ուրիշ ծառայութիւն մը, բոլորովին տարբեր տեսակի, զոր այս ժողովուրդը կը մատուցանէ

Եւրոպային նոյն իսկ այս բոպէին : Գերմանացիք Պաղտատի երկաթուղիին արտօնութիւնը ստացան. Ռուսերը այս օրերս ձեռք ձեռքեցին Սեւ ծովու աւազանին մէջ երկաթուղիի մը արտօնութիւնը եւ Ֆրանսացիները՝ Դամասկոսի երկաթուղիինը : Այն օրն ուր Փոքր Ասիան երկաթուղիներու լայն ցանցով մը պիտի աղօսուի, շուտով պիտի վերականգնի ան իր անկումէն ուր թրքական ռէժիմը զինքը կը պահէ, եւ ինչպէս երբեմն՝ քաղաքակրթութեան մեծ կեդրոն մը պիտի ըլլայ դարձեալ : Այս երեւոյթը որ քսաներորդ դարուն գեղեցկագոյններէն մին պիտի կացուցանէ, արդիւնքը պիտի ըլլայ Հայոց թափած արիւնին : Այդ արտօնութիւնները զոր Սուլթանը կը շընորհէ, հայկական ջարդերուն փրկանքն է որ կը հատուցանէ Եւրոպային :

Ի՞նչ զիրք պիտի բռնէ Եւրոպան հայ ժողովրդին հանդէպ, այն օրն ուր այդ երկիրներուն մէջ պիտի մտնէ վերջնապէս զանոնք կազմակերպելու համար : Իր լոքոմոթիվները անողորմաբար պիտի կոխկրտեն անցնի՞ն այդ ժողովրդին ողբաւոր մարմնոյն վրայէն ու վերջին հարուածը պիտի տան իրեն, թէ յիշելով ամէն ինչ որ այս ալեւոր ժողովուրդը քաշած է այն գաղափարներուն համար որոնք Արեւմուտքին են, Եւրոպա պիտի չնորհէ անոր այն մէկ քանի տարրական ազատութիւնները զորոնք կը ցանկայ ձեռք ձգել՝ որպէս զի կարենայ Եւրոպայի հովանաւորութեան տակ, վերսկսիլ քաղաքակրթութեան քաջ բանւորի եւ անձնուէր զինուորի իր գործը : Ի՞նչ պիտի ըլլայ Եւրոպայի պատասխանը այս հարցումին զոր իր երկարածիք մարտիրոսութեանը շարչարանքներուն մէջէն այս ժողովուրդը կ'ուզէ Եւրոպային : Ես կ'ուզեմ հաւատալ, տիկիներ ու պարոններ, թէ այդ պատասխանը արդարութեան պատասխան մը պիտի ըլլայ :

Ա. ՉՕՊԱՆԵԱՆ



ԽԱՐՈՑԿԸ

ԱՌ Լ. Ս.

94ր եւ 95ր, Պոլսոյ մէջ, Արհաւիրքին երկու առաջին տարիներն եղան : Այրերը, գործի միջոցին, փոխելով յանկարծ իրենց ձայնին շեշտը ներսերը պատահած ջարդերու լուրերը կը փրսփըսային իրարու ականջն ի վար : Գիշերը, լամբարին լոյսով, կիներն ու տղաքը՝ շունչերնին բռնած՝ մտիկ կ'ընէին օրուան մէջ իմացուած նոր «դէպք»ին պատմութիւնը : Եթէ գետնայարկի սենեակ մընէր ուր կը գտնուէին՝ ձայնը ցած կ'ելլէր, հազիւ լսելի . հակառակ ատոր, գոց վարագոյրը յաճախ տեղի կուտար, երկիւղոտ մատներու տակ, նայուածքին որ դուրսը, պատուհանին ետեւ, հաւանական լըրտեսն մը կը փնտռէր : Երբոր, կամաց կամաց, եղելութիւնները, ահուելի, որոշուեցան, կըսկիծին հետ որ կը գալարէր սրտերը, ծնաւ մեհենոյն ատեն յոյսը մօտաւոր վերջի մը մեր հինաւուրց ցաւերուն, յոյսը Ազատութեան . ու շատ անգամ առաջինը տեղի կուտար վերջինին, անոր ցնծագին պարին առջեւ : Ամէն օր, եւրոպական մարտանաւեր էին որոնք Տարտանուէն կ'անցնէին, անընդհատ երթեւեկութիւն. ներ պատրիարքարանին ու դեսպանատանց միջեւ . հանդէսներ, բաց օդին, ուր տարիներէ ի վեր արգիւտած Հայաստանին անունը կը հընչէր, կը գոռար, երկինք կը թռչէր նաշխուն արախճիներուն հետ՝ իբրեւ թէ, արդէն իսկ, իրականացած ըլլար մեր երազը . յեղափոխական ծանօթ անձեր որոնք ազատ համարձակ կը պտըտէին քաղաքին մէջ ու անտարակուսելի մտածումը կ'առթէին թէ տաճիկ կառավարութիւնը կը վախնար մեզմէ . ասոնք, աւմենքը, միացած, կը գինովցնէին մեզ ու ա'լ անուշադիր ականջով մը մտիկ կ'ընէինք դաւաճներէն հասած նորագոյն ջարդերու գուժերուն : Ըսած չէի՞ն մեզի, Պատմութիւն ի ձեռին, թէ արիւնի գետ մը ցատքելով միայն կարելի է տիրել ազատութեան :

95ի ցոյցը, սակայն, շատ հաւատքներ զըրդեց : Հիմա նորէն եւ աւելի շատ իրիկուան մութը կոխելէն ետքը, հայ տուներուն զուռները խորհրդաւոր հարուածներով կը զարնուէին : Երբտասարդ մը, շուսով ներս սպրդած ու զուռը խնամով իր ետեւէն գոցած՝ տունին «էֆէնտին» կը հարցընէր, գրպանէն լայն ծալուած թուղթ մը կը հանէր որուն տակը կար-

միր կնիք մը կը փայլէր ու Ձէյթունի պէնք հայթայթուելու համար կամ պարզապէս սուրբ գործին անունով՝ նախապէս քոմիթէին կողմէ որոշուած «նուէրը» կը պահանջէր ու կը մեկնէր, բիրտ ու սպառնալից՝ պատահական մերժումի մը առջեւ : Հիմա, ճշմարիտ փրկանքի մը պէս կուտային պահանջուած դրամը, սակարկելով յաճախ, պզտիկ խանութպանէն մինչեւ մեծ վաճառականը, չփնտռելով անգամ թէ որ կուսակցութեան արկղը կ'իյնալ անկկայ, եթէ շտաբիկէին՝ յաջորդ անգամուն՝ թէ դեռ նոր տուած էին իրենց : Միեւնոյն ատեն, երբոր ընտանիքը, բակին մէջ, հաւաքուած կը գտնուէր ճաշի սեղանին շուրջը, յանկարծ մէկ մարդու պէս կը բռնէր շնչառութիւնը ու մտիկ կ'ընէր դուրսը փողոցներէն անցնող հեծեալ ոտտիկաններուն քառատրոփին : Երկիւղը, գիշերուան ստուերին պէս, տանը անկիւններէն դուրս կ'ելլէր նորէն, առաջ կը քալէր ու կը լեցընէր սրտերը :

Այդ ատեն էր որ մայրս կրկին ձեռք առաւ իր հին մէկ պահանջումը : Գրքերս, տունին մէջ, իր ամենօրեայ մտատանջութիւնն էին : Այն օրէն ի վեր ուր Վոսիփորի շոգենաւի մը մէջ երթտասարդ հայ մը, երկար մութ գոյն ֆէսով, մօտեցած էր ինծի եւ ուսանողի գրքերս թըղթատել ուզած, այն օրէն ի վեր իմ հայերէն գրքերս, կամ անոնց մէջէն անոնք որոնք կըրնային վտանգաւոր նկատուիլ, մտած էին թիթեղէ սուփերու մէջ ու զացած առատազին դերաններուն տակ աներեւոյթ ըլլալ : Նտքէն, այդ թաքստոցն ալ բաւական ապահով չէինք տեսած ու պարտեզ տարած էի մանիշակներու տոճի մը քով թաղելու՝ օր մը կրկին անկէ ալ անվստահ իր առաջուան տեղը բերելով :

Հիմա, մայրս կ'ուզէր որ այրեմ զանոնք : Անվերջ աղաչանքներ էին ու սպառնալիքներ որոնք ամէն իրիկուն զիս կը ձանձրացնէին ու կը ջղագրգռէին ալ Միշտ դիմադրած էի, չկըրնալով ցաւագին զոհողութիւնը յանձն առնել վերջնական բաժանումի մը այն ամէն հասորններէն որոնք պատանութիւնս սնուցած էին, որոնցմով արթնցած էր սրտիս մէջ եւ աճած հայրենիքիս սէրը եւ որոնք, հիմա, թէ պէտանհետ ու անհպելի, կը զգայի որ մտածման ու ցաւի ժամերուս սրտիս կը զրկէին իրենց հոգին, ինծի մօտ, զիս կազդուրելու ու ներշնչելու :

Օր մը, գրասենեակէն դարձիս, տունը տակն ու վրայ գտայ : Մայրս, յուզուած, դէմս վապեց

ու իր առաջին բառը եղաւ , արցունքներուն մէջ , պահանջ մը , այն պահուն իսկ , անպատճառ առանց յետաձգումի ոչնչացնելու գրգռերս : Տեղեկացայ որ նոյն գիշերը ոստիկանները մեր գրացի տուներէն մէկը «կոխած» էին , ամէն տեղ խուզարկած , ամենէն պզտիկ թուղթի կտորը ժողոված տարած՝ տանը միակ երկու ասարդ տղուն հետ : Կ'ըսէր մայրս որ ապահովաբար յաջորդ գիշերն ալ մեր տունը որոշած էին գալ ու կ'երգուընցնէր զիս՝ որդիական սիրոյս վրայ , հորս յիշատակին վրայ՝ մեր տունը փրկել ալեկոծութիւնէն , անկէ դուրս նեաեղով բնոր որ իմ գանձս էր :

Դիմադրեցի նախ ու յետոյ տեղի սուրբ : Ուղեցի միայն այն գիշերն ալ , այն ամբողջ գիշերը , անոնց հետ միասին անցընել : Իրենց մթութենէն դուս քաշեցի զանոնք , մեռնելու դատապարտուած էակներու պէս : Այն աչքերը գոցուելէ առաջ՝ ուղեցի անգամ մըն ալ անոնց մէջ կարգալ իրենց հոգին ու դիպուածով բացուած էջերու վրայ կանգ առի ու ամպոտած նայուածքով մտածեցի անոնց վրայ :

Ամենքն ալ գրեթէ այս դարուս կէսէն աստիճան Պոլսոյ , Իզմիրի , Վենետիկի ու Տիգրիսի մէջ տպուած հատորներ էին : Բանաստեղծութիւն , տեղագրութիւն , պատմութիւն ու վէպ , ինչ որ ճիշ էր արձակած ազատութեան երկնքին մէջ ազգ մը , ճիշը որ դարերու սարկութենէն ետք , առաջին լոյսին երեւումին , բնազդորէն ժայթքած էր շատ մը տարբեր կէտերու վրայ ապրող կուրծքերէն : Բագրատունի , Ալիշան , Խրիմեան , Ծերենց , Մամուրեան եւ Սրուանձտեանց , Արովեան , Նալբանդեան : Բաֆֆի , Պրօշեանց , Շահազիզեանց , Նարպէյ , Այվազովսքի , Պատկանեան , Հէքիմեան , Հիսարեան , Պէշիքթաշլեան եւ Դուրեան եւ ուրիշներ , ամէն անոնք որոնց մէջ «Հայաստան» անունը կը հընչէր , կը ցայտէր անզուսպ ջուրի ժայթքի մը պէս , ամենքը ձեռքիս տակ էին հիմա : Անոնք իրենց մասնաւոր պատմութիւնը գնած էի որ մը , Պոլսոյ մութ մէկ գրավաճառանոցին խորէն , վերջապէս կտրած մանկութեանս գանձանակին փայլուն քառասունոցներուն արդիւնքովը : Ետքէն , ուրիշներ , մէկիկ մէկիկ , հազար զգուշութիւններով , գնուած՝ հին ընտանիքներու գրադարաններէն կամ բերել տրուած Վենետիկէն ու Կովկասէն , բազմացուցած էին անոնց թիւը : Անոնք իմ հպարտութեանս միակ առարկան էին : Անշուշտ , հիմա ,

ա՛լ պատանութեանս անսահման ու կոյր սքանչացումը չունէի անոնց մասին , շատ անգամ միամիտ ու արուեստով պակասաւոր կը դտնէի զանոնք . սակայն խանդավառութիւնս աւելի գիտակից դարձած էր հիմա եւ հետեւաբար անսասան , ու անոնց վրայ կը տածէի դորով մը , ինչպէս անցեալը լացող ու ապագան հնչող շեփորին միացած երգին վրայ :

Առտուան դէմ իմ թանկագին բնօս գրկած խոհանոց իջայ : Ծիւնելոյցին մէջ արծարծեցի կրակը ու որոշումին տակ հանդարտ հոգիով ու չզողացող մատներով վերուցի զանոնք մէկիկ մէկիկ ու մէջտեղէն բանալով կրակին վրայ դրի : Վայրկեանի մը ապասուտէ ետք՝ բոցը բարձրացաւ յանկարծ , կուրացուցիչ , զիւային վնուկի մը կաթսային կրակին նման՝ լուսաւորելով յանկարծ ծիւնելոյցին ղողաւոր ու մութ անկիւնը : Գեանին վրայ բոցին ցոլացումը անոր անկուսի ու բարձրացումի խաղը կը կրկնէր՝ քանի հետզհետէ նոր սնունդ կը դնէի մոխրացած էջերուն վրայ : Էջերը , ծրխունելոյցին մէջ , կը բաժնուէին , սեւ թիթեանիկներու պէս կը թռչտէին , այնքան թեթեւ որ աննիւթացած կարծես , բայց պահելով զեռ ու թոյլ տալով աչքերուս կարգալ տպագրուած գիրերուն հետքը , հիմա , բոցը կ'աճէր կը լայննար , հաստ կափարիչները կը լափլիզէր , կը մոխրացնէր , անկուշտ ու տիրական , մինչեւ վերջին հատորը պահանջելով : Երեսներս ու ճակատս իր տաքութիւնովը կ'այրէին ու նայուածքս քիչ քիչ կը սեւեռէր կրակին մէջ , ա՛լ չէր կրնար բաժնուիլ , գամուած կը մնար անոր վրայ , կարծես հմայուած անով : Յանկարծ , սարսափը սեղմեց կուրծքս , բերբերս ընդլայնեցան ու տեսան անցնիլը , բոցին մէջէն , ամբողջ կոտորածի տեսարաններու շարքի մը , այնչափ արագ զիւային վազքով մը որ չէի կրնար հետեւիլ ամենուն . . . Հրկիզուած տուներէն դուրս խուժող հերարձակ կիներ էին ու փայլուն սուրբուրու ծայրն անցուած մանուկներու մարմիններ : Մարդեր ու տղաքներ էին , տախտակամածներու վրայ փոռուած , ճակատանին կարմիր վէրքերով բաց՝ որոնցմէ արեւնը կը հոսէր ու կը լճանար : Խոշտանգուած կիներ ու մանկամարդ աղջիկներ՝ իրենց ձեռքերը գոցած աչքերնուն վրայ՝ կուսուլթիւննին լալով , եւ զեռ ուրիշներ , ամբողջ ոճիրին կառատումը կ'անցնէր այդ բոցին մէջէն : Քարացած կը նայէի անոնց՝ սարսափիս

մէջ կորսնցուցած զայրոյթի ու անէծքի կարողութիւնս անգամ :

Հանգելու մօտ էր կրակը . պատուհանէն արշալոյսը ներս սպրդեցաւ . տեսարանի տարօրինակ փոփոխութեամբ մը յանկարծ բոցը կարսընցուց իր դաժան վախի կերպարանքը : Ժպտուն երեւցաւ անիկա ինծի , ու իր փայլը ինծի թուեցաւ ըլլալ նայուածքի մը մէջ վառուած յոյսին ցոլացումը : Հիմա կ'ըսէր ինծի թէ ինքը բոցն էր մաքրող ու ապանեխող վրէժին բոցը՝ բիւրաւոր սրտերու խորը : Այրած գրքերուն սեւ ու թեթեւ դէզին վրայ՝ անո՛նց հոգին էր , հայ հանճարը որ երկնքին մէջ իր թռիչքը առաւ Անիկա կը թուէր մրմնջել ինծի . «Գնա՛ եւ ըսէ՛ որ էյ՝ ւսահատին՝ քանի որ ես չեմ մարած : Ես իրե՛ց հայրերուն տաճարին անչէջ կանթեղն եմ , կուզայ խթումի իրիկունը ուր անսահման մութ գոգէթին արակ հաւաքուած եղբայրներու գ խումբը , մէկիկ մէկիկ , աստղերու հոյլի մը պէս , պիտի վառէ ձեռքին մէջ ճրագները՝ իմ լոյսէս՝ «Զատիկը» տօնելու համար :

ՎԱՀԱՆ ՏԻՐԱՆԵԱՆ

30 օգոստոս 1900



ՍՈՒԼԹԱՆԻՆ

ՔՍԱՆՈՒՀԻՆԳՍԵԱՅ ՅՈՔԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻՒ



Սուլթանը իր թագաւորութեան քսանեւհնգամեակի յորեկեանը տօնելու անպատկառ գաղափարը ունեցաւ : Եւրոպան շատ աւելի անպատկառ ու գարշելի եղաւ այս դէպքին մէջ պաշտօնապէս մասնակցելով ոճրագործին այս տօնին . Անգլիա Միջերկրականի նաւատորմին ընդհանուր հրամանատարը զրկեց Սուլթանը շնորհաւորելու համար . . . ու տեսանք անգլիական մեծ թերթեր , ինչպէս «Սթանտարտ»ը , որոնք գովեստներ տեղալ չամչցան այն գազանին զոր իրենց կլազսթոնը խարաղանեց «Մեծ Մարդասպան» անունով : Ֆրանսական լրագրութիւնը աւելի ազնիւ գտնուեցաւ . գրեթէ բոլոր թերթերը կամ լուռ մնացին , կամ , ինչպէս «Թան»ը եւ «Մաթէն»ը , հրատարակեցին յօգուածներ չափաւոր լեղութեամբ

մը՝ ուր կը զգացնէին Սուլթանին թէ Եւրոպան չի կրնար մոռնալ , հակառակ բոլոր յորեկեաններուն , այն բոլոր արիւնը որ թափուեցաւ իր թագաւորութեան տօնն , եւ կամ , ինչպէս «Օսո»ը , Իւրպէն կոհիէի գրչով , մուկիւն ու բողոքարկու վայրոյթի էջեր :

Այդպիսի առիթի մը մէջ զոհերը չէին կարող լուռ մնալ :

«Բըթիթ Ռէբելպլիք» իր սեպտեմբեր 2ի թուով հրատարակեց երկու բողոքագիր՝ Սուլթանին յորեկեանին առիթով , մին՝ խումբ մը բարիզարնակ Հայերու կողմէ , միւսը՝ Երիասասարգ-Թուրքերու կուսակցութեան կողմէ : Ահաւասիկ Հայոց բողոքագիրը :

«Սուլթան Ապիւլ-Համիտը այսօր կը տօնէ իր դահակալութեան քսանեւհնգամեակի յորեկեանը : Փափաքեցաւ որ այս հանդէսին Եւրոպայի բոլոր անբուխները իրենց ներկայացուցիչներն ունենան . իր փափաքը կատարուեցաւ . Եւրոպայի բոլոր մեծ երկիրները մասնաւորապէս թիւններ զրկեցին՝ շնորհաւորելու Սուլթանը այնքան երկարատեւ որքան հրէշային թագաւորութիւն մը ունեցած ըլլալուն համար :

«Քաղաքակիրթ Եւրոպայի ներկայացուցիչները անգամ մը եւս իրենց ձեռքը պիտի դնեն , հանդիսաւոր եղբայրութեան ժեսթով մը , Մեծ Մարդասպանին արիւնաթաթաւ ձեռքին մէջ , եւ թերեւս զայն պիտի փառաբանեն կատարած ըլլալուն համար ամենէն քսամիւլի գործը զոր պատմութիւնը արձանագրած է երբեք :

«Անհրաժեշտ բաժակաճառ մը կը պակսի սակայն այդ խնջոյքին . ա՛յն զոր հոն արտասանելու էր ձայնը երեք հարիւր հազար Հայերուն որոնք կոտորուեցան այս պահուս Եւրոպայէն տօնուող այդ առաջակին հրամանովը : Այդ հարկաւոր բաժակաճառը , միա՛կը որ պատեհ , ճիշդ ու խորապէս անկեղծ պիտի ըլլար , մենք կ'ուզենք զայն աղաղակել աշխարհքի երեսին , յանուն մեր ժողովրդին որ հոն վարը կ'ոգեւարի՝ մինչդեռ վերը իր դահիճը կը պանծացնեն :

«Սուլթան Ապիւլ Համիտ ՚ի կ'ըսէ մեռելներուն ձայնը , դուն յաջողեցար վայրագութեան ու վատութեան մէջ բարբարոս դարերուն ամենէն պժգալի գազանները գերազանցել , եւ արդարեւ արժանի ես որ քու յորեկեանդ արտասովոր հանդիսաւորութեամբ մը տօնուի : Ի՛նչո՞ք ու հացկերոյթիդ սեղանը զոհերուդ դիակներովը շեղակուտուած գերեզմանոցի մը մէջ դե-

տեղելու էին, ու նուագախումբերուդ երա-
 ժարութեանը տեղ քեզի ի պատիւ ողջ ողջ
 մորթաղերծուած կամ մարմնաճգտուած ողոր-
 մելիներու արձակած աղաղակներուն նուագեր-
 դութիւնը դնելու էիր: Այդ էր միակ չըջա-
 պատկերը որ կը պատշաճէր այդ հանդէսին ուր
 Եւրոպային լրբութիւնը կ'երթայ ողջունել
 վայրագութեան աստուածացումը:

«Սուլթան Ապտիւլ Համիտ, այս հանդէսին
 մէջ՝ մենք ալ մաղթանք մը ունինք քեզի ը-
 նելիք: Կը մաղթենք որ կեանքդ դեռ քիչ մը
 տեւէ: Մեզի համար տաժանելի պիտի ըլլար
 տեսնել քու յանկարծական անհետացումդ՝ հա-
 սարակ մահով մը, առանց որ քու գոյութիւնդ
 իր տրամաբանական պակուժը ստացած ըլլայ,
 առանց որ դուն ընդունած ըլլաս պատիժը որ
 քեզի կը սպասէ եւ որ այնքան ահաւոր պիտի
 ըլլայ որքան դուն գարշելի եղար: Վրէժը, որ
 կուտակուած կը մնայ այն անհամար տառա-
 պանքներուն խորը զոր դուն՝ քու ձեռքովդ
 քսանուէինք ասորիէ ի վեր կաղմեցիր պետու-
 թեանդ ամբողջ տարածութեանը մէջ, պիտի
 չուշանայ պայթելու այնքան աւելի զօրու-
 թեամբ որքան բրտորէն զսպուեցաւ մինչեւ
 ցարդ: Քու վախճանիդ արհաւիրքը այնքան մեծ
 պէտք է ըլլայ որքան քու ոճիրներուդ անագ-
 նութիւնը:»

«Մեռելներու ձայնովը թնդացող այս բաժա-
 կածա՞որ՝ ամբողջ հայ ժողովուրդը կը կրկնէ
 այս վայրկեանիս իրցաւով ուռած սրտին խորէն:
 Եւ հայ ժողովրդին հետ այս նոյն բաժակածա՞որ
 կը հնչեցնեն բոլոր այն ժողովուրդները որ դժ-
 բաղութեան մէջ մեզի եղբայր են եղած՝ կամ
 են տակաւին, Պուլկարները, Ասորիները, Եգի-
 ւտները, Կրետացիները, Մակեդոնացիները,
 Ազատական Թուրքերը, բոլոր այն ժողովուրդ-
 ները որոնք կրած են արիւնի ու ամօթի լուծը
 նոր ժամանակներու ամենէն գաղիւր ճիւղին:

«Հակառակ այդ խնջոյքը պաշարող զինու-
 որներու թանձր ցանկապատին, այս բաժա-
 կածառին արձագանքը պիտի հասնի մինչեւ կոչ-
 նականները, պիտի որոտայ պաշտօնական ձա-
 ուերուն լկտի արուեստականութեանը մէջտեղը,
 պիտի տիրապետէ անոնց:

«Եւ եթէ կոչնականները յամառին խուլ
 մնալ այս ձայնին, ազատ մարդոց խիղճը
 զայն պիտի լսէ աշխարհիս չորս անկիւնը եւ
 պիտի մասնակցի, վստահ ենք, այս անէժքի եւ
 վրէժիւնդրութեան աղաղակին:»

Բարիդ ԽՈՒՄԲ ՄԸ ՍԳԱՒՈՐ ՀԱՅՆՐ

Եւ անա Թուրքերուն բողոքագիրը՝
 «Ապտիւլ-Համիտ այսօր կը տօնէ քսանու-
 հինգամայ տարեդարձը պատմութեան մէջ
 նմանը չունեցող ոճիրներով ու հրէշութիւն-
 ներով լեցուն իր թագաւորութեանը:

«Քովանդակ քաղաքակիրթ աշխարհը ողբաց
 այս արիւնոտուշտ բռնապետին անհամար գոհե-
 լուն վրայ, բայց դժբաղդարար, եւրոպական
 համաձայնութիւնը գրեթէ բարեկամական դի-
 տողութիւններէ ուրիշ բան չըբաւ անոր:

«Երբտասարդ-Թուրքերու կուսակցութիւնը
 ուժգնապէս կը բողոքէ այն անարդար հաճո-
 յակատարութեան դէմ որով եւրոպական պե-
 տութիւնները արտասովոր առաքելութիւններ
 կը զրկեն Մեծ Մարդասպանին յորելեանի
 հանդէսին, ինչ որ ուրիշ բան չէ բայց եթէ ոճի-
 րին ու մարդասպանութեան աստուածացումը:

«Եւրոպան ներդամիտ դիրք մը բռնելով
 կարմիր Սուլթանին ոճիրներուն հանդէպ,
 արդէն մեծ պատասխանատուութիւն մը վրան
 առած էր. հիմա՞ զայն քաջալերելով, անոր
 ապագայ արարքներուն մեղսակից չ'ըլլար
 միթէ:

«Մեր կուսակցութիւնը, հաւատարիմ թարգ-
 ման դժբաղդ օսմանեան ազդին, որ քսաներ-
 րորդ դարուն սեմին վրայ կը հեծէ այս միջ-
 նաղարեան բռնաւորին լուծին տակ, կը յուսայ
 որ եւրոպական մամուլը, ա'յնքան ազատամիտ
 ու վեհանձն, մեր արդար բողոքին պիտի ձայ-
 նակցի՝ պատմութեան ցիցին վրայ առջաւէտ
 դամեղու համար այս նոր Ներոնը:»



ԻՄ ՈՒՂԻՆ

— 00 —

Ոլոր ու մոլոր, հեռո՛ւ, շա՛տ հեռու
 Ուղիս է գընում—անծայր, անհատնում:
 Մըռայլ, անորոյ հորիզոնի մէջ
 Անվերջ անասման գընում է կորչում:
 Եւ անյայտ ուղիս
 Անցնում է վայրի, խօլ անապատով
 Եւ ովկիանի անդունդն է ձեղքում,
 Եւ կտրում անցնում մըրըրկի միջով:
 Բարձրը լեռների գաղաթն է հասնում

Սուզուում, թոնուում է անհուն երկնքով ,
 Եւ սըլանուում է
 Իմ մըռայլ սըլին հեռո՛ւ. շա՛տ հեռու . . .
 Եւ մարդիկ, որպէս ժեռուտ, կարծր ափեր,
 Իմ ուզու շուրջը շարքով կանգնած են ,
 Եւ մարդիկ, որպէս ամուր պասնէշներ
 Իմ ուզու առաջ գոռոզ կանգնած են :
 Բայց ես . . . ես օձ եմ, սեւ սուր իժ եմ ես . . .
 Եւ գալարուում եմ, վառուում, ցասկոտում .
 Դարաւոր թոյնը հոգումըս լցւած՝
 Իմ ատամները նըրանց են ցըցում :
 Եւ մարդիկ, որպէս խարխուլ պատնէշներ
 'հա խորտակուում են , ընկնում իմ առաջ ,
 Յեռ-յետ են քաշուում,
 Ինձ ուղի բանում, ճանապարհ տալիս ,
 Որ թուչիմ հեռո՛ւ, այն հեռո՛ւ ափերն,
 Ուր հասնիլ տենչում է խրոխտ իմ հոգիս :

Եւ առաջ կ'երթամ , եւ եթէ նորէն
 Ամբոխն ու մարդիկ իմ ուղին փակեն—
 Պիտի կըծկըւիմ ես օձի նըման
 Եւ անվախ , հըպարտ, գըլուխըս բարձըր,
 Սըլաքից արագ ես պիտի թըռնեմ ,
 Ամբոխի վրայով պիտի թըռնեմ ես ,
 Դէպ ի նըպատակս, միշտ հեռո՛ւն , հեռո՛ւն . . .
 Եւ իմ հոգուս ժանտ թոյնովը դաժան
 Ես պիտի խայթեմ եւ պիտի խոցեմ ,
 Ախոյեաններիս խոցեմ պիտի ես . . .

Օ՛հ, գընա՛ , սլացիր, հըպարտ ու վըսեմ,
 Դու իմ ի՛ժ ոգի,
 Դըժընդակ ճամբովդ գալարուելի՛ր առաջ,
 Վեհութեան ուխտի սէ՛զ ճանապարհորդ ,
 Մենիկ ուղիովդ սըլացիր հեռո՛ւ ,
 Դու ազատութեան ասպե՛տ-մարգարէ ,
 Գնա՛ հեռու, հեռու, ուր միտք չի հասնում,
 Ուր մեծ ազադան լազարի՛թ , ասողազարդ՝
 Քեզ իրան քաշում , իրան է կանչում :
 Ա . ԻՍՍ.ՀԱԿԵԱՆՑ

ՊՍՏԳՍ ՄԱԻՈՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՆ
 Շար . (*)
 —o—

Գոհ եղանք մենք ալ Խրիմեանին այս փո-
 փոխութենէն. միայն կ'ըսէ թէ լոկ ինքը ստու-
 (*)Տես «Անահիտ», Բ . Տարի , Թիւ 6—7—8

րագրէ եւ Նարպէյին չիմացնենք : Խրիմեանի
 մոլութիւնն է զանազան բաներ ինձմէ , Նար-
 պէյէ կամ Չերագէ պահել : Նարպէյ կուահելով
 այս, ինքն այ իր կողմանէ բաներ կ'ընէ եւ
 կուզէ որ Խրիմեանի չիմացնենք : Վօյսի թեր-
 թին ինքզինքը պատրիարք անուանել տուեր
 է եւ առաջին պատգամաւոր. մինչ զԽրիմեան
 նախկին պատրիարք եւ երկրորդ պատգամա-
 ւոր : Տաճատ ըսեր է խմբագրին թէ սխալ է,
 որուն պատասխաններ է թէ Նարպէյ իրեն
 քարթ տուած է նոյն տիտղոսներով եւ ըստ
 այնմ գրած է : Կ'երեւի թէ Նարպէյ ձեռագիր
 քարթ տուած է, վասն զի առաջին անգամն է
 որ կը լսենք այս տեսակ քարթի մը գոյու-
 թիւնը : Խրիմեան աստիկ բարկացաւ , իսկ
 Նարպէյ կ'ըսէ թէ ինչո՞ւ ամէն բան կ'իմա-
 ցընենք Խրիմեանին :

Ի՞նչ խաղերու մէջ ենք, Աստուած իմ :
 Գիշերուան սուարէին Նարպէյը չգնաց . մի-
 այն Չերագ գնաց ու շատ արդիւնաւոր ետ
 դարձաւ . պատմեց Վատիկթոնի հետ ունեցած
 մասնաւոր տեսակցութիւնը եւ Անգղիացուոց
 վրայ խօսուածները , ամենքն ալ մեր քաղա-
 քականութեան եւ ծրագրին համեմատ :

—24 Յուլիս— Նարպէյ սիվիլ հազուած եւ
 բըէնսութեան նշանը որ առաջ ալ կողմը կը
 դնէր, հիմա ձախը դրած, դուրս ելաւ :

—Չերագ Պուչէն դարձաւ . թաղաժառանգին
 կողմանէ մեր պատգամաւորներուն, լուսանը-
 կարները ուզեր է զորս տարաւ յանձնեց :

—Խրիմեան հարցուց թէ ի «Պուլիս ո՞վ վալի
 ընելու խորհուրդ կար :

—«Այդպիսի խորհուրդ մը չկար եւ չէր ալ
 կրնար ըլլալ, ըսի, զի անձի մը համար չէր
 գործուեր . անգամ մը միայն Նուրեան ըսաւ
 թէ Օտեանը վալի ընենք, ուրիշ ոչ ոք բան ը-
 սած է :»

—«Օտեան երկրորդին եւ երրորդին կրնայ
 ըլլալ, ըսաւ նախ. կտրուկ եւ վարչական մէկը
 պէտք է . Օտեան բանաստեղծ, դանդաղ ու գը-
 թասիրտ է . առաջին անգամ չյարմարիք . Ս. Ս. ը
 աւելի կտրուկ եւ վարչական անձ է, Գիւրտե-
 րուն եւ թուրքերուն դէմ դնելու կարող մարդ
 պէտք է :

«Ես չեմ գիտեր այդ մասը , եւ խորհուած ալ
 չէ, բայց այս գործին գլուխ կեցող անձինք ա-
 մենքն ալ յարմարութիւն ունին, Սերվիչէն ,
 Օտեան, * * * , եւն . » պատասխանեցի :

—«Այո՛ , Սերվիչէն ալ իշխանական մարդ է»
 ըսաւ :

«Նուպարին համար ալ խօսք կար :»
 —Այդ գերազանց բան կ'ըլլայ , ըսաւ , ի .
 մաստունն ու գործունեայ մարդ, մէկ հատիկ է
 Հայաստանի համար, Եգիպտոսի բարեխորրոզիչը
 եղած է . եթէ այդ ըլլայ, շատ լաւ կ'ըլլայ Հայ
 յաստանի», ըսաւ, եւ խօսքը գոցեցի :

Ս . ՓԱՓԱՉԵԱՆ
 (Շարունակելի)

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՊԻՐԱԸ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

— 0 —

Պաղաղութեան իններորդ համաժողովը իր օրակարգին մէջ անցուց, թրանսվալեան ու չինական խնդիրներուն հետ, հայկական խընդիրն ալ: Պ. Համբարձում Առաքելեանն է որ յանձնեց համաժողովին կարգադիր յանձնախումբին սրտայոյզ յիշատակագիր մը գորինքը խմբագրած էր եւ գոր ստորագրած էին պ. պ. Կամպարեան, Նովիբոֆ, Քովալէվսքի, տը Ռոպէրթի, Լորիս Մելիքոֆ, Մառիյեէ, Առաքելեան, Չօպանեան, Մ. Յովհաննէսեան, Ք. Միքայէլեան, Տր. Զալեան, Չերազ, Պասաճեան, եւն:

Հարցը վիճուեցաւ համաժողովին չորրորդ նիստին մէջ, եւ վէճը որուն տեղի տուաւ, միծապէս յատկանշական էր. կարեւոր կը նշկատեմ այդ ամբողջ դէպքին հոգեբանութիւնը պարզել եւ անկից քաղել մէկ քանի եզրակացութիւններ, որոնք թելադրական կրնան ըլլալ մեզի համար:

Յանձնախումբին մասնաւոր նստին, որուն ներկայ էին իբրեւ Հայ, պ. պ. Կամպարեան, Լորիս-Մելիքոֆ, Առաքելեան ու ես, պ. Նովիբոֆ, ոռւս մեծանուն ընկերաբանը, որ կը նախադասէր, խնդրեց պ. Առաքելեանէն կարգալ իր յիշատակագիրը, եւ ընթերցումէն յետոյ յայտարարեց թէ ինքը հարկաւոր կը նկատէր այդ խնդիրը մտցնել համաժողովին օրակարգին մէջ, եւ յանձնախումբին միւս անդամներուն կարծիքը հարցուց. բոլորն ալ համախոս հանդիսացան նախագահին. ու տեղեկաբերը հետեւեալ բանաձեւը խմբագրեց՝ հարցը հետեւեալ օրուան համաժողովի ընդհանուր նիստին վիճաբանութեանը առաջարկելու համար. «Համաժողովը, Հայաստանի մասին իրեն յանձնուած յիշատակագրին ծանօթանալէ յետոյ, իր համակրութիւնը կը յայտնէ այդ դժբաղդ ազգին, կը մտածէ թէ հայկական ջարդերը այս վերջերս տեղի ունեցած ամենէն զգուելի արարքներէն մին կը կայուցանեն, եւ իզձկը յայտնէ որ ստիպեն օսմանեան կառավարութիւնը յարգել Հայոց անկապտելի իրաւունքները որոնք Պերլինի դաշնագրով երաշխաւորուած են:»

Պ Ահմէտ Րիզա դիտել տուաւ թէ համաժողովը անգործնական բան մը կ'ընէր միմիայն Հայոց համար եւրոպայի պաշտպանութիւնը պահանջելով, որովհետեւ ըսաւ, Հայերը մէկ փոքր մասը կը կազմեն օսմանեան պետութեան ժողովուրդներուն, որոնք ամենքն ալ, մահմտական թէ քրիստոնեայ, հաւասարապէս կը տառուպին Սուլթան Համիտին բռնապետական ռեժիմին հետեւանքով: պ. Րիզա առաջարկեց որ Տաճկաստանին ընդհանուր բարենորոգումը պահանջուի Եւրոպայէն:

Ես խօսք առի՝ պ. Րիզայի սուղարկութեան ընդդիմանալու համար. «պ Րիզա, ըսի, ճշմարտութեան դէմ կը մեղանչէ երբ կը հաւաստէ թէ օսմանեան պետութեան մահմետական եւ քրիստոնեայ հպատակները հաւասարապէս կը տառուպին. մահմետականները կը տառուպին միմիայն կառավարութեան վատթար վարչութեան հետեւանքով, քրիստոնեայ հպատակները, — եւ մանաւանդ Հայերը որ ոչ մէկ եւրոպական պաշտպանութիւն չեն վայելեր, — կը տառուպին կրկնապէս: թէ՛ այդ վատթար վարչութեան հետեւանքով եւ թէ՛ կը հարստահարուին իր նուաճեալ ցեղ մը՝ տիրապետող մահմետական ցեղին ամբողջութենէն. արդի հրէշային ռեժիմին հեղինակը Սուլթան Համիտը չէ. Համիտէն առաջ, ուրիշ Սուլթաններ ջարդած են Յոյները, Կրետացիները, Քիոսցիները, Տիւրքիները, եւն. ջարդը թրքական մեթոտ մըն է. Սուլթան Համիտ ուրիշ բան չէ ըրած բայց եթէ այդ մեթոտին գործածութիւնը հասցընել ծայրայեղութեան մը որուն ոչ մէկ Սուլթան դեռ չէր համարձակած. Թուրքերը ազատ ազգ մըն են, բանակ, կառավարութիւն ունին, կարող են եւ պարտաւոր են իրենք իրենց ուժերով իրենց բռնաւորը տապալել եւ պետութիւններն բարենորոգել: Հայերը ոչ մէկ ներքին կազմակերպուած ուժ ունին իրենց ուրոյն ցաւերը դարմանելու, եւ ստիպուած են դիմել Եւրոպային, խնդրելու համար որ իրենց իրաւունքները պաշտպանէ, ինչպէս որ ըրաւ Թուրքին հպատակ ուրիշ քրիստոնեայ ազգութիւններու համար: Արդէն դիմած են Սան-Սթէֆանոյի եւ Պերլինի վեհաժողովներուն, եւ իրենց խնդիրը, իբրեւ ուրոյն, («հայկական») խնդիր, արձանագրուած է երկու դաշնագրի մէջ. ուրեմն այլեւս կարելի չէ այս մասին վիճել. ոչ մէկ չփութութիւն հնարաւոր չէ տաճկական եւ հայկական խնդիրներուն միջեւ. Հայերը այս խաղաղութեան համաժողովէն խնդրած են իրենց հարցովը զբաղել. Թուրքերն ալ կարող են զատ դիմում մը ընել իրենց հարցին համար, որ բոլորովին սարքեր է. սակայն ներելի չէ երկու հարցերը իրարու խառնել:» Պ. Րիզա ոչինչ գտաւ պատասխանելու:

Պ. տը Ռոպէրթի, ոռւս, ընկերաբանութեան ուսուցիչ Պիւլքսէլիազաւո-համալսարանին մէջ, պահանջեց որ յանձնախումբին խմբագրած բանաձեւը աւելի ընդարձակ, որոշ ու ուժգին ձեւ մը առնէ. «Յիշատակագիրը, որ քիչ առաջ կարդացուեցաւ, այն թերութիւնը ունէր, ըսաւ, որ իր եզրակացութեանը մէջ տարտամ էր ու տժգոյն. ուրիշ լուծում չկայ բայց եթէ ինքնավարութիւն պահանջել եւրոպական կառավարութիւններէն՝ Հայաստանի համար. հայ ժողովուրդը ամենահին ժողովուրդներէն մէկն է, ունեցած է քաղաքակրթութիւն մը երբ դեռ գոյութիւն չունէր թուրք ազգը, որ արդէն բարբարոսութիւնէ ուրիշ բան չէ ըրած:»

Պ. Րիզա բողոքեց այդ խօսքին դէմ, յայտաւարելով թէ թուրք ազգը պատասխանատու չէ Սուլթանին ըրածներուն :

«Ամէն ժողովուրդ ունի այն կոտավարութիւնը որուն արժանի է պատասխանեց պ. տը Ռոպերթի. դուք, պ Րիզա, որ դրապաշտ վարդապետութեան կը հետեւէք, համոզուած ըլլալու էք ասոր :»

Յանձնախումբը արտօնեց պ. տը Ռոպերթին որ յաւելուած մը խմբագրէ բանաձեւին :

Պ. Ռաֆայելիչ, ուստի կոտավարական պաշտօնեայ, առաջարկեց որ «Հայոց անկապակի իրաւունքներ» բառերուն քով աւելցուի «կեանքի եւ ինչքի ապահովութիւն» բառերը , որոշելու եւ մասնաւորելու համար այդ իրաւունքները . միանգամայն առաջարկեց որ Պերլինի դաշնագրին հետ եւ անկից առաջ յիշատակուի Սան-Սթէֆանոյի դաշնագիրը , որուն մէջ առաջին անգամ ստեղծուած է հայկական խնդիրը : Պ. Ռաֆայելիչի երկու առաջարկութիւնները ընդունուեցան, եւ երկու յաւելուածները մուծուեցան բանաձեւին մէջ :

Ես բողոքեցի առաջին յաւելուածին դէմ . «Կարծելը թէ , ըսի, Հայոց պահանջած իրաւունքները կեանքի եւ ինչքի ապահովութեան մէջ կը կայանան , վերաւորել է հայ ժողովրդին արժանապատուութիւնը . գլխաւոր իրաւունքը որուն Հայերը կ'ուզեն տիրանալ , իրենց ազգային գոյութեան պահպանումն է , այսինքն ստացումը ազատ պայմաններու որոնց մէջ կարենան իրենք իրենց ձեռքով պաշտպանել իրենց կեանքն եւ իրենց ինչքը : Եթէ յանձնախումբը չի հաւանիր Հայոց իրաւունքներուն գլուխը նշանակել այս էական իրաւունքը, կ'առաջարկեմ որ այդ «կեանք ու ինչք» բառերը ջնջուին , ու մնայ միայն «անկապակի իրաւունքները» բացատրութիւնը , որուն մէջ ամէն բան կարող է սղմիլ :» Յանձնախումբը որոշեց ջնջել «կեանք եւ ինչք» բառերը :

Նիսորին աւարտելէն յետոյ , Պ. տը Ռոպերթի խմբագրեց, ինծի հետ, յաւելուած մը , սապէս . «Համաժողովը ցաւ կը յայտնէ որ պառակտումը, նախանձրեւ իւրաքանչիւր պետութեան իր մասնաւոր շահերը ըմբռնելու անձկամիտ եղանակը արգիլած ըլլան մինչեւ ցարզ Սան-Սթէֆանոյի եւ Պերլինի դաշնագրներն ստորագրող պետութիւնները իրենց ամենատարական պարտականութիւնները կատարելու հանդէպ ժողովրդի մը զոր պաշտպանելու պարտքն ստանձնած էին իրաւաբանական արժէք ունեցող որոշ յանձնառութիւններով : Կը յուսայ որ տիեզերական խղճին բողոքը եւ քաղաքակիրթ աշխարհին զայրոյթը վերջ ի վերջոյ եւրոպական կոտավարութիւնները պիտի ստիպեն լուծել հայկական խնդիրը արմատական ու բանաւոր եղանակով մը, ինչպէս որ ըրաւ վերջերս Կրէտէի մէջ :»

Հետեւեալ օրը, եւրոպական միջազգային ապագայ պատերազմի մը անկարելիութեան վրայ

(որու մասին խօսեցու պ. տը Պլիոք , Հահէի համաժողովին գլխաւոր դերակատարը,) երկար վիճաբանութենէ մը յետոյ , պ. Նովիքով կարգաց պ. Առաքելեանի յիշատակագիրը եւ յանձնախմբին բանաձեւած որոշողութիւնը . պ. Շարլ Րիչէ , համաժողովին դեր-նախագահը , քուէի դրաւ այդ որոշողութիւնը , որ ընդունուեցաւ միաձայն հաւանութեամբ : Պ. տը Ռոպերթի եւ կաւ կարգաց իր յաւելուածը, եւ փաստեց անոր հարկաւորութիւնը . «Ինչ որ ըրիք, ըսաւ, Պօէրներու զժբաղդ ու դիւցազնական ազգին համար , պէտք է որ ընէք նաեւ հայ ժողովրդին համար . հանդիսաւորապէս յայտարարեցիք թէ Պօէրները արժանի են իրենց անկախութիւնը պահպանելու , պէտք է յայտարարէք որ Հայերն ալ արժանի են անկախութիւն ստանալու : Ճշմարիտ է որ հայկական խնդիրը չունի Պօէրներու հարցին այն համեմը զոր կուտայ Գոզիաթին դէմ մաքառող Դաւիթի մը տեսարանը . բայց միթէ հարիւրներով խոշարանող ու մորթուող կիներու եւ երախտներու քստմնելի տեսարանն ալ չունի իր ուրոյն զօրութիւնը՝ սրտերը թունտ հանելու համար . հայ ժողովուրդը իր հինաւորց քաղաքակիրթութեամբ , իր բազմակուտակ շարանքներով, արժանի է որ Ներոպա զինքը ճողոպրէ բռնաւորին լուծէն : Պէտք է մանաւանդ մտածել թէ Պօէրները իր ճգնուին այսօր ազգէ մը , որ այս վայրկեանիս ոճիր մը գործելու վրայ է , բայց որ ազնիւ ու մեծ ազգ մըն է եւ վաղը կրնայ անդրադառնալ իր սըխալին վրայ եւ զայն սրբագրել . Հայերը կը շարչարուին թուրքերուն լուծին տակ , այսինքն բարբարոս ազգի մը որ ո եւ է յոյս չի ներշնչեր բարեփոխուելու եւ իր ոճիրները զարմանելու . ուրեմն անհրաժեշտ է որ Ներոպան իր պաշտպանութեան ներքեւ առնէ հայ ժողովուրդը եւ անոր ազատագրութիւնը փութացնէ՝ վերջնական կորուստէն փրկելու համար զայն :»

Պ. Ահմէտ Րիզա խօսք առաւ . այս անգամ հայ եւ թուրք հարցին իրարու խառնելու փորձը չկրկնեց եւ յանձնախումբին որոշողութիւնը հիմնապէս փոփոխելու ո եւ է առաջարկութիւն չհամարձակեցաւ ներկայացնել (նախորդ օրուան պարտութիւնը զինքը զգոյշ զարձուցած էր այդ մասին) . բայց ուրիշ թաքթի մը բռնեց այդ օրը, շատ աւելի փափուկ ու կնճոտ կէտի մը կատչեցաւ , եւ իր ճիգը զժբաղդաբար բոլորովին անյաջող չմնաց . «Նախ , կ'առաջարկեմ, ըսաւ, որ այն պարտաւանքին հետ որ կ'ուղղուի Սուլթանին՝ հայկական կոտորածներուն համար , պարտաւանք մըն ալ ուղղուի Ներոպային , որ մեղաակիցն եղաւ Սուլթանին :» (այս գաղափարը՝ յամօթ Ներոպային՝ ճիշդ էր, եւ արդէն պ. տը Ռոպերթի յաւելուածին մէջ նշանակուած էր, ոչ թէ պարտաւանքի , այլ ցաւի ձեւով) «յետոյ , կը խնդրեմ, ըսաւ , որ համաժողովին որոշողութեան մէջէն Սան-Սթէֆանոյի դաշնագրին յի-

չատակութիւնը ջնջուի, որովհետեւ Անգլիա, եւ Անգլիոյ հետ ամբողջ Եւրոպա, չբացուց այդ դաշնագիրը, եւ ան այլեւս յիշուելու իրաւունք չունի. միայն Պերլինի դաշնագիրը կրնայ յիշուիլ:» Համաժողովին տեղեկաբերը ինքզինքը համամիտ յայտնեց այս մասին, եւ Սան-Սթէֆանոյի յիշատակութիւնը ջնջուեցաւ: «Վերջապէս, շարունակեց պ. Ռիզա, անգործնական կը դոնեմ Եւրոպայէն պահանջել որ Հայոց խնդիրը լուծէ այն ձևով որով լուծեց Կրէտէի խնդիրը. Հայերը տարածուած ու տարտղնած են օսմանեան պետութեան ամէն կողմը ու ոչ մէկ կէտի վրայ հոծ մեծամասնութիւն մը չեն կազմեր, Իժուար է ուրեմն անոնց կիրարկել Կրէտէի համար գործածուած սխաւմը: Կ'առաջարկեմ որ պ. տը Ռոպերթի յաւելուածին վերջին պարբերութիւնը ջնջուի: Վերջապէս, կը խնդրեմ համաժողովէն որ քուէարկէ հետեւեալ որոշողութիւնն եւս իբրև յաւելուած համաժողովին որոշողութեանը՝ «Համաժողովը ցաւ կը յայտնէ որ մեծ Պետութիւնները, փոխանակ նպատակու ընդհանուր բարենորոգմանց իրագործման ի Թուրքիա՝ աւանց ցեղ: եւ կրօնքի խտրութեան պաշտպանած են ու զեռ կը պաշտպանեն կամայական վարչութիւնը Սուլթանին որ սխալմանականաբար կը հակառակի քաղաքական ու ընկերական ամէն բարեփոխման եւ որ ճշմարիտ պատճառն է կառավարական խառնաշփոթութեան եւ այն դժբաղդութեանց որով կը ճնշուին մահմետականները որքան քրիստոնեաները:»

Պ. Միքայէլ Յովհաննէսեան խօսք ասաւ ու շատ յստակ ու կորովի կերպով բացատրեց անճշտութիւնը պ. Ռիզայի առաջարկած յաւելուածին վերջին տողերուն, «Տաճկաստանի բարենորոգումը միջազգային խնդիր մը չէ, ըստ Թուրքիոյ յատուկ, ներքին քաղաքականութեան խնդիր մըն է. հայկական խնդիրը Եւրոպական դաշնագիրներու մէջ անցած է, միջազգային հարց մը կը կազմէ: Այնպէս որ Սաղաղութեան համաժողով մը չի կրնար զբաղիլ աշխարհիս բոլոր երկիրներուն ներքին խնդիրներովը, բայց պարտաւոր է զբաղիլ միջազգային հարցերով: Յետոյ, Հայերուն կայութիւնը չի կրնար համեմատուիլ Թուրքերուն կացութեանը հետ. Թուրքերը անկախ ազգ մըն են, Հայերը ոչ մէկ ուժ ու նեցուկ չունին բաց ի Եւրոպայէն. ուրեմն, համաժողովը պարտաւոր է հայկական հարցին արմատական եւ ուրոյն լուծում մը պահանջել Եւրոպայէն, ու չի կրնար ուրեւէ կերպով զբաղիլ տաճկական խնդրով:»

Պ. տը Ռոպերթի եկաւ պնդել իր յաւելուածին ամբողջապէս ընդունուելուն անհրաժեշտութեանը վրայ:

Պ. Լէոն Մառիյեի հետեւեալ կարծիքը յայտնեց՝ «Համակարծիք եմ պ. Ռիզային սա կէտին մէջ թէ Հայաստանի մէջ կարելի չէ կիրարկել ճիշտ միեւնոյն սխաւմը որ կիրարկուեցաւ

Կրէտէի մէջ, որովհետեւ Կրէտէի մէջ կան միմիայն Կրետացիներ, մինչդեռ Հայաստանի մէջ կը գտնուի խառն, տարաբնու ազգաբնակչութիւն մը. բայց անհրաժեշտ կը նկատեմ որ մասնաւոր ռէժիմ մը հաստատուի Հայաստանի մէջ, որովհետեւ Տաճկաստանի այդ մասը ուրոյն հիւանդութիւնով մը կը տառապի. չի բաւեր համակրութիւն յայտնել հայ ժողովրդին եւ կրտորածներուն վերանորոգման արգելումը պահանջել լոկ. պէտք է չմոռնալ որ 300,000 հոգի կորսնցուցին Հայերը, եւ այսուհետեւ այլ եւս մեծաքանակ կոտորածներու չկրկնուիլը գոհացում մը չէ իրենց համար, ոչ ալ դարման մը իրենց կացութեան. շատ հաւանական է որ Սուլթանը այլեւս մեծաքանակ կոտորածներու գրութիւնը մէկ կողմ դնէ, վախճալով հանրային կարծիքին բարբոքումէն, բայց խուլ ու յամր միջոցներով պիտի շարունակէ ջնջել հայ տարրը. փափաքելի է որ անշուշտ, ինչպէս կը ցանկայ պ. Ռիզա, Տաճկաստանը ամբողջութեամբ բարենորոգուի. բայց այդ իրողութեան կատարումը կրնայ զեռ շատ ուշանալ, եւ մինչեւ այդ օրը կարելի է որ բոլոր Հայերը ջնջուած ըլլան Թուրքիոյ մէջ. ուրեմն ստիպողական հարցը, ամենէն առաջ հայ ժողովրդին գոյութիւնը պահպանելուն մէջ կը կայանայ: Ատոր համար, 1895ին, Պետութիւնները ներկայացուցած են Բ. Իրան բարենորոգմանց ծրագիր մը Հայաստանի հինգ վիլայեթներուն համար. կ'առաջարկեմ որ պ. տը Ռոպերթի յօդուածին վերջը, Կրէտէի սխալման ակնարկող պարբերութեան տեղ, գրուի պարբերութիւն մը որ պահանջէ Եւրոպայի կառավարութիւններէն այդ 1895ի ծրագրին իրականացումը փութացնել Հայաստանի մէջ:»

Պ. Ռիզա դարձեալ խօսք ասաւ, «Անգործնական կը դոնեմ, ըսաւ, ո եւ է մասնաւոր ռէժիմ՝ Հայոց համար, որովհետեւ Հայաստան մը չկայ, որպէս զի անոր համար ինքնուրոյն ռէժիմ հաստատել կարելի ըլլայ. Հայերը պետութեան ամէն կողմը ցրուած են, եւ Տաճկաստանի ամբողջական բարենորոգութեամբ միայն անոնց ամենուն ալ կացութիւնը կրնայ բարեւորուիլ: Մասնաւոր ռէժիմի գաղափար պակասակող ո եւ է պարբերութեան համակարծիք չեմ, որովհետեւ անգործադրելի է այդ գաղափարը եւ ուրիշ բանի չպիտի ծառայէ բայց եթէ Սուլթանը աւելի զբոսնու եւ Հայոց դէմ հալածանքները սաստկացնելու:»

«Հայաստան չկայ» բացատրութիւնը Թուրքիոյ մը բերնին մէջ, Եւրոպական համաժողովի մը բեմին վրայ, զգուանք ու զայրոյթ պատճառեց ինձի, ինչպէս եւ բոլոր Հայերուն որ ներկայ էին այնտեղ: Բայց ցաւով տեսանք որ Եւրոպացի ունկնդիրները մեծ մասամբ համակիր երեւցան պ. Ռիզայի գաղափարներուն, ուժգնապէս ծափահարեցին զինքը, Եւրոպացի-

ներէն ոչ ոք չբողոքեց Ռիզայի այս յայտարարութեանը դէմ՝ պ. Ռիչէ անապարեղու, վայրկեան մը առաջ խնդիրը քուէարկութեան դընելու փափաք կը յայտնէր. ունկնդիրներէն շատը «քուէ» կը պոռային :

«Յաւով կը նկատեմ, ըսի, որ պ. Ռիզա, զոր մինչեւ հիմա կը յարգէի իբրեւ իր ազգին դատին եռանդուն եւ անձնուէր ներկայացուցիչ մը, հոս կու գայ իր դատը պաշտպանելէ աւելի ճնշուած դժբաղդ ժողովրդի մը դատին վնասելու, եւ ասի զիս կը մղէ այլ եւս զինքը յարգել չկարենալու: Այս խօսքիս, ունկնդիրներէն ոմանք բողոքեցին. յայտնապէս սրահը մեծ մասամբ թրքասէրներով լեցուած էր): Կը բողոքեմ պ. Ռիզայի այն յայտարարութեան դէմ թէ «Հայաստան չկայ»: Հայաստան մը կայ, ու Եւրոպայի ամենէն ազնիւ մտքերը անոր գոյութիւնը ընդունած են. կայ բարոյական Հայաստան մը, (այս խօսքիս, կին մը հեգնօրէն ըսաւ՝ Այո՛, «բարոյական» միայն . . .) ու Եւրոպայէն կախուած է որ այդ գաղափարի ձեւով գոյութիւն ունեցող Հայաստանը իրականի վերածուի: Կը սխալիք եթէ կը կարծէք թէ Եւրոպան իր պարտքը կատարած կ'ըլլայ հանդէպ Հայոց կոտորածներու վերանորոգման արգելումը պահանջելով եւրոպական կառավարութիւններէն. Հայերը Եւրոպային կը դիմեն ոչ թէ խնդրելու համար որ ան բոլոր հայ անհատներուն կեանքին ու ինչքին մշտական պահպանի ձանձրանալի ու Հայոց համար նուաստացուցիչ դերը կատարել յանձն առնէ. Հայերը սա միակ հարցումը կ'ուզեն Եւրոպային. — հայ ժողովուրդը, որ դարերէ ի վեր մարդկային քաղաքակրթութեան ծառայութիւն մատուցեր է, որ հակառակ դարհուրելի աղէտքներու իր ազգայնական բոլոր յատկութիւնները կրցեր է անեղձ պահպանել եւ որ այս վերջերս ալ վիթխարի դժբաղդութեանց ենթակայ եղաւ իր ազգայնութեան պահպանումը պահանջելուն համար, արժանի է թէ ոչ որ Եւրոպան անոր շնորհէ ազատութեան այն անհրաժեշտ պայմանները որոնցմով ինքն իսկ իր ձեռքովը կարող ըլլայ իր զաւակներուն կեանքն ու ինչքը պաշտպանելու: Ահաւասիկ միակ հարցը. ասոր է որ պէտք է պատասխանէք:»

Խօսքերս ընդունուեցան ցուրտ կերպով. սրբահը, որոշապէս հակակիր էր մեզի: Ոչ մէկը չձայնակցեցաւ ինձի. պ. Նովիքոֆ, որ յիշատակագիրը ներկայացնելն ստանձնած էր, բառ մը չարտասանեց. բեմին վրայ գտնուող միւս Եւրոպացիները լուռ մնացին: Միայն պ. Մառիյեէ երկու բառ եկաւ ըսել, մասնաւոր ոէժիմի անհրաժեշտութիւնը անգամ մը եւս ապացուցանելու համար: Իր խօսքերն ալ ազգեցութիւն չունեցան: Պ. Ռիչէ քուէի դրաւ խնդիրը, եւ կրետէի սխտեմին ակնարկող պարբերութիւնը մերժուեցաւ 40—50 ձայնի մեծամասնութեամբ մը: Համաժողովին ծերունի ու պատկառելի նախագահը, պ. Ֆրետերիք Բասի, առաջարկեց որ այդ պարբերութեան տեղ ուրիշ

պարբերութիւն մը դրուի, որոշելու համար լուծում մը, ոչ նման կրետէի սխտեմին, բայց որ զործնական հանգամանքներու մէջ գոնացում տայ Հայոց: Պ. Բասիի առաջարկութիւնը քուէի դրուեցաւ ու մերժուեցաւ:

Ի վերջոյ պ. Ռիզայի յաւելուածը քուէի դրուեցաւ եւ մերժուեցաւ նմանապէս, որովհետեւ ներքին քաղաքականութեան խնդիր մը յարուցանելուն համար արդէն բացարձակապէս անկարելի էր որ ընդունուէր միջազգային հարցերով միայն զբաղող Համաժողովէ մը:

Այս ամբողջը զիս տխրեցուց բայց չզարմացուց: Պ. Ռիզա այդ յաջողութիւնը ունեցաւ, որովհետեւ ամէն ջանք ըրած էր առաջուց, իր յաջողութիւնը պատրաստելու համար, մինչդեռ մեր հարցը համաժողովին օրակարգին մէջ մտցնողները ամբողջ պէտքեղածը չէին ըրած իրենց դատին յաջողումը դիւրացնելու համար: Ունկնդիրներուն մէջ եւ բեմին վրայ պ. Ռիզա ունէր ջերմ համակիրներ, անձնական ծանօթներ, անձեր որոնք առաջուց պատրաստուած էին իր թէզը պաշտպանելու. շատ հաւանական է որ պ. Ռիզա այդ բոլոր անձեր մասնաւորապէս հրաւիրած էր այս նստին համար: պ. Ռիչէի ընթացքէն կարելի է հետեցընել որ անոր հետ ալ պ. Ռիզա կանխապէս տեսակցութիւններ ունեցած եւ զայն համոզած էր իր գաղափարներուն: Պ. Ռիչէ պ. տը Թոպերթիի յաւելուածին վերջին պարբերութիւնը քուէի դրաւ այնպիսի ձեւով մը որ իր հակախոռութիւնը ակնհիւ կը զգացուէր: Ու երբ մերժուեցաւ, տեսայ բաւական թուով անձեր բեմին վրայ գտնուողներէն՝ որ պ. Ռիզայի ձեռքը սեղմեցին զինքը շնորհաւորելու համար: Տեսարանը տգեղ էր բայց հրահանգիչ. եւ անհանշուտ: Այդ դէպքէն դասեր ունինք քաղելու: Նախ, յիշատակագիրը համաժողովին մատուցանողները պէտք էր որ այդ նստի օրէն առաջ, տեսակցութիւններ ունեցած ըլլային նախագահին եւ կարեւոր անդամներէն շատին հետ, ու խնդրէին ֆրանսացի բոլոր հայասէրներէն որ այդ օրը ներկայ գտնուին. ասի չէր կատարուած. պ. Նովիքոֆ, որուն յանձնուած էր ամենակարեւոր դերը, յիշատակագիրը ներկայացուց շատ գաղջ կերպով, առաջուց վարանելով զայն կարդալու կամ չկարդալու մասին, համաժողովին հարցնելով թէ մէկ քանի վայրկեան կ'ուզէ՞ր շնորհել ընթերցումին համար, եւնո ընթերցումէն յետոյ, կարեկցուեցան մէկ քանի չափաւոր ու տփփոյն բառեր արտասանեց, եւ ա՛յդչափ պ. տը Թոպերթի նախ ջերմութեամբ պաշտպանեց հարցը, բայց մինչեւ վերջը չչարունակեց. պ. Մառիյեէ միակ ճիշդ ու հարկաւոր խօսքերը ըսաւ, բայց պերճախօս մը չէ ինքը, պայծառ ու հանդարտ խօսուածքով յստակ տեսնող գիտուն մըն է, եւ այդ հակակիր սրահը ընկճելու համար խորունկ համոզմունք ու տաք պերճախօսութիւն միացնող եւրոպացի մը պէտք էր:

«Այդ դժբաղդ ժողովրդին դատը պաշտպանելու համար, կը գրէ հետեւեալ օրը «Լա Բեբելայիթ» թերթը, յափշտակիչ պերճախօսութեամբ ատենաբան մը պէտք էր, այդ ատենաբանին պակասը զգացուեցաւ երէկուան նիստին մէջ :»

Ատենաբանը շատ դիւրին էր գտնել ժողովուրդը, Պեռարի մը, Քլեմանտոյի մը, Սեվոնի մը կամ Բոչէնի մը մէջ : Հայերը չունեցան այդ գաղափարը, եւ տուեցին :


Ինչպէ՞ն սա դատը պէտք է պահենք ուրիմն, — Եւրոպացուց մեծամասնութիւնը, — բաց ի սակաւութիւ խանդավառ ու ազնիւ անձերէ որոնք Հայը մօտէն ճանչցած են եւ հայկական հարցը խորապէս ուսումնասիրած են, — կը շատանայ պարզ ցաւակցութիւն մը յայտնելով Հայոց՝ իրենց կրած դժբաղդութեանց համար, կ'ընդունի որ պէտք է արգելել կոտորածներու վերսկսումը, բայց չէ համոզուած թէ կարելի է հայ ժողովրդին շնորհել ո եւ է մասնաւոր ռեժիմ Տաճկահայաստանի մէջ : Ասի քիչ մը հետեւանքն է այն սխալ մեթոտին որով մեր գործիչներէն ոմանք մինչեւ վերջերս Եւրոպայէն ուրիշ բան չէին խնդրեր բայց եթէ «կեանքի, ինչքի եւ պատուոյ ապահովութիւն» : Այս վերջին մէկ երկու տարիներուն մէջն է որ մէկ քանի Հայ'ը հայ ժողովրդին իրական բաղձանքը բացէ ի բաց յայտա արեցին Եւրոպային : Այս միջադէպը կ'ապացուցանէ թէ Հայոց կողմէ Եւրոպայի մէջ կատարուած փրօփականտը դեռ կարծուածին չափ արդիւնաւոր չէ եղած, եթէ Եւրոպացիներուն մեծագոյն մասը դեռ չեն համոզուած Հայոց իրբեւ ինքնուրոյն ժողովուրդ ապրելու իրաւունք ունենալուն :

Այդ ճամբով ուրիմն անհրաժեշտ պարագ ունինք շարունակել ու ընդարձակել մեր գործունէութիւնը, եւ այդ բանը այն ատենը միայն պիտի կարենանք ընել երբ անհասակաւ ուժերով փորձուած ձեռնարկներու տեղ հզօր ու միջոցներով հարուստ ընկերակցութիւն մը այսպիսի կենսական գործի մը գլուխ անցնի :

Վերջին ու ամենակարեւոր կէտ մը որ կայ այդ դէպքին մէջ ի վեր հանելու, Պ. ար Ռոպերթիի սա ֆրագն է. «Ճշմարիտ է որ հայկական խնդիրը չունի օճրներու. խնդրին այն համեմը զոր կուտայ Գողիաթին դէմ մաքառող Գաւիթի մը տեսարանը : » Այս ֆրագը զիս կարմրեցուց. մեր դատը պաշտպանելու համար բեմ եկողը մեր երեսին կուտար մեր տկարութիւնը. այդ օրուան մէջ մեզի ամենէն աւելի բարեկամ հանդիսացող անձերէն մէկը մեր դատը կը ներկայացնէր իրբեւ ջարդուողներու ողբալի հօտի մը գթութիւն ներշնչող հարցը, եւ ա՛յդ միայն : Մեր գործիչները պէտք է երկարօրէն խորհրդածեն այս բանին վրայ. այն բոլոր քաջութիւնը զոր Հայերը ցոյց տուին անհատական զիւցազնութիւններով կամ փոք-

րութիւ խմբական կարճատեւ զիմարութիւններով, բնաւ հաշուի չեն դրուելը՝ ցաւալի դիւրութեամբ մը կոտորուող անհամար ամբոխներու տիրական համայնապատկերին մէջ : Ուրիմն անհրաժեշտ է, — ինչ որ միշտ յայտարարած եմ, — որ մեր գործիչները, փոխանակ կըրկանելու մասնական ընդհարումները՝ որոնց մէջ ցոյց տրուած քաջութիւնը ընդհանրապէս կ'անհետանայ անոնց հետեւանքով ջարդուած բազմութիւններուն արգահատելի պատկերին մթութեանը մէջ, իրենց բոլոր ջանքը խելքը, միջոցները ի գործ դնեն խուլ ու երկայն պատրաստութեամբ մը կազմակերպելու մեծ ձիգը, առնական, տեւական, իրական ճիգը, որ պիտի սրբէ մեր ճակատէն անարի ժողովրդի անիրաւ բայց տիեզերապէս ընդունուած դատակնիքը, եւ որ պիտի հարկադրէ այն ատեն բոլոր Եւրոպացիները, ինչ զասակարգի եւ ինչ շրջանակի ալ պատկանին, ընդունելու թէ հայ ժողովուրդը կարող է եւ արժանի է ինքզինքը պաշտպանելու եւ ինքզինքը կառավարելու :

Ա. Զ.



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՅԿԵՐՈՒԹԻՆ ՄԷՋ

— 0 —

Խաղաղութեան համաժողովի փակման հասցիերայիցին մէջ, տիկին Սեվոնի կերպով մը մեր վրէժը լուծեց Հայաստանին ուղղելով հետեւեալ ֆրագը իր հոյակապ բաժակաճառին սր բոլոր շղթայուած կամ խողխողած ազգութիւններուն էր նուիրուած.

«Բաժակս կը պարզեմ քեզի, բայց մաշարչա՛ր Հայաստան, հարիւր տնդամ մորթուած ու հարիւր անդամ վերակենդանացած, եւ զոր հիմա եւրոպական վատութիւնը բարբառումներուն ձեռքն է լքեք, դո՛ւն որուն կիները, Սասունի մէջ, մա՛հը անպատուութենէն Նախպեճար համարեցին ու զաւակներնին մերկ ծոցերնուն վրայ սեղմած գաճակէժները նետուեցան... » :

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ՄԱՐԿԱՅԵՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

— 0 —

Չանքերովը ՊՆ. Առաքելեանին որ տեղեկագիր մը մատուցած էր Մարդկայնութեան համաժողովին, այդ համաժողովը հետեւեալ որոշողութիւնը քուէարկեց միաձայն հաւանութեամբ. «Մարդկայնի համաժողովը, նկատելով թէ՛ Ա. Թուրքիոյ հայերը մինչեւ ցարդ կը հալածուին եւ բարբարոս ու անգութ վարմունքներով ենթարկուին, Բ. թէ Հայերը մինչեւ ցարդ կը մորթուին, կը կախուին, կ'աչրուին, կը պարտաւէ եւ կը դատապարտէ այդ բարբարոս ու վայրագ վարմունքները եւ իղձ կը յայտնէ որ ամէն անոնք որ մարդկութեան զիտակցութիւնն ունին, որձգեն այս հախմարդկային ոճիրներուն վերջ դնելու հաւար » :

ՀԱՅԿԱՊԱՆ ԵՆԳԻՐ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

ՄԷՋ

Ընկերվարականներու միջազգային համաժողովին մէջ տիկին Քլարա Զեթքին ներկայացուց հետեւեալ որոշողութիւնը «զինամուտեան վայրագութիւններուն դէմ», որ ընդունուեցաւ միաձայն հաւանութեամբ:

«Բարիկի ընկերվարական միջազգային համաժողովը զայրոյթով կը պարտաւ Ռուսական ցարութեան վայրենի կեղեքումը քաղաքականութիւնը իր իրացի եւ Ֆինլանտացի ժողովուրդներուն նկատմամբ եւ բռնապետական ուժի միջոցով ամէն ազգէ բողոքներն եւ վրայ պարտք կը դնէ համաձայն պայքարի մը մէջ միանալ ռամկավարութեան ու ընկերվարութեան այդ համայնական թշնամիին հանդէպ:

Բ. «Համաժողովը կը դատապարտէ անդլիական կառավարութեան վայրագութիւնները Հարաւային Ափրիկէի Պեթրներուն հանդէպ:

«Գ. Բարիկի միջազգային ընկերվարական մամուլը, անգամ մը եւս հաստատելով եղբայրական համերաշխութեան զգացումները որ բոլոր ժողովուրդները պարանմիացնել իրարու, զայրոյթով կը բողոքէ այն բռնութիւններուն, անգլութիւններուն, ցարերուն դէմ որոնք Հայաստանի մէջ գործուեցան, երկու աշխարհներու տշխաւաւոր դասակարգին ուշադրութիւնը կը հրաւիրէ այն ոճրագործ մեղաւկցութեանը վրայ զոր կարգ մը դրամատիրական կառավարութիւններ ունեցան, կը հրաւիրէ ընկերվարական խորհրդականական կամերակները որ ամէն առիթով միջամտեն ի նպաստ զգուելի կերպով կեղեքուած հոյ ժողովրդին, որուն համաժողովը կ'ուզէ իր սերտ ու բուռն համակրութեան հաւաստիքը.»

Մեզի հաղորդեցին թէ Հայ Յեղ. Դաշնակցութեան պատկանող մէկ քանի գործիչներ են որ Հայաստանին վերաբերեալ այս գեղեցիկ հաստատմը մտցնել տուած են զինամուտեան վայրագութեանց դէմ խմբագրուած որոշողութեան մէջ:

ՀԱՅԿԱՊԱՆ ԵՆԳԻՐ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Պ. Բիէս ֆիլիսոփ ներկայացուց ընկերվարական մամուլի միջազգային համաժողովին հայկական խնդրոյն մասին յիշատակագիր մը, զոր կ'եզրակացնէր առաջարկելով որ Համաժողովը պահանջէ եւրոպական պետութիւններուն կորովի միջամտութիւնը՝ այդ խնդիրը վերջնապէս եւ արմատապէս լուծելու համար: Համաժողովը միպայն հաւանութեամբ ընդունեցաւ Պ. ֆիլիսոփի առաջարկած որոշողութիւնը:

“ PRO ARMENIA ”

Բարիկի մէջ սկսած է հրատարակուել հայկական դատին նուիրուած ֆրանսերէն երկշաբաթաթերթ մը Pro Armenia (Վասն Հայաստանի) տիտղոսով:

Թերթին խմբագրական մասնախումբը կը կազմեն պ. պ. Քլիմանսո, Անաթոլ Ֆրանս, Ժան Ժոնէս, Ֆրանսի տը Բրէսանսէ, է. տը ըրպերթի: Խմբագրապետութիւնը սաանձնած է պ. Բիէս ֆիլիսոփ:

Թերթին քարտուղարն է պ. Ժան Լոնկէ: Անոնք որ բաժանորդ կ'ուզեն գրուել, պէտք է դիմեն հետեւեալ հասցէին. M. Jean Longuet, 17, Rue Cujas, Paris:

Թերթին նախարանը հետեւեալ կերպով կ'ուրուագծէ իր ծրագիրը.

«... Ֆրանսացի եւ օտարազգի մեծանուն հրապարակազիրներու աջակցութեամբ, պիտի երեւան հանենք կատարուած վայրագութիւնները եւ առանց յոգնելու պիտի յիշեցնենք Եւրոպային թէ զաշնագրերու հետեւանքով իրաւունքներուն Մեծ Մարդասպանին դէմ ի գործ դնելու, եւ պարտականութիւններ անոր զոհներուն ի նըպաստ կատարելու:

«Մեր նպատակը չէ այստեղ խաչակրութեան ոգին արթնցնել, ոչ ալ օսմաննան հողին վրայ ապրող ցեղերուն կամ հոն դաւանուող կրօնքներէն միոյն դէմ ատելութիւն գրգռել:

«Բայց եթէ մտադիր ենք հրապարակել բոլոր ոճիրները զոր Սուլթանը կը գործէ այն բոլոր ժողովուրդներուն դէմ որոնք իրենց չար բախտէն անոր հպատակ են դառնուած, աւելի մասնաւոր կերպով պիտի զբաղինք հայկական տառապանքներով, որովհետեւ անոնք անհունապէս աւելի մեծ են քան բոլոր միւսները, որովհետեւ այդ ցեղին համար, որ ամենէն ուշիմ, եւրոպական քաղաքակրթութիւնը իւրացնելու ամենէն ատակ ցեղերէն մէկն է, կեանքի եւ մահուան ամմիջական հարց մը կայ, որովհետեւ, գործնականապէս, Եւրոպան Պերլինի դաշնագրով զինուած է այդ հրէշութեանց վերջ դնելու եւ այդպէսով ամբողջ Տաճկաստանի վերանորոգումը պատրաստելու համար:»

«Pro Armeniaի առաջին թիւը կը պարունակէ յօդուած մը Ֆրանսի տը Բրէսանսէի, որ ուսական հայաջինջ քաղաքականութեան մասին կը խօսի, եւ որ կ'աւարտի սա ֆրաղով՝ «Սուլթանին ու Չարին մէջտեղը միացած, Հայերը ուրիշ բանի վրայ այլ եւս յոյս»

չեն կրնար դնել բայց եթէ իրենք իրենց, իրենց կազմակերպութեան ու անխոնջ ջանքերուն, եւ համակրութիւններուն վրայ ամէն անոնց որ արդարութեան ու Յեղափոխութեան կուսակիցներն են ամբողջ աշխարհի մէջ :»

յօդուած մը, Բլեմանսոյի, որ Սուլթանին վայրագ գիւժարութիւնը ու Եւրոպային վատ մեղսակցութիւնը անցած մը եւս ի վեր կը հանէ կորովի տողերով. յօդուած մը, պ. Ժան Լոնկէի, Յուցահանդէսին մէջ հայկական խնդրոյն բռնած տեղին վրայ. եւ շատ զեղեցիկ յօդուած մը, Բիլզո Քիլառի, որ հայկական խնդրոյն ամիոփում մը ներկայացնելէ յետոյ, սապէս կ'աւարտի .

«Նոր ճղնածամ մը մօտալուս է . մենէ կախուած է ասոր առաջին առնել թերեւս, կամ դոնէ մինչեւ վերջը չորս հորիզոններուն նետած ըլլալ մեր անձկութեան ու աննուաճելի յոյսի աղաղակը . որովհետեւ հայ ցեղը, դարէ դար կոտորուած, կարծես խորհրդաւոր կենսականութեամբ մը օժտուած է : Կարծես թէ իր հին ժամանակազիրները իր տառապանքներն ու իր մեծութիւնը նախապատկերած ըլլան Գրիգոր Լուսաւորչի աւանդավէպին մէջ : Տրդատ թագաւորը զայն պատերուն պագաթը բարձրացնել տուած էր, ձեռքերն ու ոտքերը կապուած, բերանը դանդաճանդ գրուած, եւ կոնակը՝ ալի շառաշեղներով կրծուած, եօթերորդ օրը Գրիգոր դեռ ողջ էր : Այն ատեն, Տրդատ զայն կախել տուաւ մէկ ոտքէն, գլխի վար, հրամայելով որ աղբ այրեն անոր ներքեւ եւ զայն բիրերով ծեծեն . եւ եօթներորդ օրը, Գրիգոր դեռ ողջ էր : Տրդատ անոր սրունքներուն ոսկորները փչրել տուաւ չուաններով սեղմուած փայտէ կոճղի մը մէջ . ու Գրիգոր ողջ էր դեռ : Յետոյ, զայն գետինը պատկեցուցին, արեւուն տակ, երեսը երկնքին դարձուցած, գլուխը հիւսնի մամուլի մը մէջ ճղմուած, եւ աղով, բորակով եւ քացախով բերանը կը լեցնէին, եւ անոր գլուխը հրավառ մոխիրով լեցուն պարկով մը ծածկեցին, եւ անոր փորը պատուեցին երկաթէ տատակներով, հալած կապարով զինքը ոռոզեցին . եւ Գրիգոր միւտ ողջ էր :

«Այսպէս, դարերու ընթացքին մէջ, միշտ չարչարուած, Հայաստանը ողջ մնացած է . պէտք չէ որ բոսի թէ այս դարուս մարդիկը, որ զիրենք քաղաքակիրթ կ'անուանեն, թոյլ պիտի տան որ ան ջնջուի աշխարհիս երեսէն եւ սուլթան Ապտիւլ-Համիտին ու եւրոպական կառավարութեանց մեղսակիցները պիտի ըլլան :»

Այսպիսի անձնաւորութիւններէ խմբագրուած թերթ մը մեր գառը Եւրոպացիներ

րուն ներկայացնող շատ կ'սրբեւորու ազդեցիկ ուժ մը պիտի կազմէ, եւ անոր յաջողութեան ու տալիք օգուտին վրայ տարակոյս կարելի չէ ունենալ :

Այս թերթը, պիտի հրատարակէ, բայց ի յօդուածներէ, ամէն տեսակ լուրեր . ու տեղեկութիւններ Տաճկաստանի մէջ անցած խժոգութեանց մասին : Մեր ընթերցողներէն ու բարեկամներէն ամէն անոնք որ տեղեկութիւններ ունենան, կը խնդրենք որ հաղորդեն Պ. Բիլզո Քիլառին (10. Rue Nollet, Paris) :



ԱՐԶՈՒԵԱՆ ԵՒ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ



Եւրոպական թերթերը ծանուցին Ալեքսան Արզուեանի արձակումը Պոլսոյ բանաէն ուր դրելի է երեք ամիսէ ի վեր փակուած կը մնար : Ամերիկեան՝ եւ ֆրանսական դեսպանատան ջանքերուն վրայ, Դուռը զայն ազատ է թողեր, պայմանով որ իսկոյն տաճկական հողէն դուրս ելլէ :

Անոնք որ Արզուեանը մօտէն կը ճանչնան, անհուն ուրախութիւնով մը պիտի հրճուին իր ազատմանը լուրն իմանալով : Բայց իրենց ուրախութեան չափ մեծ եղած պիտի ըլլայ զըզուանքը զոր պագած են անշուշտ հայ մամուլին մէջ տեսնելով գարշելի զրպարուութիւններ զոր անարգ ձեռքեր սահեցուցին այդ սքանչելի գործիչին դէմ՝ այն միջոցին իսկ ուր բանտին խորը, կեանքը վտանգի մէջ, կը տառապէր ան :

Հիմա վտանգը անցած է, եւ լուծեան պարտքը որ իր բարեկամներուն վրայ կը ծանրանար՝ ցորչափ իր բանաարկութիւնը տեւէր, զոյուլթիւն չունի այլեւս : Կրնամ ուրեմն երկու բառով բացատրել հիմա այն պատճառները որոնք Արզուեանի ձերբակալման լուրը շատ մեծ դժբաղդութեան մը ձեւովը ներկայացուցին զինքը ճանչցող հայերուն ինչպէս եւ իրեն համակրող Եւրոպացիներուն : Այս բանը կ'ընեմ, ոչ թէ սիրուած ու հիացուած բարեկամի մը ներբողեանը հիւսելու համար, (լուծեան մէջ

գործել սիրող, ամէն ոէքլամէ փախչող իր բընա որու թեանը անախորժ պիտի ըլլար ասի, եւ արդէն իրեն պէս լայն ու հեռանկատ մտքով գործիչի մը գէշ ծառայութիւն մը մատուցանել պիտի ըլլար տարածամ ու անպէտ կենսա-գրականներ քանդակելը) . այս բանը կ'ընեմ՝ գլխաւորաբար ցոյց տալու համար թէ ո՞ր աստիճան հրէշային էր վարմունքը զոր ունեցան այն անձերը որ իրենց զրպարտամոլութեան ախտը կրցան յառաջ տանիլ՝ մինչեւ Արդուեան մը անուանարկել փորձելու անամօթութիւնը :

Ալեքսան Արդուեան, նախկին աշակերտ Պոլսոյ կեդրոնական վարժարանին, ըստ վկայութեան իր բոլոր ընկերներուն ինչպէս եւ զինքը ճանչցող պոլսաբնակ եւրոպացիներուն՝ ամենէն անձնուէր, ամենէն քաջասիրտ եւ ամենէն անկեղծ ու անշահախնդիր գործիչներէն մին եւ զաւ Պոլսոյ 95—96ի յեղափոխական շարժումներուն, որոնց մէջ ընդհանուր ծրագրի եւ կազմակերպութեան թերութիւնները մեծ են եղած, բայց ուր, մեր միտքարանքին ու մեր հպարտութեանը համար, Արդուեանի պէս երկաթէ զինուորներու բղիթը տեսանք մեր ժողովրդին ծոցէն : Պապը-Ալիի ցոյցին գլխաւոր զերակատարներէն մէկը եղաւ ինքը, եւ Բերայի եկեղեցիին մէջ Հայերու բողոքարկու համախմբումին պարագլուխներէն մին : Թուրք սասիկանութիւնը շատ լաւ հասկցած էր թէ Արդուեան ի՞նչպիսի վտանգաւոր ուժ մը կը ներկայացնէր : Այդ բոլոր տենդայոյզ օրերու միջոցին ձերբակալուած Հայերուն մէջէն, Արդուեան ամենէն ծանր հարցաքննութիւնը, ամենէն խիստ բանտարկութիւնը ունեցաւ՝ իրեն պէս մէկ քանի գործիչներու հետ . անտարակուսելի կերպով վիճակուած էր մշտնջենական բերդարդելութեան կամ նոյն իսկ մահուան դատապարտուելու, եթէ Փրանսական դեսպանատունը, որ կը ճանչնար եւ կը զընահատէր զինքը, կորովի միջամտութեամբ մը զայն ազատած չըլլար Թուրքերուն ձեռքէն :

Բանտէն հազիւ ելած, Արդուեան վերսկսաւ ընդհատուած գործը, — միշտ պատնէշին վրայ եւ միշտ առաջին կարգը : Իր անունը սարսափի պսակով մը շրջանակուած էր՝ թուրք սատիկանութեան աչքին : Ամենէն դժուարին ամենէն կնճոռտ ու վտանգալից գործերը ինքը կը ստանձնէր : Զէյթունի ապստամբութեան ժամանակ, այն ջանքերուն մէջ զոր Պոլսոյ գործիչներն ի գործ դրին Զէյթունի քաջերուն օգնութիւն հասցնելու համար,

Արդուեանն էր որ կատարեց ամենակարեւոր դերը — թէպէտ, ինչպէս դիտենք, այդ ջանքերն իրենց նպատակին չկրցան ծառայել, նազարպէկի անխղճամտութեանը պատճառով :

Որքան իր հաւատքն ու խանդավառութիւնը մեծ էր եղած նաչարբէկին համար եւ իր կարգապահ հպատակութիւնը բացարձակ՝ այն օրերուն ուր նաչարբէկը կը նկատէր լուրջ ու պարտաճանաչ պետ մը, այնքան բուռն եղաւ անոր ապիկարութեան ու անբարոյականութեան բացայայտ ապացուցումէն իր զգացած զայրոյթը : Պոլսոյ Հնչակեան քոմիթէն զինքը պատուիրակ զրկեց Լոնտոն, նաչարբէկէն եւ իր «կեդրոն»էն հաշիւ պահանջելու . ուրիշ բան չգտաւ հոն բայց եթէ փտութիւն . եւ այդ «կեդրոնը» կործանեցաւ :

Անկից ի վեր, երբեմն անհատապէս, անկախաբար գործելով, երբեմն որոշ գործի մը համար այս կամ այն մարմնոյն կամ խմբակին հետ համաձայնելով, Արդուեան իր բոլոր ուժերը նուիրեց այն գառին որուն իր կեանքը կապած է :

Թէպէտեւ «շատ դէշ նշանակուած» էր Պոլսոյ սատիկանութեան տեսրակին մէջ եւ թէպէտ իրեն խստիւ արգելուած էր ոտք կոխել Պոլիս ուրիշ ծածուկ գուրս ելած էր, երկու անգամ մտաւ հոն զաղտնի, ատոր համար գիմնելով ամենէն վիպասանական միջոցներուն, (որովհետեւ այդ անվախը տարօրինակ ճարպիկ մըն է միանդամայն) : Երկրորդ անգամուն Պոլիս կը մտնէր՝ հոյակապ ծրագրով մը, որ, եթէ իրագործուած ըլլար, Արդուեանի անունը մարդկութեան մեծագոյն բարերարներուն կարգը զասելու արժանի պիտի կացուցանէր : Ծրագիրը չիրագործուած մնաց . . . դրամի պակասին գոհնիկ բայց անողք պատճառով, ու քիչ մըն ալ կուսակցամոլական էնթրիկներու անխուսափելի արգելքովը :

Վերջին երկու տարիները, Արդուեան Բարիկ ապրեցաւ : Այդ միջոցին տեղի ունեցան բանակցութիւնները Սուլթանին ու «հայ յեղափոխական կեդրոնական քոմիթէին», միջեւ բանակցութիւններ որոնց առաջարկը կը բեղաւ Սուլթանէն եւ որոնք միեւնոյն ասին՝ զուգահեռաբար՝ տեղի ունեցան նաեւ «հայ յեղ. Դաշնակցութեան եւ Սուլթանին միջեւ : Այդ բանակցութեանց մէջ Արդուեան ցոյց տուաւ մտաւոր ու բարոյական կորովի, հեռատես ու ճապուկ դիւանագիտութեան առաջնակարգ յատկութիւններ, որոնք սքանչալու մ ներ-

չընչեցին իրեն զործակցող ֆրանսացի ու հայ բարեկամներուն . անոնք որ հիմա ելերեն տխմարօրէն հեգնելու այդ «Հայ յեղ . կեղր . քոմիթէն» եւ անոր բանակցութիւնները, պիտի օր մը գիտնան թէ այդ մարմինը, կազմուած հնչակեան զործիչներու եւ անկախ հայրենասէրներու խմբակէ մը որ իր ճիւղաւորումներն ունէր Պոլիս եւ հայրենիքի մէկ քանի կարեւոր կեդրոններու մէջ, կարծուածէն շատ աւելի լուրջ կերպով կատարեց այդ ձեռնարկը եւ երեւակայուածէն շատ աւելի մեծ ազդեցութիւն զործեց Սուլթանին մտքին վրայ : Սա կրնանք առայժմ յիշել որ Սուլթանը այդ «Յեղափոխական կեդրոնական քոմիթէ»ին ինչ ըլլալուն վրայ գազափար մը ունենալ փափաքելով ցանկացած էր զիսնալ թէ ո՞վ են անոր գլուխը գտնուող անձերը . Արզուեան իր անունը հաղորդեց միայն, եւ ատի բաւեց որպէս զի Սուլթանը անազին կարեւորութիւն տար այդ մարմնոյն եւ մինչեւ իսկ յեղափոխական մարմին մը իբրև ընդունուած ուժ մը նկատելով իրատէ մը հանէր բարենորոգումներ խոստացող . բանակցութեանց միջնորդ եղաւ, ոչ թէ ողորմելի Պիւլպիւլեան մը (ինչպէս կարգ մը ասպետներ հիմա ելեր կը գրեն մէկ քանի թերթերու մէջ) այլ նոյն ինքն Բարիզի օսմանեան դեսպանը, Միւնիւր պէյ, որուն արբանեակներէն մէկն էր պարզապէս Պիւլպիւլեանը, (հայ Յեղ. Դաշնակցութեան եւ Սուլթանին միջեւ միջնորդի դեր կատարողը Տրդատ պէյն էր, եղբօրորդի Տատեան փաշային) :

Այդ բանակցութիւններով Արզուեան եւ իր զործակիցները նպատակ ունէին Սուլթանը մըղել ընդհանուր ներուժով մը բոլոր բանտարկեալներն արձակելու եւ մէկ քանի անհրաժեշտ բարենորոգումներ իրագործելու (գաւառներու մէջ ազատ երթուելի վերսկսում, Միսի կաթողիկոսական խնդրոյն օքինաւոր կարգադրութիւն, եւն) : Այս բոլորը եթէ իրականանային, պիտի նպաստէին որ կոկորդէն խեղդուածի վիճակին մէջ գտնուող ժողովուրդը քիչ մը շունչ առնէր, ինքզինքը զտնէր, եւ ապրելու, զործելու կարելիութիւններ ձեռք ձգէր : Բանակցութիւնները զժողովարար ոչ մէկ արգիւնք չտուին (բաց ի խումբ մը բանտարկեալներու արձակումէն) . եւ ատոր պատճառը գլխաւորաբար եղաւ Տատեան փաշան իր նենգ ու շահամոլ վարմունքովը, որով Դաշնակցութեան եւ կեդրոնական քոմիթէին միջեւ պառակտում

ձգեց, եւ երկուքին անհամաձայնութիւնէն օգուտ քաղեց գործը վիժել տալու համար, մինչդեռ եթէ երկու մարմինները կուռ համաձայնութեամբ մը միասին վարած ըլլային բանակցութիւնները, հաւանական է որ մէկ քանի կարեւոր արդիւնքներ ձեռք ձգած ըլլային : Բանակցութեանց թղթակցութեան գրութէ ամբողջութիւնը հրատարակուեցաւ, ինչէսթ Լավիսի հաւանութեամբ, Բիէս Բիյառի կողմէ խնդարուած յօդուածով մը . Փրանսայի մեծագոյն հանգէսին, «Ռըվիւ տը Ֆրանս»ին մէջ :

Այն բոլոր յարաբերութիւններուն մէջ զոր այդ երկու տարուան միջոցին Արզուեան ունեցաւ ֆրանսացի եւ անգլիացի մէկ քանի մեծանուն հրապարակագիրներու, դիւանագէտներու եւ գրագէտներու հետ, իր անկեղծ, ուժեղ ու վեհանձն նկարագիրը, իր ամբողջ կամաւորապէս ընդունուած զոհողութիւններու եւ վրկումներու կեանքը, եւ իր երիտասարդ արծիւի սուր, խրոխտ ու ազնիւ գէմքը խորին յարգանք ու համակրութիւն ներշնչեցին անոնց . — եւ ատոր է որ գլխաւորապէս կը պարտա իր այս անգամ վտանգէ ազատումը :

Այդ ամենը զինքը չէին գոհացներ : Բարիզի կեանքը, խմբագրատունէ խմբագրատուն թափառումը, Եւրոպացիներու հետ տեսակցութիւնները, դիւանագիտական զործունէութեանը, ատոնք իր բուն միջավայրը, իր ճշմարիտ միջնորդող չէին . այդ բոլորը կ'ընէր համակերպելով վայրկեանին պահանջներուն :

Իր բաղձանքը «վտանգի մէջ ապրելն» էր . իր բաղձանքը կռիւն արբեցութիւնները վերստին ճանչնալն էր, կռիւնն՝ ո եւ է ձեւով : Ու տենդոտ երկայն գիշերներու մէջ, վերջնական, վճռական պայքարին ծրագիրները կը հիւսուէին իրեն ու իր մէկ քանի ընկերներուն միջեւ : Օր մըն ալ, որոշեց մեկնել, թէ ինչ նպատակով մեկնեցաւ Պոլիս, իր գազանիքն է ատոր պէտք է միշտ իր գազանիքը մնայ : Մեկնեցաւ, համաձայնելով վերակազմեալ Հնչակեան ընկերութեան հետ, մասնաւոր ծրագրով մը : Մաս մը կըրցաւ իրականացնել այդ ծրագրէն որ ապագայ յատակապէս մը համար նախապատրաստական գործունէութեան ձեռնարկներու մէջ կը կայանար եւ կազմակերպութեան փորձ մըն էր գլխաւորապէս : Երագիրն ամբողջապէս դեռ ի գլուխ չհասնած, Արզուեան մասնուեցաւ Հայէ մը եւ ձերբակալուեցաւ :

Իր ազատումը, ըստ արդէն, կը պարտինք
 եւրոպական հզօր միջամտութիւններու: Բարի-
 զի մէջ է. Շարժման, Էրնէսթ Լավրս, Վիլթոռ
 Պետառ դիմեցին Պ. Տեղապետին, Քիլիառ (*), Բը-
 րէսանսէ եւ ուրիշներ իրենց շրջանակներուն
 մէջ ջանքեր ըրին. Անգլիոյ մէջ, ձէյմս Պրայս,
 հանրածանօթ հայասէրը, Պոլսոյ անգլիական
 դեսպանին գիմեց. Ամերիկայի մէջ օր. Ալիս
 Մթոն Պլաքուել եւ մէկ քանի նշանաւոր ձե-
 րակուտականներ դիմեցին Նախագահին: Մէկ
 քանի ամուռան այնքան դժուարին որքան կո-
 րովի ու վեհանձն ջանքերէ յետոյ, որոնց
 մղիչներուն մէջ Արզուեանի նշանածին, օր.
 Ռաբէնի գլխադնական անձնուիրութիւնը մեծ
 տեղ մը գրաւեց, ֆրանսական եւ ամերիկեան
 դեսպանատուները յաջողեցան ազատել զանի
 Թուրքերուն ձեռքէն (**):

Անաւասիկ այն անձը, որուն վրայ գտնու-
 եցան Հայեր որ մուր քանչ համարձակեցան:

«Բաժ» ստորագրող պարոն մը Պոլսէն հե-
 տեւեալը կը գրէր Վառնայի «Շարժում»ին.
 «Նիւ-Մահալլէի մէջ ձերբակալուեցաւ Հայ մը
 հոս արդէն ծանօթ Յ. Ա. անուանով, եւ իբր թէ
 Չ. Ք. ի ընկեր, «չարխալը» Հայ մը ամերիկեան
 անցագրով: Չայն ձերբակալող «խըպըլը»
 աստիկանները շքանշան, ստակ եւ սըր-քոմիսէ-
 րութիւն ստացան: ... Մինչև օրս խեղճ եւ
 բխտասարգը Թուրքերու ճանկն է եւ կ'ըսուի
 թէ տանջանքի մէջ է ... կը զրուցուի նաեւ
 որ պարոնը յայտներ է թէ կը ճանչնայ Պիւլ-
 պիւլեան լրտեսը, սափակամիտ Տիգրան Ար-
 փիարը եւ այլ առ կարգի թրքասէրներ, որոնք
 իսկոյն բանան են հրամցուեր ...»

(*) Քիլիառ մէկ քանի յօդուածներ հրատա-
 րակեց «Սոռու»ին մէջ Արզուեանի մասին. ա-
 նոնցմէ մէկէն կը թարգմանենք հետեւեալ մէկ
 քանի տողերը. «այս օրերս ձերբակալուած ան-
 ձերուն մէջ կը գտնուի Արեքսան Արզուեան ...
 այն բաղմամբիւ ֆրանսացի եւ օտար քաղաքա-
 կան անձնաւորութիւնները, որոնք պատիւ ու-
 րեցած են զինքը ճանչնալու, մեծ յարգանք ու-
 նէին իր անխոնջ անձնուիրութեանը, ուղղա-
 մըտութեանը, քաջասրտութեանը համար.
 սուլթանը կ'ուզէ որ ան հիմա իր կեանքովը
 հատուցանէ այն ոճիրը զոր գործեց Եւրոպայի
 մէջ իր ճանչցած անձերուն ուշադրութիւնը
 իր եղբայրներուն վրեժակին վրայ հրաւիրելով:
 Թերեւս պիտի չհամարձակի պարզապէս սպան-
 նել տալ զանի. բայց անօթութիւնը, ցուրտը,
 տանջանքները ստոր տեղը շիտի բռնեն:

«Պոլսոյ ամերիկեան դեսպանը հարկաւոր
 դիմումներն ըրեր է որպէս զի Արզուեան ար-
 ձակուի. արդարեւ, Բարիզի դեսպանատունէն

«Չեւո» ստորագրող անհատ մը, դարձեալ
 Պոլսէն, կը գրէ Ամերիկայի «Հայրենիք»ին.
 «Մարսիլիայէն ֆրանսացի տիկին մը կու գայ
 Պոլիս հայ սպասաւորի մը հետ եւ կը բնակի
 Բերայի պանդոկներէն մէկը: Քիչ ևտք ուրիշ
 մըն ալ կը միանայ յիշեալ տիկնոջ, տոբթոռ
 Քոխնէր անուանով: Վերջինս Հայ մըն էր, իր
 բուն անունը Աղեքսանդր Արզուեան, եւ ամե-
 րիկեան անցապիւր մը ունի եղբր իր գրպանը:
 Հայ մատնիչի մը կողմէ կը մատնուի եւ կը
 ձերբակալուի: Խուզարկութեան միջոցին շատ
 մը յեղափոխական թղթեր կը գտնուին, որով
 կը հասկցուի թէ Աղեքսանդր յեղափոխական
 ընկերութեան մը ներկայացուցիչն եղած է եւ
 թէ դէնք կը բաժնէ Հայերուն՝ նոր ցոյց մը
 ընկուտ համար: Աղեքսանդր կը հարցաքննուի
 եւ քաջասիրտ (?) յեղափոխականը ամէն բան
 բացարձակապէս կ'ըսէ, այսինքն թէ ինքը յե-
 ղափոխական մըն է եւ յատկապէս զրկուած է
 ցոյց մը կազմակերպելու համար, եւն:

«Ասի անհաւատալի պիտի թուի շատե-
 րուն, սակայն թող վտահ ըլլան թէ դէպքը
 իսկական է. յեղափոխականը «Վահէ» կեղծա-
 նունը կը կրէ, որ ամբողջ Պոլիսը զիտէ
 հիմա մատնիչին չնորհիւ. մատնուող, Պոլիս
 Գաթը-գիւղ բնակող փաստաբան Գէորդ Պիւլ-
 պիւլեանն է որ համոզեց յիշեալը եւ Պոլիս
 բերել տալով Թուրքին մատնեց:

«... Արզուեան, վտահ իր ամերիկեան ան-
 ցագրին՝ խաբուեցաւ դաւաճան Պիւլպիւլեա-
 նէն եւ Պոլիս մտաւ ու ետքը եղածը չեւածը
 բերնէն դուրս տալով պատճառ եղաւ 300
 դժբաղդ Հայերու աքսորման:»

ամերիկեան անցապիւր մը ստացած էր: Միւ-
 ցեալ նահանգները անշուշտ պիտի չուշանան
 այդ առաջին քաղաքավար բանակցութիւննե-
 րուն պահանջողական կամ բռնադատական մի-
 ջոցներ յաջողեցնել, եւն:»

(**) «Սոռու»ի 1138 թուոյն մէջ, Բիէս Քիլիառ
 հետեւեալ տողերով կը ծանուցանէ Արզուեանի
 արձակումը, զոր կը վերագրէ միմիայն ամերի-
 կեան միջամտութեան, մինչդեռ ամենաստոյգ
 աղբիւրէ պիտենք թէ ֆրանսական դեսպանա-
 տան մէկ քանի պաշտօնեաները ամենակարե-
 ւոր բաժին մը ունեցած են այդ դիւանագի-
 տական յաջողութեան մէջ:

«Պոլսոյ ամերիկեան դեսպանատան փոխա-
 նորդին անձնական կորովի միջամտութեանը
 չնորհիւ, Աղեքսան Արզուեան, որ բոլորովին
 կամայական կերպով ձերբակալուած էր, արձակ
 թողուեր եւ Թիւրքիայէն արտաքսուեր է:
 Այստեղ յայտնեցինք թէ ինչպիսի անձկու-
 թիւն կը պատճառէր մեզի բանտի մէջ փա-

(Թերթին խմբագրութիւնը հետեւեալ ծա-
նօթութիւնը կ'աւելցնէ Պիւլպիւլեանի մասին .
«այդ գաւաճանին միջնորդութեամբը Արփիար
Արփիարեան յարաբերութեան մտաւ Բարիզի
օսմանեան դեսպան Միւնիւր պէյին հետ , ինք-
զինքն ու իր Բարիզի արքանեակներն ներկա-
յացնելով «Հայ յեղ կեդր. քոմիթէ :»)

«Բաժ»ի եւ «Չելօ»ի գրածները բառ առ բառ
սուտ են . սուտ է թէ Արզուեան «եղածը չե-
զածը բերնէն դուրս տուած է» : Զաւեչտական
լիտուութիւն մըն է «Թուրքերան» ներկայացնել
Արզուեանը , որ գաղտնապահութիւնն է մարմ-
նաւորեալ . իր բերնէն ոչինչ կորզել չկարե-
նալուն համար է որ թուրք ոստիկանութիւնը
զինքը երեք ամիս գալարից այն բարոյական
ու ֆիզիքական ամենավայրագ տանջանքնե-
րովը , որոնց կ'ակնարկէ Քիյառ իր յօդուա-
ծին մէջ : Սուտ է թէ Արզուեան յայտարարած
ըլլայ որ Պիւլպիւլեան լրտեսը եւ տափա-
կամիտ Տիգրան Արփիարեանը իր բարեկամ-
ներն են եւ թէ այդ կարգի թրքասէրներ կը
ձանջնայ . այդ բոլորը հնարուած են Արզու-
եանը թրքասէր , պահպանողական եւ լրտեսի
մը բարեկամը (!!!) ներկայացնելու հա-
մար : Արզուեան յայտարարած է թուրք ոս-
տիկանութեան թէ յեղափոխական ո եւ է
քոմիթէի հետ կապ չունի , թէ իբրեւ ան-
կախ անհատ մը Պոլիս եկած է՝ անձնական
գործերու համար , բայց միանգամայն թրքա-
կան արդի ուժերին պակասութիւնները մաս-
նանիչ ըրած է եւ բարենորոգումներու անհը-
րածեշտ պէտքը ցոյց տուած է . Պոլսոյ դես-
պանատունները զայս գիտին . բանաէն ամե-
րիկեան դեսպանին զրած իր մէկ նամակը ,

կուած ըլլալը , պահպաններէն նախատուիլն ու
կողոպտուիլը , առանց հազուստի ու սնունդի
մնալը , ֆիզիքապէս եւ բարոյապէս չարչարուի-
լը այդ հիանալի երիտասարդին , որ 1895ին ,
դեռ պատանի , Պոլսոյ հայկական շարժման գըլ-
խաւոր պետերէն մէկը եղած էր : Բերայի եկե-
ղեցիին մէջ հաւաքուած Հայերը ինքն էր որ
մէկ քանի օր մղեց գիմազրելու : Երբ անոնք ,
դեսպանատուններէն խարուած , անձնատուր ե-
զան , Արզուեան ձերբակալուեցաւ եւ մահուան
դատապարտուեցաւ այն ատենուան ֆրանսա-
կան դեսպանը , Պ. Բոլ ֆամպան զինքը զատեց :

« . . Անկից ի վեր , Արզուեան Եւրոպայի մէջ
շարունակած էր հայկական դատին համար իր
փրփականտի դործը : Վերջերս Պոլիս էր գար-
ձած , խաղաղական պաշտօնով մը , իր նշանա-
ծին՝ Ֆրանսուէի օր . Ռարէնին հետ , որ այս
ամբողջ դէպքին մէջ շատ վեհանձն կորով մը
ցոյց տուաւ »

սքանչելի զայրոյթով մը համակ հրաշունչ , եւ
որ թերեւս հրատարակուի քիչ օրէն ֆրանսա-
կան թերթի մը մէջ , կը բաւէ ցուցնելու թէ
ինչ լեզու գործածած է Արզուեան ոստիկանու-
թեան նախարարին հետ խօսած ատենը : «Քա-
ջասիրտ» ածականին հեզնական հարցանշա-
նով մը Արզուեանին յատկացուիլը , մեր մա-
մուլին մէջ երեւցած ամենէն պժգալի եւ մի-
անգամայն ամենէն ծիծաղաշարժ ցածութիւն-
ներէն մէկն է , որովհետեւ չեմ գիտեր թէ ո՞վ
է քաջասիրտ եթէ Արզուեանը չէ : Սուտ է թէ
Արզուեանի տունէն յեղափոխական թղթեր
գտնուած ըլլան , որոնցմէ հասկցուած ըլլայ թէ
Պոլիս մտած էր Հայերուն գէնք բաժնելու հա-
մար . սուտ է նմանապէս թէ Արզուեան թուրք
ոստիկանութեան յայտարարած ըլլայ որ յե-
ղափոխական ընկերութեան մը կողմէ Պոլիս
զրկուած էր ցոյց մը կազմակերպելու համար :
Պոլսոյ մէջ ցոյց մը կազմակերպելու ո եւ է
մտադրութիւն չունէր Արզուեան , եւ այդպիսի
բան մը երբեք չէ ըսած ոստիկանութեան :
Այդ բոլորը «Չելօ» հնարած է որպէսզի Արզու-
եանը ներկայացնէ իբրեւ Պոլսոյ Հայոց խա-
ղաղութիւնը վրդովելու համար դացող խոռ-
վարար մը եւ զայն ցոյց տայ իբրեւ միակ
շարժառիթը վերջին բոլոր ձերբակալութիւն-
ներուն (մինչդեռ միւսներն ժամանակ ձերբա-
կալուած է նաեւ նոյն «Չելօ»ին յօդուածին նա-
ելով , սուսահայ մը , որու մասին , միշտ «Չելօ»ի
տուած անդեկութեանց համեմատ , թուրք ոս-
տիկանութիւնը կասկած ունի եզեր թէ ու-
ժանակ կը մտցնէ Պոլիս) : Սուտ է թէ Արզու-
եան Պոլիս գացած է Պիւլպիւլեանի հրաւերին
հետեւելով : Արզուեան արդէն քանի մը ամիս է
ի վեր Պոլիս էր , եւ այդչափ ատեն մնաց հոն
ու գործեց՝ առանց ոչ մէկու ն վնաս հասցնե-
լու , եւ առանց որ ոչ մէկը գիտնար իր հոն
գտնուիլը . եթէ Պիւլպիւլեան զինքը կանչած
ըլլար , պէտք էր որ հոն հասնելուն պէս ձեր-
բակալուէր . զինքը մասնողը եղած է Գառ-
նիկ անուն հայ մը , նախկին պաշտօնեայ Պոլսոյ
թղթատարատան , որ , գողութեան յանցանքով
վճարուած , այս մատնութեան դործը կատա-
րեց նորէն պաշտօն մը գտնելու կամ դրամա-
կան նուէր մը ստանալու համար : Սուտ է վեր-
ջապէս թէ «հայ յեղ կեդր. քոմիթէն» Արփիարի
մէկ խաղը եղած ըլլայ . Արփիարեան ո եւ է
մասնակցութիւն չէ ունեցած այդ բանակցու-
թեանց մէջ , անոնց մասին անդեկութիւն ու-
նեցաւ միայն այն ատեն երբ «Ռըլիւ տը Բա-

ոք»ի յօդուածը կարդաց, եւ «Նոր Կեանք»ի մէջ հրատարակեց այդ յօդուածին թարգմանութիւնը՝ այդ բանակցութիւնները շատ ուղղամտաբար վերագրելով ոչ թէ Վեր . հնչ . կուսակցութեան , այլ ուրիշ մարմնոյ մը : «հայ յեղ . կեդր . քոմիթէ»ին :

Եւ այս սուտերու շարքը անով մանաւանդ պօզալի է որ Ղանոնք հրատարակ նետողը գիտէ որ սուտ են իր ըսածները : Ես գիտեմ թէ ո՛վ է «Բաժ»ը (եւ կը կարծեմ թէ «Չեղօ»ն ալ միեւնոյն անձն է) . այդ պարոնը շատոնց ու մօտէն կը ճանչնայ Արղուեանը , շատ անգամներ անոր ընկերներուն առջեւ անպայման յարգանքով խօսած է անոր մասին , գիտէ թէ ո՛վ է եւ ի՞նչ է Արղուեանը . բայց այս բոլոր մտտութիւնները հրատարակ նետած է , անուանարկելու համար կնճճոտ , վտանգաւոր կացութեան մէջ գտնուող ու զինքը զրպարտութիւններու դէմ անձնապէս պաշտպանելու անկարող գործիչ մը , եւ այդ ճամբով այդ գործիչին ետեւ գտնուող կուսակցութեան երեսին ազտի նոր խաւ մըն ալ արձակելու համար :

Անուն չկայ . բառ չկայ որ կարող ըլլայ այս ընթացքը որակել :

Ու որակում մը փնտռելով չէ որ ատեն պիտի կորսնցնեմ : «Բաժ»ի մը հողին ինքնին զիսչատ քիչ կը հետաքրքրէ : Այս բոլորը կը պարեմ միմիայն ուշադրութիւն հրաւիրելու համար հայ յեղ . Դաշնակցութեան վարիչ մարմնոյն , այն խել մը զձեռք ու տխմար զրպարտիչներուն վրայ որոնք իր հովանիին ներքեւ այս անարգ սիստեմը ի գործ կը դնեն , կարծելով այդպէսով ծառայութիւն մատուցանել իրենց կուսակցութեան շահերուն . այդ տիպարներն են որ զլխաւոր պատճառը կազմած են այն ողբալի անհամաձայնութիւններուն , կռիւններուն , ատելութիւններուն որ այդ կուսակցութեան եւ ուրիշ կուսակցութեանց կամ անձերու միջեւ խրամատ են բացած , եւ մեր խեղճ ազգը այսօր բերած նետած են այն պատռուած , պառակտուած , փսոթ փսոթ եղած , իրար բզքտող հատուածներու բաժնուած ցաւալի վիճակին : Մըրազիրներու անաչառ քննադատութիւն , այսինչ կամ այնինչ ուղղութեան դէմ ուղղամիտ ու անկեղծ պայքար մը , երբեք վնաս չի բերեր ժողովրդի մը բարոյականին , որքան ալ սուր ու մոլեգին ըլլայ պայքարը . վնասակարը , զղուելին , ամէն տեսակէտով աններելին , առանց ո եւ է փաստի , առանց համոզումի , անձնամոլական կամ կուսակցամոլական նեղ ու

ստորին նկատումներով՝ հանրային գործիչի մը կամ գործիչներու խմբակի մը պատիւը մոտեցու սխառն է , եւ անկարելի է զիտել չտալ որ այդ սխառնը Դաշնակցական դրօշակին տակ սլքտացող կարգ մը պարոններ են որ ամենէն աւելի գործադրած են (*) , եւ ատոր արդիւնքը այն է որ այսօր Հայերը զիրենք թուրքէն աւելի հայերու դէմ պաշտպանելու հարկին մէջ կը տեսնեն յաճախ Այդպիսի տիպարներ են որ , օրինակի համար , հրնարեցին այնքան մեկտորամական պատուութիւններ Արփիարեանի դէմ , որպէսզի Արփիարեանը բարոյապէս սպաննելով՝ մահացու հարուածը տան այն կուսակցութեան որուն պարագլուխներէն մէկը եղած է ան . եւ սակայն , ինչ ալ ըսեն , ամէն անոնք որ Արփիարեանը կը ճանչնան , զիտեն որ ան իբր յեղափոխական գործիչ ունի անշուշտ թերութիւններ զոր ոչ ոք կ'ուրանայ , բայց շատ հետու է ո եւ է կերպով նմանելէ այն տեսակ մը մեֆիսթոֆելական պատկերին որով կը ձգտին զինքը ներկայացնել : Դաշնակցութեան վարիչ մարմինը այդ զրպարտիչներուն համար միշտ ցոյց տուած է մեծ զիւրահաւանութիւն մը , ներողամտութիւն մը , գորով մը . ինչ որ , ատոնց ուղղութիւնը քաջալերելով , վնասակար է եղած ազգային բարոյականին . եւ որ մեծապէս վնասակար սահմանուած է ըլլալ նոյն ինքն Դաշնակցութեան շահերուն , որովհետեւ Դաշնակցութիւնը անշուշտ չի փախաքիւր որ զինքը համարին տեսակ մը խոշոր սենտիքա զրպարտիչներու ընկերակցութեան մը : «Արփիարեան խնդիր» մը ազդին մէջ նե-

(*) Ատենէ մը ի վեր Դաշնակցութեան արբանակ թերթերը ամէն օր բողոքի ազդակներ կ'արձակեն «Մարտ»ի մէկ յօդուածին դէմ ուր Արփիարեան , Սաստուրի ջարդին առթիւ , Դաշնակցական գործիչները կը ներկայացնէր իբրեւ «զաւաղիբներ , իբրեւ Ռուսիոյ զիւրակից գործիքները» , եւ այս զարհուրելի ամբաստանութիւնը մէջտեղ կը նետէր , պարզ ենթադրութեան մը վրայ հիմնուելով , առանց ո եւ է զբական փաստ երեսն բերելու . այդ ձեւով եղած ամբաստանութեան մը դէմ ամէն բողոք արդար կը գտնեմ : Բայց ինչո՞ւ Դաշնակցականները , որ կը բողոքեն այդ յօդուածին դէմ , չեն նկատեր որ այդ սխառնը գործածելով , Արփիարեան ուրիշ բան չէ ըրած բայց եթէ Դաշնակցականներուն իրեն եւ ընդհանրապէս ամբողջ հնչակեան կուսակցութեան դէմ գործածած զէնքերը իրենց դէմ դարձրեն :

տելու նախաձեռնութիւնն ունենալով, եւ ատով, ցուցնելով մեր ժողովրդին թէ հայոց ամենէն ժողովրդական դրագէտներէն մէկը Հրնայ անխիղճ ու դիտակից դաւաճան մը ըլլալ, Դաշնակցութիւնը շատ աւելի մեծ բարոյական վնաս հասուց մեր ազգին քան Արփիարեան անհատապէս վնաս բերած պիտի ըլլար՝ եթէ իրօք գործած ըլլար այն ոճիրները զոր իրեն կը վերագրեն։ Դաշնակցութիւնը կրնայ, եւ պարտի, ամենէն անաչառ խստութեամբ վարուիլ իր այդ կարգ մը ազգին աղետաբեր եւ իրեն անպատուարեր անդամներուն դէմ, որովհետեւ անոնք են բուն դաւաճանները :


Դաշնակցութիւնը պարտի իր բոլոր ազգեցուցութիւնն ի գործ գնել որ իր թերթերը, «Հայրենիք», «Շարժում», եւն, չհամարձակին այլեւս շարունակել այդ եղեռնական սխտամը որ երբեք չի կրնար իրապէս պաշտիլ այնպիսի անձերու որոնց պարկեշտութիւնը պէտք չունի ապացուցուելու, բայց որ կրնայ՝ եթէ Դաշնակցութիւնը լուս ու անտարբեր մնայ իր վարկին վնասել :

Դաշնակցութիւնը քանիցս յայտարարեց վերջերս թէ փափաքող է որ միութիւն գոյանայ հայ յեղափոխական բոլոր առողջ ու կենսունակ հատուածներուն, բոլոր հայրենասէր անկեղծ ու զօրեղ գործիչներուն միջեւ. արդ, ինչպէս կարելի է յուսալ որ այդ ցանկալի միութիւնը իրագործուի, երբ «Իրօչակ»ին արքանեակ համարուող թերթ մը ինչպէս «Հայրենիք»ը եւ Դաշնակցութեան ողբովը լեցուած լը-

րագիր մը ինչպէս «Շարժում»ը այսօրինակ հրէշութիւններ կը հրատարակեն Արզուեանի պէս գործիչի մը մասին : Դաշնակցութիւնը բազմատարր եւ կենսալից մարմին մըն է, որուն գործունէութեան թաքթիքին դէմ քննադատութիւններ ուղղած եմ յաճախ (ինչպէս եւ ուրիշ յեղափոխական մարմիններու), բայց ուրուն ձեռններեցութեան, կորովի ու կարգապահութեան յատկութիւնները միշտ խոստովանած եմ : Որպէսզի Դաշնակցութեան դէմ ուղղուած քննադատութեան պատճառները բոլորովին ջնջուին, եւ որպէս զի գոյանայ ընդհանուր միութիւն մը որ ամբողջ ազգին բաղձանքն է, անհրաժեշտ է որ Դաշնակցութիւնը, ոչ միայն իր ծրագիրն ու թաքթիքը բարեփոխէ, այլ նաեւ ու ամէն բանէ առաջ դիտնայ ջախջտխել իր քղանցքներուն տակ պահուրտած իժերը որոնք գլխաւոր պատճառը կը կաղմեն ազգային ուժերուն պառակտումին : այն ատեն, երբ բամբասող պառակ հոգիներն ու հայրենասէրի գիմակով սրիկաները հեռացուին, իրար յարդել դիտող ու միեւնոյն գործին անկեղծ ու անշահախնդիր սիրովը վառուած գործիչներու միջեւ ամենայն դիւրութեամբ կրնայ գոյանալ փափաքուած համերաշխութիւնը՝ գծելու համար այն միակ ու անհրաժեշտ ծրագիրը որուն գործադրութեանը պէտք է լծուի բոլորնապակ հայ ազգը :

Ա. Զ.





ԳՊԻՏՈՆ ԼՈՒՍԻՆՆԱՆ

ՆՈՐ ԲԱՌԳԻՐԳ

Պ Ա Յ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Գ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

ZUSOR UN-ՍՋԻՆ

A - H

ԲՄՐԻՉ

Գիմել հեղինակին, 108 Avenue de Neuilly, Neuilly sur Seine, կամ Բիզանդեան գրատուն, Սեզրոս խան, թիւ 5, Ղալաթիա, Կ. Պոլիս: Գին 25 ֆր.: Սմբողջ դործը, որ պիտի բաղկանայ ընդամենը երկու հատորէ, պիտի արժէ 50 ֆր.:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՋ ՄԸ

Գ Ր Ե Յ

Ր Ո Պ Ը Ր Թ Ճ . Ի Ն Կ Ր Ս Ո Ղ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Յ

ԵՐՈՒԱՆԴ Ա . ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

Թարգմանիչը կը խնդրէ մենէ ծանուցանել թէ սոյն գիրքը ձրիաբար կը շրջանառու ըլլայ գրադարաններուն, եթէ զիմեն իրեն հետեւալ հասցէով .

Ed. Iknadiossian

86, Essex st.

BOSTON, MASS. U. S. A.

ՐԱՅԵՑԻ

«ԴԱԻԹ ԲԷԿ» Ա. Բ. Գ. հատոր վերջաբանով, եւ «ԿԱՅՄԵՐ» լիակատար:

Իւրաքանչիւրի բաժանորդագիրն է 5 շիլլին: Լոյս կը տեսնեն ներկայ 1900 թ. ընթացքում եւ կ'ուղարկուին բաժանորդներին որպէս «Մամուլէլը» եղաւ: Բաֆֆիի միւս երկերը ունենալու համար ցանկացողները պիտի զիմեն մեզ: Կարելի է ստանալ Խրիմեան Հայրիկի, Մերենցի եւն գօքեր:

Ամեն տեսակի զիմում կամ պատուէր պիտի ուղղել հետեւեալ հասցէին՝

M^{ME} RAFFI

47, UXBRIDGE ROAD

SHEPHERD'S BUSH

LONDON W.

ՆՇԱՆ Ս. ԹՈՐՈՍԵԱՆ

«Անահիտ»ի գործակաջ Րուսնու՛ի մեջ

«Թէմպո-փոսթեր»ու զնոււմ, վաճառում եւ փոխանակութիւն՝ հաւաքածոներու համար: Մասնաւորապէս՝ պուլկարական նամակագրոջմներ, մեծաքանակ: սովորական կամ հազուագիւտ Տեղեկութիւն ուղղոյները. պատասխան ընդունելու համար նամակագրոջմ մը ներփակելու են իրենց նամակներուն մէջ:

Հասցէ՝ Nichan S. Torossian, Roustchouk, Bulgarie

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիտը պիտի հրատարակուի ամիսը մէկ անգամ. իւրաքանչիւր թիւը պիտի բաղկանայ 32 էջէ. եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա), 20 սէնգ (Ամերիկա), 1 ֆր. 25 (օտար երկիրներ) :

Բաժանորդաւորներէ տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ), 2 տուար (Ամերիկա). Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տուար (Ամերիկա) :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօգուած եւ բաժանորդագին զրկել

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

ՎԱՌՆԱ

ՌՈՒՍՃՈՒԲ

ՊՈՒՔՐԷՇ

ԴԱԻՐԷԺ

ՆԻՒ-ԵՈՐԲ .

ԲՐՈՎԻՏԷՆՍ (Ամերիկա)

ԻՍԹ-ՈՒՕԹԸՐԹԱՈՒՆ. (Մաս . , Ամերիկա)

ՈՒՍԹԸՐ . (Մաս . , Ամերիկա)

Պարոն Տր. Յ. Ս. Փափաղեան

» Նշան Ս. Թորոսեան

» Արիս Լազար

» Տր Կ . Փաշաեան

» Պ. Կատարեան

» Նազարէթ Թաթէոսեան

» Մանուկ Կալստեան

» Երուանդ Յակոբեան